



# Ձեռք մեր հանապազորդ

ՀՈՒՆՎԱՐ | ՓԵՏՐՎԱՐ | ՄԱՐՏ 2023

**ԼԴ. ՏԱՐԻ**

**Ա. ԵՌԱՄՍԵԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքուկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության

Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլեկտրոնային՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am).

Կայքէջ [www.amaa.am](http://www.amaa.am)

Միշտ Տիրոջով ուրախ եղեք, դարձյալ ասում եմ՝ ուրախ եղեք: (Փիլ. 4.4)

## ԸՆՏՐԻՐ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

**Ք**եյվինը հուսահատ քայլում էր մարզերի միջով: Նրա ձեռքերը դողում էին՝ ցույց տալով Պարկինսոնի հիվանդության առաջին նշանները: Որոշ ժամանակ անց նրա կյանքի որակը փոխվելու էր: Ինչպե՞ս դա կանդրադառնար իր կնոջ ու երեխաների վրա: Հանկարծ Քեյվինի մռայլ մտքերը ցրվեցին, երբ տեսավ մի մարդու, որը հրում էր անվասայլակի մեջ նստած որդուն: Երեխան անզուսպ քրքջում էր, հայրը՝ ժպտում: Ակնհայտորեն այդ մարդու վիճակն ավելի վատ էր, բայց նա ու իր որդին ուրախություն էին գտնում այնտեղ, որտեղ կարողանում էին:

Բանտում ու տնային կալանքի ժամանակ, սպասելով իր դատավարությունից ընթացքին, Պողոս առաքյալը կարծես ուրախանալու առիթ չունենր (Փիլ.1.12-13): Կայսրը Ներոնն էր՝ դաժան ու չար մի բռնակալ, ուստի Պողոսը մտահոգվելու պատճառ ուներ: Նա գիտեր նաև, որ կային քարոզիչներ, որոնք օգտվում էին իր բացակայությունից և իրենց համար փառք ու համբավ էին ձեռք բերում՝ կարծելով, թե կկարողանան «խնդիրներ հարուցել» առաքյալի համար նրա բանտարկության ժամանակ (Հմ.17):

Բայց Պողոսը նախընտրեց ուրախանալ (Հմ.18-21): Նա փիլիպպեցիներին ասաց, որ հետևեն իր օրինակին. «Միշտ Տիրոջով ուրախ եղեք, դարձյալ ասում եմ՝ ուրախ եղեք» (4.4): Մեր վիճակը կարող է մռայլ թվալ, սակայն Հիսուսը հիմա մեզ հետ է և երաշխավորել է մեր փառավոր ապագան: Նոր տարին սկսելով՝ մենք էլ ուրախանանք:

**Աղոթք** - Հայր, բարձրացրու՝ հայացքս բոլոր վիճակներից:  
Ուրախության համար միայն Քե՛զ եմ նայում: Ամեն:

**Մեր ցավերը, ցառադանքներն ու անարդարությունները ստիղում են մեզ թուլանալ, ընկղմվել վճշի մեջ: Բայց Հիսուսի ծննդությունը ուրախություն է բերում մեզ:**

Ով Բեթլեհեմն Եփրաթա, փոքր ես Հուդայի տոհմերի մեջ, սակայն քեզանից պիտի դուրս գա ինձ համար նա, որ իշխանավոր պիտի լինի Իսրայելին: (Միք. 5.2)

## ՓՈՔՐ ՍԿԻԶԲ

**1** 883 թվականից՝ կառուցումն ավարտելուց ի վեր Բրուկլինի կամուրջը համարվում է «աշխարհի ութերորդ հրաշալիքը»: Այդ կամրջի ամբողջականության համար շատ կարևոր են մեկ աշտարակից մյուսը ձգվող բարակ մետաղալարերը: Առաջին լարին ավելացել են այնքան լարեր, որ այն դարձել է պողպատյա հաստ պարան, որն էլ իր հերթին հյուսվել է երեք այլ պարանների հետ: Այդ պարաններից յուրաքանչյուրը ավելի քան հինգ հազար գավառանցաված մետաղալարերից է բաղկացած, որոնք էլ ապահովել են այդ ժամանակների ամենաերկար կախովի կամրջի անվտանգությունը: Մի փոքրիկ դետալը՝ լարը, դարձել է Բրուկլինի կամրջի հիմնարար մասը: Հիսուսի կյանքն էլ սկսվեց փոքր ձևով. ծնվեց որպես մանուկ ու դրվեց մի փոքր քաղաքի ախոռի մսուրի մեջ (Ղուկ. 2. 7): Միքիա մարգարեն դա անվանել է Նրա խոնարհ ծնունդը՝ գրելով. «Ո՛վ Բեթլեհեմ Եփրաթա, փոքր ես Հուդայի տոհմերի մեջ, սակայն քեզանից պիտի դուրս գա ինձ համար նա, որ իշխանավոր պիտի լինի Իսրայելին» (Միք. 5.2, տե՛ս նաև Մատթ. 2.6): Փոքր սկիզբ, բայց այս կառավարչի ու հովվի հռչակն ու համբավը պիտի հասնեին «մինչև երկրի ծայրերը» (Միք. 5.4): Հիսուսը ծնվեց մի փոքր վայրում, խոնարհության մեջ, բայց իր կյանքը երկրի վրա ավարտեց «Իր անձը խոնարհեցնելով» և մեռավ հանցագործի մահով՝ «խաչի վրա» (Փիլ.2.8): Սակայն իր մեծ զոհաբերության մեջ նա կամրջեց մեր և Աստծո միջև եղած անջրպետը՝ փրկություն ապահովելով բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Իրեն: Թող որ Հիսուսի շնորհիվ մենք ստանանք Աստծո մեծ պարգևը: Ու եթե իսկապես հավատում ենք, թող որ խոնարհության մեջ Իրեն գովաբանենք այն ամենի համար, ինչ նա արել է հանուն մեզ:

**Աղոթք** - Հիսուս, շնորհակալ եմ Քեզ, որ Քո զոհողությամբ խոնարհաբար եկար ինձ փրկելու: Ամեն:

**Ասված մեծ ու փոքր բաներ է անում մեր սրտում: Ուսի խոնարհաբար դասասխանեմք Նրան:**

Որովհետև ես ապավինում եմ քեզ, Տե՛ր, դու պիտի պատասխան տաս, ո՛վ Տեր իմ Աստված: (Մաղմ. 38.15)

## **ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ**

**Կ**ենդանինների փրկությամբ զբաղվող ավստրալական կազմակերպության կամավորները գտել էին մի ոչխար՝ ավելի քան 35 կգ կեղտոտ ու խճճված բրդով: Փրկարարները ենթադրում էին, որ կենդանին հավանաբար հինգ տարի կորած ու մոռացված է եղել: Նրանք խուզեցին ոչխարին: Ազատվելով ծանրությունից՝ ոչխարը կերավ, ոտքերն ուժեղացան: Ու իր փրկարարների և մյուս կենդանիների հետ անցկացրած ժամանակը նրան դարձրեց ինքնավստահ ու առույգ:

Սաղմոսերգու Դավիթը զգացել էր ծանր բեռան տակ ընկճվելու, մոռացված, մոլորված և փրկության կարոտ լինելու ցավը: 38-րդ սաղմոսում նա դիմում է Աստծուն, որ ինքը մենակ է ու անօգնական, նույնիսկ սիրելիներն ու ընկերներն են դավաճանել (Հմ.11-14): Բայց նրա աղոթքը վստահությամբ լի էր.«Որովհետև ես ապավինում եմ քեզ, Տե՛ր, դու պիտի պատասխան տաս, ո՛վ Տեր իմ Աստված» (Հմ.15): Դավիթը չի հերքում դժվարությունը նվազեցնելու իր ներքին անհանգստությունն ու Ֆրիդկական հիվանդությունները (Հմ. 16-20): Ընդհակառակը՝ վստահ է, որ Աստված չի հեռանալու իրենից և պատասխանելու է իրեն ճիշտ ժամանակին ու ճիշտ ձևով (Հմ. 21-22): Երբ մենք Ֆրիդկական, մտավոր ու զգացական ծանրության զգացում ունենանք, Աստված հավատարիմ կմնա փրկության իր առաքելությանը, որ ծրագրել է մեզ ստեղծելու օրվանից ի վեր: Ուստի մենք պետք է ապավինենք իր ներկայությունը և կանչենք. «Շու՛տ արա, որ ինձ օգնես, ո՛վ Տեր, իմ Փրկի՛չ» (Հմ.22):

**Աղոթք** - Բարեգութ ու ողորմած Աստված, օգնի՛ր ինձ քաջալերելու նրանց, ովքեր ծանրաբեռնված, մոլորված կամ մոռացված եմ զգում: Ամեն:

**Երբ ծանրությունները ճնշում են, հիշե՛նք, որ Աստված հայտնում է իր հավասարությունը և հասնում մեզ իր փրկության առաքելությամբ:**

Ես ճանապարհ կբացեմ ամայի տեղերում և գետեր՝ անապատում: (Ես. 43. 19)

## **ՆՈՐ ՏԵՍԻԼՔ**

**Ա** կնոցս փոխել էի, և երբ մտա սրբավայր ու նստեցի, նկատեցի մյուս կողմում նստած ընկերոջս: Նա այնքան մոտ երևաց, որ թվաց՝ եթե ձեռքս մեկնեմ, կկարողանամ բարևել: Հետո նկատեցի, որ նա նստած էր իր մշտական տեղում, ուղղակի ավելի մոտ էր երևում, որովհետև ակնոցիս ոսպնյակի չափն էր ավելի մեծ:

Աստված, խոսելով Եսայի մարգարեի միջոցով, իմացավ, որ Բաբելոնի գերության մեջ խրված իսրայելցիներին հարկավոր է նոր դեղատոմս ու նոր տեսակետ: Նա ասաց.«Ահա, ես նոր բան եմ անում... Ես ճանապարհ կբացեմ ամայի տեղերում և գետեր՝ անապատում» (Ես. 43. 19): Հուլյսի այդ ուղերձը ներառում էր այսպիսի քաջալերող հիշեցումներ.«Ես քեզ փրկել եմ, կանչել եմ քեզ քո անունով, դու իմն ես» (Հմ. 1):

Ինչ էլ դիմակայելու լինենք այսօր, Սուրբ Հոգին կարող է մեզ համար ավելի լավ տեսողություն ապահովել, որպեսզի հինը դեն նետենք ու նորը փնտրենք: «Աստծո սիրով» (Հմ.4) նորը կհայտնվի մեր շուրջ: Կարո՞ղ ենք տեսնել, թե ինչ է լինում մեր ցավերի ու գերության մեջ: Եկե՛ք դնենք մեր հոգևոր ակնոցները, որպեսզի տեսնենք այն նորը, որ կատարում է Աստված մեր «անապատային» պահերին:

**Աղոթք** - Նոր սկիզբների Աստված, շնորհակալ եմ Քո բոլոր խոստումների համար: Օգնի՛ր ինձ, որ կարողանամ տեսնել Քո բերած նորը նույնիսկ իմ դժվարին պահերին: Ամեն:

**Ի՞նչ նոր բան ես տեսնում, որ հայցնվում է նույնիսկ անադատում: Ինչո՞ք է կարող է աղագայի կարգավորումն օգնել, որ կենսրոնանամ ոչ թե անցյալի, այլ նորի վրա:**

Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: (Հովհ. 14.2)

## **ԲՈՒՅՆ ՇԻՆԵԼՈՒ ՏԵՂ**

**Ա**վագի սարյակները կամ կեռնեխները, որ ծիծեռնակների նման փոքր թռչուններ են, իրենց բները փորում են գետափերին: Հարավարևելյան Անգլիայում հողերի զարգացման հետևանքով ամեն տարի ավելի ու ավելի քիչ տեղ էր մնում այդ թռչունների բների համար: Ուստի բնապահպանները կառուցեցին հսկայական արհեստական ավագե ավեր, որպեսզի թռչունները կարողանան իրենց բները հյուսել: Նույնիսկ ավագով ստեղծագործողների օգնությամբ այնպիսի միջավայր ստեղծեցին, որտեղ թռչունները կարող էին տարիներ շարունակ բնակություն հաստատել: Կարեկցության այս հիանալի դրսևորումը ցույց է տալիս այն խոսքերի ուժը, որ Հիսուսն ասաց իր աշակերտներին մխիթարելու համար: Մեկնելուց առաջ ի պատասխան Պետրոսի հարցի, թե ուր է գնում, Նա ասում է. «Ուր ես գնում եմ, դու հիմա իմ հետևից չես կարող գալ, բայց հետո կգաս» (Հովհ. 13.36): Հետո առաջարկեց մի երաշխավորություն, որն այսպես էր արտահայտվում. «Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու» (Հովհ.14.2): Աշակերտները տխուր էին, որ Հիսուսը հեռանալու է իրենցից, բայց Նա խրախուսեց նրանց, որ այս սուրբ գործին նայեն որպես իրենց ու մեզ ընդունելու պատրաստության մի մասի:

Առանց խաչի վրա Հիսուսի զոհաբերության՝ Հոր տան «բազմաթիվ օթևանները» չեն կարողանա ընդունել մեզ (Հմ..2): Իսկ մեր առջևից պատրաստություն տեսնելու համար գնալով՝ Քրիստոսը վստահեցնում է, որ պիտի վերադառնա՝ իր հետ վերցնելու նրանց, ովքեր վստահում են իր զոհողությանը: Այնտեղ մենք կապրենք իր հետ՝ ուրախ հավիտենություն մեջ:

**Աղոթք** - Հիսուս, շնորհակալ եմ, որ դրախտում ինձ տեղ ես պատրաստում: Ամեն:

**Այս աշխարհում մնալուն տեղ չունենձ, բայց Տերը խոստանում է մնալուն տեղ դրսևասել մեզ համար երկնում:**

Հովիվները հետ դարձան՝ Աստուծու փառաբանելով և օրհնելով: (Պուկ. 2.20)

### **ՀԱՄԵՍ ՍԱՐԴԵՂՈՒԹՅՈՒՆ**

**Ե**վրոպացի մի իշխան հաճախ էր ծպտված մտնում ժողովրդի մեջ: Նրա թիկնապահները, մտահոգված էին և խնդրում էին անվտանգության նկատառումներով այլևս չչարունակել այդ քայլը: Սակայն իշխանը պատասխանում է. «Ես չեմ կարողանա կառավարել իմ ժողովրդին, եթե չիմանամ՝ ինչպես և ինչ պայմաններում են ապրում մարդիկ»: Ի՛նչ հրաշալի է իմանալ, որ մենք ունենք Աստված, որը լավ է ճանաչում այս կյանքը, որովհետև ինքն էլ է ապրել այդ կյանքով: Այսօր տոնում ենք Հիսուսի ծնունդը՝ Աստծո մարդեղության հրաշալի երևույթը, որ ավելի քան երկու հազար տարի առաջ կատարվեց Բեթղեհեմ փոքրիկ քաղաքում և ամբողջովին հեղաշրջեց մարդկության պատմությունը: Աստված, մեղավոր մարդուն փրկելու համար մասնավոր մի ծրագիր մշակեց ու գործադրեց՝ դրանով արտահայտելով իր մեծ սերը: Հովհաննեսը գրում է. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16): Այո՛, Աստված՝ հզոր Արարիչը մարդեղացավ՝ համեստ ու խոնարհ կերպարանք առնելով: Հիսուսը ծնվեց ոչ թե չքեղ ու փառավոր պալատում, այլ խղճուկ մի ախոռում ու պառկեց մսուրում: Նա նախընտրեց ունենալ պարզ ու համեստ այդ միջավայրը և իր ծնունդի բարի լուրն էլ հայտնեց ոչ թե քահանայապետին, պատրիարքին կամ փարիսեցիներին, այլ մի խումբ հովիվներին: Աստված ընտրեց պարզ մարդկանց և իր հրեշտակներին ուղարկեց նրանց մոտ, որովհետև ուզում էր իր մասին հայտնել պարզ ու հասարակ մարդկանց հետ: Հիսուսը իր համեստ մարդեղությամբ մեր Աստծուն մեզ մոտեցրեց:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմք, որ հաճեցիր Որդուդ մարդու կերպարանքով ուղարկել մեզ պես ապրելու և մեզ փրկելու համար: Ամեն:

**Հիսուսը ծառայի կերպարանով ծնվեց համեստ թայմաններում, որդեսգի մեզ նման լինի և մեզ մոտեցնի Աստուծու:**

Լա ասաց. «Ո՞վ ես, Տե՛ր» (Գործք 9.5)

## Ո՞Վ ԵՍ, ՏԵ՛Ր

**Լ**ուիս Ռոդրիգեսը 16 տարեկանում արդեն բանտարկվել էր թմրանյութ վաճառելու համար: Իսկ այժմ սպանությունների համար դատապարտվել է ցմահ բանտարկության: Բանտի ճաղերի հետևում Լուիսը հիշեց իր մանկության տարիները, երբ մայրը հավատարմորեն իրեն տանում էր եկեղեցի: Ուզգաց, որ Աստված սեղմում է իր սիրտը: Ի վերջո Լուիսը զղջաց իր գործած մեղքերի համար և եկավ Հիսուսի մոտ:

«Գործք Առաքելոց»-ում Սողոս (Պողոս) անունով մի նախանձախնդիր հրեա կա, որը տարված էր Հիսուսին հավատացողներին սպառնալով ու սպանելով (Հմ.9.1): Ապացույցներ կան, որ նա եղել է ավազակախմբի ղեկավար և Ստեփանոսի մահապատժի մասնակիցներից (7.58): Այդուամենայնիվ Աստված խոսեց Սողոսի հետ՝ այդ հանցանքների ու մեղքերի մասին: Դամասկոս տանող ճանապարհին Սողոսը կուրացավ, և Հիսուսը նրան հարցրեց. «Ինչու՞ ես ինձ հալածում» (9.4): Սողոսը հարցրեց. «Ո՞վ ես, Տե՛ր» (Հմ. 5), և դա եղավ նրա նոր կյանքի սկիզբը: Նա դարձի եկավ:

Լուիս Ռոդրիգեսը երկար մնաց բանտում, բայց ի վերջո պայմանական ժամկետով ազատ արձակվեց: Այդ օրվանից նա նվիրվել է Աստծուն՝ ԱՄՆ-ի և Կենտրոնական Ամերիկայի բանտերում ծառայություն մատուցելով:

Աստված մասնագիտացել է մեզանից ամենավատին փրկելու մեջ: Նա թակում է մեր սրտերը և խոսում մեր մեղավոր կյանքի մասին: Ուցե ժամանակն է, որ մենք ապաշխարենք և դառնանք ղեպի Հիսուսը:

**Աղոթք** - Տե՛ր Դիսուս, շեղվել եմ Քո ուղուց, բայց զգում եմ, որ Դու թակում ես սրտիս դուռը: Աղոթում եմ՝ ների՛ր մեղքերս: Ամեն:

**Սեղփի և հանցանքի զգացումները ծնում են մեր սրտերը, բայց Աստված կանչում է, որ Իրեն դիմենք:**



Այս բոլոր բաներում առավել ևս հաղթում եմք նրա՝ միջոցով, ով մեզ սիրեց: (Քրոմ. 8.37)

### **ՆՎԱՃՈՂՆԵՐԻՑ ԱՎԵԼԻ**

**Ե**րբ ամուսինս մարգոմ էր մեր որդու փոքր լիբայի բեյաբու-  
լի թիմը, տարեվերջին, որպես պարգևատրում, նրանց հա-  
մար խնջույք կազմակերպեց և գնահատեց խաղացողների  
առաջխաղացումը տարվա ընթացքում: Միջոցառման ժամա-  
նակ ինձ մոտեցավ խմբի ամենաերիտասարդ անդամներից մե-  
կը՝ Դասթինը, և հարցրեց.

-Այսօր մենք չպարտվեցի՞նք:

-Այո,-ասացի ես,- բայց մենք հպարտ ենք ձեզանով, որ անում  
եք առավելագույնը:

Դասթինն ուզում էր իմանալ, թե ինչու՞ պետք է իրենց հաղ-  
թող զգան, երբ պարտվել են: Ես ժպտալով պատասխանեցի.

-Որովհետև դու հաղթական ես:

Տղան պարտություն էր համարում այն դեպքերը, երբ ինքը  
ձախողվել է, թեև արել է առավելագույնը: Որպես Հիսուսին  
հավատացողներ՝ մեր ճակատամարտը սահմանափակված չէ  
մարզադաշտով: Բայց հաճախ գայթակղիչ է կյանքի դժվարին  
պահերին՝ նայել դրան՝ որպես մեր արժեքի արտացոլում:

Պողոս առաքյալը հաստատել է մեր ներկա տառապանքի և  
ապագա սպասվելիք փառքի կապը: Իրեն տալով մեզ՝ Հիսուսը  
շարունակում է աշխատել մեր օգտի համար մեղքի դեմ մեր շա-  
րունակական պայքարի ընթացքում և մեզ փոխակերպում է իր  
նմանությունմբ (Հռոմ. 8.31-32): Թեև բոլորս ենք ունենում դժ-  
վարություններ ու հալածանքներ, Աստծո անսասան սերն օգ-  
նում է մեզ հաստատակամ լինել (Հմ. 33-34): Որպես իր գա-  
վակներ՝ մենք կարող ենք թույլ տալ, որ պայքարը որոշի մեր  
արժեքը: Սակայն մեր վերջնական հաղթանակը երաշխավոր-  
ված է:

**Աղոթք** - Հայր, շնորհակալություն, որ օգնեցիր ինձ, որ  
փորձությունների մեջ հաղթական գովասանքով կանգնեմ: Ամեն:

**Առաջ գնալու համար դեմք է վստահել Աստուծո, որովհետև Ինքն է  
հաստատում մեր արժեքը՝ որդես Իր սիրելի գավակներ, նույնիսկ  
մեծ կորստից հետո:**

Եթե մեկը գա և ուրիշ Հիսուս քարոզի, որին մենք չքարոզեցինք,.... նրան հաճույքով կընդունեք: (Բ. Կորնթ. 11.4)

### **ՃԻՇՏ ՀԻՍՈՒՍԸ**

**Ս**ենյակում լուսվորներն իջավ, երբ գրական ակումբի ղեկավարն ամփոփեց վեպը, որպեսզի խումբն այն քննարկի: Ընկերս՝ Ջոանը, ուշադիր լսում էր, բայց առաջադրանքը չհասկացավ: Ի վերջո գլխի ընկավ, որ ինքը կարգացել է նույն վերնագրով մեկ այլ գիրք և այժմ չի կարող մասնակցել քննարկմանը:

Պողոս առաքյալը չէր ուզում, որ կորնթացիները «սխալ» Հիսուսի հավատան: Նա մատնանչեց, որ կեղծ ուսուցիչները թափանցել են եկեղեցի, ներկայացրել մի «ուրիշ Հիսուսի», իսկ իրենք ընդունել են այդ սուտը (Բ. Կորնթ. 11. 3-4):

Պողոսը դատապարտում է այդ կեղծ ուսուցիչների հերետիկոսությունը: Եկեղեցուն գրած իր առաջին նամակում նա վերանայել էր Սուրբ Գրքում Հիսուսի մասին եղած ճշմարտությունը: Այս Հիսուսը Մեսիան էր, որ «մեռավ մեր մեղքերի համար...երրորդ օրը հարություն առավ... երևաց տասներկուսին» և վերջում իրեն՝ Պողոսին (Ա. Կորնթ. 15. 3-8): Այս Հիսուսը աշխարհ էր եկել Մարիամ անունով կույսից և կոչվել է մամանուել (Աստված մեզ հետ է)՝ որպես հաստատում իր աստվածային էության (Մատթ. 1. 20-23):

Արդյո՞ք սա նման է քեզ ծանոթ Հիսուսին: Աստվածաշնչում Նրա մասին գրված ճշմարտությունը հասկանալն ու ընդունելը վստահություն է ներշնչում, որ մենք հոգևոր ճանապարհի վրա ենք, որը տանում է երկինք:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, օգնի՛ր ինձ, որ քայլեմ Քո ճշմարտության լույսի ներքո: Ամեն:

**ԱՆհրաժեժ է մՈՆԵԼ ծճԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԸ, ՈՐՊԵՍՈՒԿԻ ԿԱՐՈՂԱՆԱՆԻ ԽԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՍԱԾՐ ՀԻՍՈՒՍԻ մԱՍԻՆ:**

Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ փրկել եմ: (Ես. 43.1)

## ՓՐԿՈՂ ԱՍՏՎԱԾԸ

**Ո**րպես քարոզի լուսաբանման ձև՝ քայլեցի դեպի բեմի վրա ստեղծագործող նկարչուհին և նկարի մեջտեղում մի հաստ, սև գիծ քաշեցի: Մարդիկ սարսափեցին, իսկ նկարչուհին կանգնած նայում էր, թե ինչպես եմ փչացնում արվեստի գործը: Հետո, ընտրելով մի նոր վրձին, նա սիրով վերափոխեց աղավաղված պատկերը և այն դարձրեց մի նոր կտավ:

Նկարչուհու այդ աշխատանքը հիշեցնում է Աստծո կատարածը մեր կյանքում, երբ մենք այն վերածած ենք լինում խառնաշփոթի: Եսայի մարգարեն հանդիմանում է Իսրայելի ժողովրդին նրանց հոգևոր կուրուլթյան ու խլուլթյան համար (Ես. 42. 18-19), բայց հետո հռչակում է Աստծո փրկուլթյան և ազատագրման հույսը. «Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ փրկել եմ» (43.1): Նա կարող է նույնը անել մեզ համար: Նույնիսկ մեզք գործելուց հետո, եթե խոստովանենք ու դիմենք Աստծուն, Նա կների ու կվերականգնի մեզ (Հմ. 5-7, տե՛ս. Ա. Հովհ. 1.9): Մենք չենք կարող գեղեցկուլթյունը փրկել խառնաշփոթուլթյունից, բայց Հիսուսը կարող է: Ավետարանի բարի լուրն այն է, որ Նա Իր արյունո՛վ փրկեց մեզ: Հայտնուլթյան գիրքը վատահեցնում է, որ ի վերջո՝ Քրիստոսը սրբում է մեր արցունքները, փոխում մեր անցյալը և նորացնում ամեն ինչ: (Հայտն. 21. 4-5): Մենք մեր պատմուլթյան սահմանափակ տեսլականն ունենք: Բայց Աստված, որ ճանաչում է մեզ մեր «անունով» (Ես. 43.1), մեր կյանքը դարձնում է ավելի գեղեցիկ, քան մենք երբևէ կարող էինք պատկերացնել: Եթե փրկված ես Հիսուսի հանդեպ ունեցածդ հավատով, ուրեմն քո պատմուլթյունը փառավոր ավարտ կունենա:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմ, որ երբեք չիրաժարվեցիր ինձնից: Հանձնվում եմ Քեզ և խնդրում, որ փրկես ինձ: Ամեն:

**Մեր գործած մեղքերով ու հանցանքներով աղավաղում ենք մեր կյանքը, սակայն Աստված Իր շնորհով ու սիրով վերականգնում ու փրկում է մեզ:**

Իմ Աստվածն ուղարկեց իր հրեշտակին, և նա փակեց առյուծների բերանը: (Դան. 6.22)

## **ԱՌՅՈՒԾՆԵՐԻ ԳՈՒԲԻՑ ԴՈՒՐԱ**

**Ե**րբ Թաճերն ու նրա կինը՝ Դունյան, հավատացին Հիսուսին, գիտեին, որ իրենց հայրենիքում հալածվելու են: Այդպես էլ եղավ. մի օր Թաճերին ձերբակալեցին ու մեղադրեցին հավատուրացություն մեջ: Դատավարությունից առաջ ամուսինները պայմանավորվեցին, որ չեն ուրանալու Հիսուսին:

Իսկ այն, ինչ պատահեց դատավարության ժամանակ, ապշեցրել էր նրանց: Դատավորն ասաց.«Չգիտեմ ինչու, ուզում եմ ձեզ հանել կետի ու առյուծի երախից»: Այդ պահին Թաճերը հասկացավ, որ «Աստված իր հետ է»: Այլ կերպ դժվար էր բացատրել դատավորի ակնարկը հենց Աստվածաշնչի երկու հատվածներից (Հովնան 2, Դան. 26): Թաճերին ազատեցին, իսկ ընտանիքը հետո աքսորվեց այլ վայր:

Թաճերի հետ պատահածը ասես Դանիելի պատմության կրկնությունը լինի: Լինելով հմուտ վարիչ՝ նա պաշտոնի բարձրացում էր ստանալու, ինչը հարուցել էր գործընկերների նախանձն ու չարությունը (Դան. 6. 3-5): Դավադրություն նյութելով՝ նրանք Դարեհ թագավորին համոզեցին մի հրովարտակ ստորագրել, որով երեսուն օրով արգելվում էր աղոթել որևէ մեկին՝ բացի արքայից: Դանիելը չենթարկվեց այդ հրամանին, և թագավորը ստիպված էր նրան նետել առյուծների գուբը (Հմ.16): Բայց Աստված «փրկեց Դանիելին» և «ազատեց առյուծների զորությունից» (Հմ.27), ինչպես փրկել էր Թաճերին՝ դատավորի անակնկալ վճռով: Այսօր շատ հավատացյալներ են տառապում, երբեմն նույնիսկ սպանվում Հիսուսին հետևելու պատճառով: Այդպիսի հալածանքների ժամանակ մենք կարող ենք խորացնել մեր հավատը՝ վստահ լինելով, որ բոլոր պարագաներում նա մեզ հետ է:

**Աղոթք** - Փրկարար Աստված, օգնիր ինձ, որ Քեզ վստահեմ, երբ խոչընդոտներն անհաղթափարելի են թվում: Ամեն:

**Դժվարությունների և մեզ սղառնացող վսանգների ժամանակ վստահեմք Ասծո անսահման զորությանը:**

Լաց մի՛ եղիր, ահա հաղթեց առյուծը՝ Գոլգայի ցեղից Դավթի արմատը: (Քայլոս. 5.5)

## **ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ա**վելի քան վեց տասնամյակ ռադիոհաղորդավար Փոլ Հարվիի ձայնը հնչել է Ամերիկայի ռադիոյում: Շաբաթական վեց օր նա լուրեր ու մեկնաբանություններ էր կարդում եթերում, բայց ավելի հայտնի է «Պատմություն մասը» խորագրով նրա հեղինակային հաղորդումը: Ունկնդրին պահելով լարված ու հետաքրքրված՝ նա որևէ հայտնի մարդու մասին պատմում էր քիչ ծանոթ մի դրվագ՝ մինչև վերջ նրա անունը պահելով գաղտնի և խոստանալով, որ քիչ հետո կիմանան պատմության շարունակությունը: Եվ այդ ամենը մատուցում էր գովազդային դադարներով ու թատերական անցումներով: Հովհաննես առաքյալի տեսիլքը անցյալի ու ապագայի մասին բացվում է նմանատիպ խոստումով: Բայց նրա պատմությունը սկսվում է տխուր շեշտադրմամբ: Նա անդադար լալիս էր, որովհետև երկնքում ու երկրի վրա որևէ արարած էջ կարողացել բացատրել, թե ուր է գնում պատմությունը (Հայտն.4.1, 5.1-4): Հետո լսեց մի ձայն, որը «Հուդայի առյուծի» միջոցով (Հմ.5) հույս էր ներշնչում: Բայց երբ Հովհաննեսը նայեց, հաղթող առյուծի փոխարեն մի գառնուկ տեսավ, որն ասես «մորթված» լիներ (Հմ.5-6): Հրաշալի տեսարանն սկսվում է դրանից հետո, երբ Աստծո գահի շուրջ ծավալվում է տոնակատարությունների ալիքը, հնչում են երգն ու աղոթքը, քսանչորս երեցներին են միանում անթիվ հրեշտակներ, որոնք երկրպագում, օրհնում ու փառաբանում են գահի վրա նստողին ու Գառանը (Հմ.8-14): Ո՞վ կարող էր պատկերացնել, որ խաչված Փրկիչը պիտի լիներ բոլոր ստեղծագործությունների հույսը, մեր Աստծո փառքը և մեր պատմության մնացած մասը:

**Աղոթք** - Ամենակարող Աստված, Դու արժանի ես ամենայն գործության, գովասանքի և սիրո: Ամեն:

**Վախերն ու վճերն անդակաս են, կարևոր է աղավիհել Գիտության՝ Առյուծին ու զոհաբերվող Գառնուկին հայտնաբերած հույսին:**

Կցանկանայի ես ինքս Քրիստոսից նզովված լինել իմ եղբայրների ու ըստ մարմնի իմ ազգակիցների համար: (Ռոմ. 9.3)

## **ԱՄԲՈՒՆԸ**

«Ապացուցված է, որ մարդիկ դիմադրում են ամենահզոր միապետներին անգամ և հրաժարվում խոնարհվել նրանց առջև», - գրել է փիլիսոփա, պատմաբան, քաղաքագետ Հաննա Արենդտը և ավելացրել. «Քչերն են եղել, որ ամբոխի և մոլորված զանգվածների առջև մենակ մնան և առանց զենքի դիմակայեն նրանց անհաշտ մոլեգնությունը»: Որպես հրեա՝ Արենդտը դրան ականատես էր եղել իր հայրենի Գերմանիայում: Իսկ որևէ խմբի կողմից մերժված լինելը սարսափելի բան է:

Պողոս առաքյալը նման մերժում ունեցել է: Որպես փարիսեցի և մարզված ուսուցիչ՝ նրա կյանքը գլխիվայր շրջվեց, երբ հանդիպեց հարություն առած Հիսուսին: Պողոսը ճամփորդում էր դեպի Դամասկոս՝ հալածելու Քրիստոսին հավատացողներին (Գործք.9): Դարձից հետո առաքյալը մերժվեց իր ժողովրդի կողմից: Իր գրած նամակում, որը հայտնի է որպես կորնթացիներին ուղղված երկրորդ նամակ, Պողոսը վերհիշում է այդ դժվարությունները, «բանտարկություններն ու ծեծերը» (6.5):

Նման մերժումներին բարկություն մեծ կամ դառնություն մեծ պատասխանելու փոխարեն Պողոսը կամեցավ, որ նրանք նույնպես ճանաչեն Հիսուսին և գրեց. «Տրտմությունս մեծ է, իսկ սրտիս ցավը՝ անհատնում: Կցանկանայի ես ինքս Քրիստոսից նզովված լինել իմ եղբայրների ու ըստ մարմնի իմ ազգակիցների համար» (Հռոմ. 9.2-3):

Ինչպես Աստված ընդունել է մեզ իր ընտանիք, թող Ինքն էլ հնարավորություն տա, որ իր հետ հարաբերվելու համար հրավիրենք նույնիսկ մեր հակառակորդներին:

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, օգնի՛ր ինձ, որ նույնիսկ ինձ մերժողներին ցույց տամ Քեզ և օգնեմ, որ տեղ ունենան Քո թագավորության մեջ՝ չնայած անձնական վիրավորանքին ու հուսախաբությանը: Ամեն:

**Դժվար է ընդունել, երբ մարդիկ մերժում են մեզ ու մեր հավատը, բայց մենք դարձյալ կարող ենք աղոթել նրանց համար:**

Տե՛ր, փրկի՛ր իմ անձը սուտ շրթունքներից, նենգավոր լեզվից: (Սաղմ. 120.2)

## **ՄԻ ՆՈՐ ՍԿԻԶԲ**

**Յ**ուշին Պիտերսոնը 120-րդ սաղմոսի մասին մտորումներում գրել է. «Քրիստոնեական գիտակցությունն սկսվում է այն ցավալի գիտակցումից, որ այն, ինչ մենք ճիշտ էինք համարում, իրականում սուտ է»: Ուսումնասիրելով Երուսաղեմի ճանապարհին ուխտավորների երգած սաղմոսների շարքը (120-134)՝ «Երկար հնագանգությունն նույն ուղղության մեջ» գրքում նա դրանք անվանել է դեպի Աստված գնացող ճամփորդության իսկական պատկեր: Այդ ճամփորդությունը կարող է սկսվել տարբեր բաների կարիքի խոր գիտակցությամբ: «Քրիստոնեական ճանապարհով գնալու դրդապատճառ գտնելու համար մարդ պետք է խորապես զգվի ամեն ինչից, ձանձրացած լինի աշխարհի ճանապարհներից»:

Մեզ շրջապատող աշխարհում շատ հեշտ է հուսահատվելն ու կոտրվելը: 120-րդ սաղմոսը անկեղծորեն ողբում է. «Ես խաղաղության մարդ եմ, բայց երբ խոսում եմ նրանց հետ, կռվում եմ» (Հմ. 7):

Բայց կա բուժում և փրկություն: Դա այն գիտակցումն է, որ մեր ցավը կարող է արթնացնել մի նոր սկիզբ: Մեր Փրկիչը կարող է մեզ կործանարար ստերից առաջնորդել դեպի խաղաղություն:

**Աղոթք** - Սիրող Աստված, օգնի՛ր ինձ, որ Քո Հոգու զորությամբ ձգտեմ և աշխատեմ Քո խաղաղության ուղիների համար: Ամեն:

**Կործանարար ուղիներ մի՛ս էլ կղատուհասեն մեզ, սակայն Ավեսարանը հրավիրում է մեզ դեռի խաղաղության ուղիներ:**

Ես Տիրոջով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստծով ուրախանամ: (Ամբ. 3.18)

### **ՈՂԲԻՑ՝ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Մ**ոնիկան ջերմեռանդ աղոթում էր, որ իր որդին փոխի կենսակերպը, դարձի գա դեպի Աստված: Նա ողբում էր նրա կամակորուժյունների համար, հետևում գործողություններին, որ քաղաքում էլ որ նա բնակվելիս լիներ: Իրավիճակն անհույս էր թվում, բայց մի օր անսպասելի բան պատահեց: Որդին արմատապես փոխվեց, լուրջ հանդիպում ունեցավ Աստծո հետ: Հետագայում նա դարձավ եկեղեցու հայտնի աստվածաբաններից մեկը, որ հայտնի է Օգոստինոս Երանելի անունով: «Ո՛վ Տեր, մինչև ե՞րբ աղաղակեմ» (Ամբ.1.2),- ասում է Ամբակում մարգարեն և ողբում, որ Աստված ոչինչ չի ձեռնարկում ամբարիշտ իշխանավորների հանդեպ, որոնք խեղաթյուրում են արդարությունը (հմ.4): Մտածենք այն դեպքերի մասին, երբ մենք հուսահատ դիմել ենք Աստծուն՝ արտահայտելով մեր ողբը անարդարության, անհույս թվացող առողջական վիճակների, նյութական դժվարությունների կամ Աստծուց հեռացած զավակների համար: Ամեն անգամ, երբ Ամբակումը ողբում էր, Աստված լսում էր նրա ձայնը: Երբ հավատքով սպասենք, մենք էլ կարող ենք մարգարեից սովորել մեր ողբը փառաբանության վերածել, քանի որ նա ասել է. «Ես Տիրոջով պիտի ցնծամ, պիտի իմ փրկության Աստծով ուրախանամ»(3.18): Նա չէր հասկանում Աստծո ճանապարհները, բայց վստահում էր Նրան: Թե՛ ողբը, և թե՛ փառաբանությունը հավատքի գործողություններ են՝ վստահության արտահայտություններ: Մենք ողբում ենք, երբ դիմում ենք Աստծուն: Եվ Նրան ուղղված գովասանքն ու փառաբանությունը հիմնված են այն բանի վրա, թե ով է Նա՝ մեր զարմանալի ու ամենակարող Աստվածը: Նրա շնորհիվ մի օր ամեն ողբ կվերածվի փառաբանության:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, հիշեցրու՛ ինձ, թե ով ես Դու և ինչ ես արել իմ կյանքում: Ամեն:

**Ողբալու դասձառներ աս կլինեն, բայց կարելի է դրանք վերածել փառաբանության:**



Երանի՜ նրանց, ովքեր քաղցած են և ծարավ արդարության, որովհետև նրանք կկշտանան: (Մատթ. 5.6)

## ԿՇՏԱՆԱԼ

**Ռ**ոկտոր Մարտին Լյութեր Քինգ Կրտսերն սպանվեց 1968թ. ապրիլի 4-ին՝ Ամերիկայի քաղաքացիական իրավունքների շարժման բարձրակետին: Ընդամենը չորս օր անց նրա այրին՝ Քորետտան, խիզախորեն զբաղեցրեց իր ամուսնու տեղը և գլխավորեց խաղաղ ցույցը, որովհետև ինքն էլ արդարության կրքոտ ջատագով էր և բազում հարցերում ամուսնու աջակիցը:

Հիսուսն ասում է. «Երանի՜ նրանց, ովքեր քաղցած են և ծարավ արդարության, որովհետև նրանք կկշտանան» (Մատթ. 5.6): Մենք գիտենք, որ մի օր Աստված գալու է, որպեսզի արդարություն հաստատի և բոլոր սխալներն ուղղի: Իսկ մինչ այդ մենք հնարավորություն ունենք մասնակցելու Աստծո արդարությունը երկրի վրա իրականություն դարձնելուն, ինչպես դա Քորետտան արեց: Եսայի 58-ը ներկայացնում է մի պատկեր, թե Աստված ինչ կոչ է անում Իր ժողովրդին. «Լուծի՛ր ամբարշտության կապանքները, արձակի՛ր լծի կապանքները, կեղեքվածներին ազատի՛ր և կոտորի՛ր ամեն տեսակ լուծ: Հացդ բաշխի՛ր քաղցածին, թափառական թշվառներին տո՛ւն բեր, եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան և քո նմանից երես մի՛ ծածկիր» (Հմ.6-7): Ճնշվածների ու թափառականների համար արդարություն փնտրելը դեպի Աստված տանող ճանապարհներից մեկն է: Եսային գրում է. «Քո արդարությունը պիտի զնաքո առջևից, և Տիրոջ փառքը քեզ պիտի պահպանի թիկունքից» (Հմ. 8): Թող Աստված օգնի մեզ, որ զարգացնենք իր արդարության քաղցը այստեղ՝ երկրի վրա:

**Աղոթք** - Աստված, տո՛ւր ինձ արդարության քաղցը: Օգնի՛ր որ լինեմ Քո աշխատանքի մի մասը՝ անելով այն, ինչը ճիշտ է: Ամեն:

**Մեր շուրջը եղող անարդարությունը տեսնելով՝ եկե՛ք անենք լավագույնը և օգնության ձեռք մեկնենք դրա կարիք ունեցողներին:**

Քո եղբայրը հարուստուն կառնի: (Ռոմի. 11.23)

## **ԵՐԲԵՔ ՉԻ ՈՒՇԱՆՈՒՄ**

**Ա**յցելելով Արևմտյան Աֆրիկայի փոքր քաղաքներից մեկը՝ ամերիկացի հովիվը կիրակի օրը առավոտյան ժ. 10-ին գնաց եկեղեցի: Բայց այդ ժամին սրբավայրը դեռ դատարկ էր: Նա համբերությամբ սկսեց սպասել, և միայն 12 անց կեսին, երբ տեղ հասավ տեղացի հովիվը, երգչախմբի անդամներն ու հավատավոր մարդիկ, պաշտամունքն սկսվեց: «Հոգին ընդունեց մեզ, և Աստված չուշացավ: Ամեն ինչ ժամանակի ամբողջության մեջ էր», - հետագայում գրեց հովիվը՝ հասկանալով, որ ինքը մշակույթների տարբերության է ականատես:

Ժամանակը հարաբերական է թվում, բայց Աստված կատարյալ է ու ճիշտ ժամանակին: Սուրբ գրությունների մեջ հաստատվում է դա: Ղազարոսի հիվանդանալուց ու մահանալուց չորս օր անց, երբ Հիսուսը եկավ, նրա քույրերը հարցրին, թե ինչու ուշացավ: Մարթան ասաց. «Տե՛ր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մահանա» (Հովհ. 11.21): Մենք էլ կարող ենք այդպես մտածել, բայց ավելի լավ է հավատով սպասել նրա պատասխաններին ու գործությանը:

Ինչպես աստվածաբան Հովարդ Թուրմանն է գրել. «Հա՛յր մեր, մենք սպասում ենք, մինչև որ Քո ուժից ինչ-որ բան դառնա մերը, Քո սրտից ինչ-որ բան դառնա մեր սիրտը, Քո ներումից ինչ-որ բան դառնա մեր ներումը: Սպասում ենք, ո՛վ Աստված, սպասում ենք»: Ապա, ինչպես Ղազարոսի պարագայում Աստված պատասխանեց, հրաշքով կորհնվեմք այն բանից, որը բնավ էլ ուշացում չէր:

**Աղոթք** - Հայր, սպասում եմ Քեզ համար: Սպասմանս մեջ տո՛ւր ինձ ուժ և հավատարիմ հույս: Ամեն:

**Մենք էլ ենք սղասում Ասծուն, որ օգնության հասնի: Հավաստով սղասենք, որովհետև Նա երբեք չի ուշանում:**

Այսպես է ասում Տեր Աստված.«Դարձի՛ եկեք ու հետ դարձեք ձեր կուռքերից և ձեր բոլոր պիղծ կուռքերից հետ դարձրեք ձեր դեմքերը»: (Եզ. 14. 6)

## ՄՐՏԻ ՀԱՐՑ

**Ը**նկերս՝ գանացի մի հովիվ, լուսարձակն ուղղելով դեպի հողաչեն շինվածքի պատին հենած առարկան, կամաց ասաց. «Տեսնու՞մ ես, եղբայր, դա այս գյուղի կուռքն է»: Ամեն երեքշաբթի հովիվ Սեմը երկար ու դժվարին ճանապարհ էր անցնում, որպեսզի Աստվածաշնչի մասին պատմեր այս հեռավոր գյուղում:

Եզեկիելի գրքում տեսնում ենք, որ կռապաշտությունը համաճարակի նման պատուհասել էր Հուդայի ժողովրդին: Երբ Երուսաղեմի առաջնորդներն եկան մարգարեին տեսնելու, Աստված ասաց նրան. «Այս մարդիկ իրենց կուռքերը բարձրացրել են իրենց սրտերում» (14.3): Աստված պարզապես չէր զգուշացնում կուռքերից, այլ ցույց էր տալիս, որ կռապաշտությունը սրտի հարց է, և մենք բոլորս ենք պայքարում դրա դեմ:

Աստվածաշնչի մասնագետ Ալիսթեր Բեգը կուռքը նկարագրում է որպես «Աստծուց առանձին մեկ այլ բան, որը մարդիկ կարևորում են խաղաղության, գոհունակության կամ ընդունելի լինելու համար»: Նույնիսկ ամենապարզ առարկաները կարող են դառնալ կուռքեր: Երբ մարդ մխիթարություն կամ գոհունակություն է փնտրում կենդանի Աստծուց բացի որևէ այլ բանում, ուրեմն նա կռապաշտություն է անում:

Աստված ասել է. «Դարձի՛ եկեք ու հե՛տ դարձեք ձեր կուռքերից» (Հմ.6): Իսրայելը ցույց տվեց, որ ի վիճակի չէր դա կատարել: Բարեբախտաբար, Աստված ուներ լուծումը: Անհամբեր սպասելով Քրիստոսի գալստյանն ու Սուրբ Հոգու պարգևին՝ Նա խոստացավ. «Ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ» (36.26):

**Աղոթք** - Հայր, ցոյց տուր սրտումս եղած կուռքերը: Հետո օգնիր, որ վերացնեմ դրանք և ապրեմ Քո սիրով:

**Երբ ծնւված եմ լինում, ո՞ւր եմ դիմում հանգստանալու համար: Ինչի՞ց դիմում մտքերս մտքերս այսօր:**

Բայց ես ասում եմ ձեզ. սիրե՛ք ձեր թշնամիներին: (Մատթ. 5.44)

## **ԲԱՅՑ ԵՍ ԱՍՈՒՄ ԵՍ ՁԵԶ**

«**Ես** գիտեմ, թե ինչ են ասում: Բայց ես ասո՛ւմ եմ քեզ...», - մանուկ հասակում մորիցս հազար անգամ լսել եմ այս խոսքը: Եվ դա լինում էր հասակակիցների հետ համեմատվելու դեպքերում: Մայրս փորձում էր ինձ սովորեցնել ինքնուրույնություն, նախիրին չհետևել:

Ես վաղուց արդեն փոքր չեմ, բայց նախիրի մտածելակերպը դեռ շարունակվում է իմ մեջ: Հիմա մենք առաջնորդվում ենք «մեզ դրական մարդկանցով շրջապատելու» գաղափարով: Բայց պետք է հարցնենք՝ «Արդյո՞ք դա քրիստոսանման է»:

Մատթեոս 5-ում Հիսուսը քանիցս օգտագործում է «Բայց ես ասում եմ ձեզ» արտահայտությունը, որովհետև ինքը լավ գիտի, թե մենք ինչ ենք լսում անընդհատ և ուզում է, որ մենք այլ կերպ ապրենք: Այս պարագայում Նա ասում է.«Սիրե՛ք ձեր թշնամիներին և աղոթե՛ք ձեզ չարչարողների ու հալածողների համար» (հմ.44): Ավելի ուշ Նոր Կտակարանում Պողոս առաքյալն է այդ բառերն օգտագործում՝ մեզ նկարագրելով այսպես.«այն ժամանակ, երբ թշնամի էինք Աստծուն» (Հռոմ. 5.10): Հիսուսն իր խոսքերը հիմնավորում է գործերով և ոչ թե նրանց նման, ովքեր ասում են. «Արե՛ք, ինչ ասում եմ, և ոչ թե ինչ անում եմ»: Նա սիրեց մեզ և իր կյանքը տվեց մեզ համար:

Ի՞նչ կլինեն, եթե Քրիստոսն իր կյանքում տեղ տար միայն «դրական մարդկանց»: Դա ո՞ւր կարող է հասցնել մարդուն: Փառք Աստծո, որ Նրա սերը անձանց հարգելու համար չէ: Որովհետև Աստված այնքա՛ն սիրեց աշխարհը, և մենք էլ կոչված ենք իր գորությունմբ նույնը անելու:

**Աղոթք** - Զայր, փորձություն ե միայն ինձ սիրողներով շրջապատված լինելը: Դա չէ Քո ցանկությունը: Օգնի՛ր ինձ, որ նույնիսկ թշնամուս սիրեմ: Ամեն:

**Չիսուսի դասվիրանի համաձայն՝ եկե՛ք այսօր մենք էլ դասրաս լինենք սիրել նույնիսկ մեր թշնամիներին:**

Սիրո կայծերը բոցավառ կրակի կայծերի պես են: (Երգ երգոց 8.6)

## **ՍԻՐԵԼ ԲՈՑՎԱՍԻ ԿՐԱԿԻ ՆՄԱՆ**

**Բ**անաստեղծ և նկարիչ Ուիլյամ Բլեյքը քառասունհինգ տարի երջանիկ ապրեց իր տիկնոջ՝ Բեթրինի հետ: Իրենց ամուսնուկթյունից մինչև իր մահը՝ 1827թ. նրանք աշխատել են կողք կողքի: Բեթրինը յուրահատուկ մի գույն էր ավելացնում Ուիլյամի նկարներին, և նրանց փոխադարձ նվիրվածուկթյունը տարիներ շարունակ դիմացավ աղքատուկթյանն ու այլ մարտահրավերների: Նույնիսկ վերջին շաբաթներին, երբ Բլեյքի առողջական վիճակը վատթարացել էր, նա շարունակում էր աշխատել: Վերջին աշխատանքը կնոջ դիմանկարն էր: Չորս տարի անց էլ Բեթրինը մահացավ՝ ամուսնու մատիտներից մեկը ձեռքին բռնած:

Բլեյքի ջերմեռանդ սերը ասես «Երգ երգոց»-ում նկարագրված սիրո արտացոլումը լինի: Այն, անշուշտ, ամուսնուկթյան մասին է, բայց Հիսուսի առաջին հավատացողներն ընդունում էին, որ այն նաև ցույց է տալիս Հիսուսի անմար սերն Իր բոլոր հետևորդների հանդեպ: Երգը նկարագրում է «մահվան պես զորավոր սերը», որի «կայծերը բոցավառ կրակի կայծերի պես են» (8.6): Եվ ի տարբերուկթյուն սովորական կրակի՝ այդ բոցերը չեն հանգչում նույնիսկ առատ ջրերով (Հմ.7):

Ո՞վ չի ցանկանում իսկական սեր ունենալ:

Երգը հիշեցնում է, որ իսկական սիրո աղբյուրը Աստված է: Եվ մեզանից յուրաքանչյուրը Հիսուսի մեջ կարող է ճանաչել ու իմանալ այն խորն ու անմահ սերը, որն այրում է բոցավառ կրակի նման:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ՝ ստանալու Քո սերը և այն բաժանելու ուրիշներին: Ամեն:

**Բոլորս էլ ուզում ենք հանդիպել բուն և իսկական սիրո: Հիսուսի սերը փառալերում է, որ նման սեր արժանանանք մեր կողակիցների և բոլորի հանդեպ:**

Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերությամբ, սիրով միմյանց հանդուրժելով: (Եփ. 4.2)

### **ՍՈՒՐՃԻ ԲՈՒՅՐ**

**Մ**ի առավոտ նստած էի բակում, երբ հանկարծ կրտսեր դուստրս եկավ ու թռավ գիրկս: Ես հայրական գգվանքով սեղմեցի նրան ու համբուրեցի գլուխը: Բայց նա քիթը կնճռոտեց, մեղադրական հայացքով նայեց սուրճի բաժակին և ասաց.«Հայրի՛կ, ես քեզ սիրում եմ, բայց քո հոտը չեմ սիրում»:

Աղջիկս չէր ուզում վիրավորել ինձ, բայց նաև ուզում էր ճշմարտությունն ասել: Մենք էլ մեր հարաբերություններում երբեմն ունենում ենք այդպիսի առիթներ:

Եփեսացիներին ուղղված նամակում Պողոսն ասում է, թե մենք ինչպես ենք հարաբերվելու միմյանց հետ՝ հատկապես դառը ճշմարտություններ ասելիս.«Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերությամբ, սիրով միմյանց հանդուրժելով» (Հմ. 4.2): Այդ հատկությունների զարգացումը, ինչպես առաջնորդում է Աստված, կօգնի «սիրո մեջ ճշմարիտ լինել» (Հմ.15) և հայտնել այն, ինչը «բարի է, հավատի շինության համար պիտանի, որպեսզի շնորհ տա լսողներին» (Հմ.29):

Ոչ մեկը չի սիրում ընդունել իր թուլություններն ու ստվերոտ կողմերը: Բայց երբ մեր կյանքում ինչ-որ տհաճ բան է լինում, Աստված կարող է օգտագործել հավատարիմ ընկերներին, որպեսզի խոսի այդ մասին՝ ճշմարտությամբ, խոնարհությամբ, հեզությամբ ու համբերությամբ:

**Աղոթք** - Հայր, օգնիր ինձ, որ խոնարհությամբ ընդունեմ ուղղումները և նույն խոնարհությամբ ու հեզորեն ուղղեմ ուրիշներին: Ամեն:

**Ուրիշների որևէ թերությունը ցույց տալու համար կարևոր է դա անել սիրով ու խոնարհությամբ:**

Նա վերևից ուղարկեց և բռնեց ինձ: (Սաղմ. 18.16)

## **ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ՄԵԿՆԵԼ**

**Բ**ոնի Գրեյը համացանցային իր վերջին գրառման մեջ նկարագրում է այն պահը, երբ ճնշող տխրությունը սողոսկել է իր սիրտը. «Կյանքիս ամենաներջանիկ հանգրվանում հանկարծ տազնապ ու անհանգստություն զգացի»: Տրամադրությունը փոխելու տարբեր միջոցներ է փորձել, բայց շուտով հասկացել է, որ ինքը բավականաչափ ուժեղ չէ այդ վիճակը միայնակ հաղթահարելու համար: Նա սկսել է աղոթել: Բայց Աստված մեզ ուզում է բուժել ոչ թե ամաչեցնելով կամ ցավերից փախչել ստիպելով: Գրեյը բուժումը գտել է Տիրոջ ներկայություն մխիթարության մեջ: Նա էր միակ խարիսխը այն ալիքների մեջ, որ սպառնում էին պատել իրեն:

Երբ մենք ծանր վիճակում ենք ու հուսահատված, Աստված այդտեղ է և կպաշտպանի մեզ: Սաղմոս 18-ում Դավիթը փառաբանում է Աստծուն, որն ազատեց իրեն դժվարին վիճակից, երբ ինքը գրեթե պարտվում էր թշնամիներից. «Նա վերևից ուղարկեց և բռնեց ինձ, նա առատ ջրերից հանեց ինձ» (Հմ.16): Նույնիսկ այն պահերին, երբ թվում է, թե հուսահատությունը մեզ կլանում է օվկիանոսի բախվող ալիքների պես, Աստված ձեռք է մեկնում մեզ և օգնում՝ առաջնորդելով դեպի խաղաղ, ապահով ու «լայնարձակ տեղ» (Հմ.19): Երբ ճնշված կլինենք կյանքի դժվարությունների ներքո, եկե՛ք նայենք Նրան՝ որպես մեր ապաստարան:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, լինում եմ պահեր, երբ զգում եմ, որ բռններս շատ ծանր են: Բայց շնորհակալ եմ, որ միշտ օգնում ես՝ դրանք տանելու, և տալիս ես խաղաղություն, ուժ և իմաստունություն: Ամեն:

**Կյանքի փորձություններն ու դժվարությունները ծնում են մեզ, սակայն Աստված մեր աջակիցն ու օգնականն է:**

Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա։(Դուկ. 15.6)

## **ԿՈՐՑՎԱԾ ՈՒ ՉՏՆՎԱԾ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ**

**Կ**նոջս հետ ծովափին զբոսնելիս ծանոթացանք տարեց մի մարդու հետ, որը մետաղորսիչով զննում էր ծովափի բանուկ հատվածը։ Նա այսպես ներկայացավ. «Ինձ անվանում են մատանիների վարպետ, որովհետև մինչև այժմ 167 կորցրած մատանի եմ գտել»։ Նա պատմեց, որ երբեմն մատանիների վրա անուններ են լինում, և ինքը շատ է սիրում այն պահերը, երբ տերերին է վերադարձնում կորցրած մատանին։ «Նախ զարդի նկարը տեղադրում եմ համացանցում և հետևում, թե արդյո՞ք որևէ մեկը կապ հաստատել է գտնված իրերի կենտրոնի հետ։ Պատահել է, որ երկար ժամանակ կորցրած մատանիներ էլ եմ գտել»։ Երբ ես ասացի, որ ինքս էլ եմ սիրում մետաղ որոնել, բայց հաճախ չեմ անում, նա ասաց. «Դու երբեք չես գտնի, եթե չփնտրես»։ Մեկ այլ տեսակ «փնտրտուք և փրկություն» ենք տեսնում Դուկաս 15-ում։ Հիսուսին քննադատում են մեղավոր մարդկանց կարեկցելու համար (Հմ.1-2)։ Ի պատասխան՝ նա երեք պատմություն է պատմում կորցված ու գտնված ոչխարի, մետաղադրամի և որդու մասին։ Կորցրած ոչխարը գտնող մարդը «ուրախացած նրան իր ուսերին կղնի և տուն գալով՝ բարեկամներին ու հարևաններին կկանչի ու նրանց կասի. «Ինձ հետ ուրախացե՛ք, որովհետև իմ կորած ոչխարը գտա» (Դուկ. 15. 5-6)։ Բոլոր պատմություններն էլ վերջին հաշվով վերաբերում են Քրիստոսի համար կորած մարդկանց գտնելուն և այն ուրախությանը, որ նրանք գտնվում են Տիրոջ մեջ։ Հիսուսը եկավ «կորածին փնտրելու և փրկելու» (19.10) և մեզ էլ հրավիրում է հետևել իրեն և անել նույնը։

**Աղոթք** - Հիսու՛ս, շնորհակալ եմ ինձ գտնելուդ ու սիրելուդ համար։ Խնդրում եմ ինձ ուղարկի՛ր ուրիշի մոտ, որն ունի Քո կարիքը։ Ամեն։

**Ուրախություն է, երբ կորցված մեկը զտնվում է։ Եկե՛ք անենք լավագույնը, որդեսզի կարողանանք կորսվածներին ցույց տալ դեղի Հիսուս սանող ուղին։**



երկնքի արքայությունը նման է արտի մեջ թաքցված գանձի: (Մատթ. 13.44)

## **ԿՈՐՈՒՄՏ ՉԿԱ**

**Ը**նկերս՝ Ռուելը, մասնակցում էր իրենց դասարանցիների հերթական հավաքին, որն անցկացվում էր դասընկերոջ տանը: Մանիլայի ծովածոցում գտնվող շքեղ դղյակը 200 այցելու կարող էր տեղավորել, և այդ փաստից Ռուելը մի փոքր նեղվել էր:

«Ես շատ ուրախ տարիներ եմ անցկացրել՝ լինելով հեռավոր գյուղական մի եկեղեցու հովիվը: Գիտեմ, որ լավ չէ, սակայն ես այդ օրը նախանձեցի դասընկերոջս նյութական հարստությանը և սկսեցի մտածել, թե որքան տարբեր կարող էր լինել իմ կյանքը, եթե հովիվ լինելու փոխարեն ես էլ դառնայի գործարար», -ասաց նա և ժպտալով շարունակեց. «Բայց շուտով ես հասկացա, որ նախանձելու բան չկա: Ես կյանքս նվիրել եմ Աստծուն ծառայելուն, որի արդյունքները հավիտենական են»: Այս խոսքերն ասելիս Ռուելի հայացքը խաղաղ էր:

Այդ խաղաղությունը նա ստացել էր Մատթեոսի Ավետարանի 13. 44-46-ում Հիսուսի պատմած առակներից: Նա գիտեր, որ Աստծո թագավորությունը գերազույն գանձն է: Նրա արքայությունը փնտրելու կենսակերպը կարող է տարբեր լինել: Ոմանց համար դա կարող է նշանակել ամբողջովին նվիրվել հոգևոր ծառայության, մյուսների համար՝ ավետարանի համաձայն ապրել նաև աշխարհիկ աշխատավայրում:

Անկախ նրանից, թե Աստված մեզ օգտագործելու որ ձևն է ընտրում, մենք կարող ենք վստահորեն հնազանդվել Նրա առաջնորդությանը: Այս աշխարհում ամեն ինչն էլ չափազանց քիչ արժեք ունի, քան Աստծուն հետևելով մեր ձեռք բերածը (Ա. Պետ.1. 4-5):

**Աղոթք** - Հայր, թող կյանքիս յուրաքանչյուր օրը լինի այն գանձատունը, որ գտել եմ Քո մեջ: Ամեն:

**Հաճախ ցանկություն եմ ունենում ավելիս կամ ավելի լավը ունենալ, սակայն հիշեմ, որ Աստծո թագավորությունը ինձինս արժեքավոր գանձ է:**

Երեխային կրթի՛ր իր ճանապարհին համապատասխան, որով ընթանալու է, և նա իր ծերության ժամանակ չի խոտորի դրանից: (Առ. 22.6)

## **ՉՅՐԱՊՈՒՐԿԵԼ «ՇՈՂՇՈՂՈՒՆ» ԻՐԵՐՈՎ**

**1** 960-ականներին «Էնդի Գրիֆիթ շոու» ամերիկյան հեռուստատեսային սերիալի հերոսներից մեկն Էնդիին ասում է, թե որոշել է թույլ տալ, որ որդին ապրի՝ ինչպես ինքն է կամենում: Էնդին չի համաձայնում.«Դուք չեք կարող այդպես վարվել, որովհետև երեխան բռնում է առաջին պատահած փայլուն առարկան: Հետո, երբ իմանա, որ դրա մեջ խայծ կա, արդեն ուշ կլինի: Սխալ գաղափարները ծրարված են լինում շողշողուն ու գրավիչ փաթեթների մեջ, և դժվար է լինում հակառակը համոզել»: Շոուի եզրակացությունն այն է, որ ծնողների համար կարևոր է ճիշտ վարքագիծ դրսևորել և օգնել իրենց երեխաներին «հեռու մնալ գայթակղությունից»:

Էնդիի խոսքերը կապված են Առակների գրքի իմաստնության հետ. «Երեխային կրթի՛ր իր ճանապարհին համապատասխան, որով ընթանալու է, և նա իր ծերության ժամանակ չի խոտորի դրանից» (Առ. 22.6): Այս խոսքերը ոչ թե սոսկ խրատ են, այլ իսկական ուղեցույցի արժեք ունեն: Մենք բոլորս կոչված ենք Հիսուսին հավատալու վերաբերյալ որոշում կայացնելու: Եվ դա կարող ենք անել Աստծո և Սուրբ Գրքի հանդեպ մեր սիրտ միջոցով: Կարող ենք աղոթել, որ երբ մեր խնամքի ներքո գտնվող փոքրիկները հասունանան, որպես Փրկիչ ընտրեն Քրիստոսին և քայլեն Նրա, այլ ոչ թե «նենգ մարդու ճանապարհով» (Հմ.5):

Սուրբ Հոգու հնարավորությամբ մեր հաղթանակը «փայլուն բաների» նկատմամբ նույնպես հզոր վկայություն է: Հիսուսի Հոգին օգնում է մեզ դիմակայել գայթակղությանը և մեր կյանքը դարձնել օրինակելի:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր ինձ՝ մանուկների սրտերում սերմանելու Քո արժեքները, որոնք Դու ես դրել իմ կյանքում: Ամեն:

**Օգտակար է հիշել, որ Առակների 22.6-ը ոչ թե խրատ է, այլ իմաստուն սկզբունք:**

Միմյանց հանդուրժելով ու ներելով: (Կող. 3.13)

## **ՆԵՐՈՂԱՄԻՏ ՍԵՐ**

**2** 021թ. մայիսի 31-ին ամուսնուս հորեղբայր Փիթն ու իր կինը նշեցին ամուսնության 80-ամյակը: 1941թ. պատահական հանդիպումից հետո, երբ Ռութը դեռ դպրոցական էր, նրանք սիրահարվեցին, և աղջկա՝ դպրոցն ավարտելու հաջորդ օրն իսկ զույգը փախավ: Նրանք հավատում են, որ իրենց միավորե և այս բոլոր տարիներին առաջնորդե է Աստված:

Անդրադառնալով ութ տասնամյակի իրենց ամուսնական կյանքին՝ Փիթն ու Ռութը համաձայնում են, որ իրենց հարաբերությունները ամուր պահելու բանալին ներողամտությունն է: Առողջ հարաբերությունների մեջ եղող յուրաքանչյուր անձ հասկանում է, որ մենք բոլորս էլ պարբերաբար ներման կարիք ենք ունենում, երբ վիրավորում ենք մեկին՝ խոստումը դրժելով, առաջադրանքը մոռանալով և այլն:

Աստվածաշնչում Պողոս առաքյալը անդրադառնում է ներման կարևորությանը: Ընթերցողներին հորդորելով, որ ընտրեն «գուլթը, ողորմությունը, քաղցրությունը, խոնարհությունը, հեզությունն ու համբերատարությունը» (Կող. 3.12)՝ Պողոսն ավեացնում է. «Միմյանց հանդուրժելով ու ներելով, եթե մեկը մյուսի դեմ տրտունջ ունենա» (Հմ.13): Եվ որ ամենակարևորն է՝ «Այս ամենի վրա սե՛րը հագեք, որ կատարելության կապն է» (Հմ.14):

Պողոսի նշած հատկություններով ձևավորված հարաբերությունները օրհնություն են: Թող Աստված օգնի բոլորիս՝ զարգացնեու առողջ հարաբերություններ, որոնք կրնովթագրվեն սիրով ու ներողամտությամբ:

**Աղոթք** - Հիսուս, օգնիր, որ ներեմ ուրիշներին, այնպես, ինչպես Դու ես ներել ինձ: Ամեն:

**Սեր հարաբերություններն ամրադնդվում են ներողամտությամբ և բացառվելու միջոցով:**

Նա ընդմիշտ չի բարկանա և ոխ չի պահի հավիտյան: (Սաղմ. 103. 9)

## **ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՔԵՉ ԵՎ ԻՆՉ ՀԱՄԱՐ**

**Թ**ագավարակի պատճառած անհարմարություններից մեկը զբոսաշրջային նավերի կանգնեցումն ու ախտահանման կետում ուղևորներին մեկուսացնելն էր: «Ուռլ սթրիթ» թերթը մի հոդված էր հրատարակել, որում ներառել էր զբոսաշրջիկների հետ հարցազրույցներ: Ուղևորներից մեկը կատակով ասե էր, որ ախտահանման սենյակում լինել հնարավորություն է տալիս ավել երկար ու անկեղծ խոսելու, և իր ամուսինը այդ ընթացքում պատմել է իր երբևէ կատարած օրինազանցությունների մասին:

Նման խոստովանությունները կարող են ժպիտ առաջացնե, հիշեցնել մարդկայնության մասին, կամ դառնալ զգուշացում, որ բաց թողնենք որոշ բաներ, որոնք ամուր բռնելու սովորություն ունենք: Ի՞նչն է մեզ օգնում բարյացակամ լինել նույնիսկ մեզ վիրավորողների հանդեպ. Աստծո մասին նկարագրությունները, որոնք կան օրինակ 103-րդ Սաղմոսի 8-12-ում:

Ուշագրավ է հատկապես 8-10-ի հետևյալ պատգամը. «Բարեգութ և ողորմած է Տերը, համբերատար է և զթառատ: Նա ընդմիշտ չի բարկանա և ոխ չի պահի հավիտյան: Նա մեզ հետ չի վարվում մեր մեղքերի համեմատ և մեզ չի հատուցում մեր անօրենությունների համաձայն»: Աստվածաշունչը օգնում է ևս մեկ անգամ խորհել հատուցում պահանջելու կամ պատժելու մեր ծրագրերի մասին: Իսկ դա կմղի, որ ողորմությամբ և ներումով ազդեցնք մեզ ու նրանց համար, ում փորձում էինք պատժել:

**Աղոթք** - Ո՛վ Հայր, օգնի՛ր ինձ շնորհք ու ողորմություն հայտնե նրանց, ովքեր ցավ են պատճառում ինձ: Ամեն:

**Ցանկություն կունենանք մեր հանդեպ վաս վարվողներին վնասե կամ ցավ դասճառել: Բայց կարելի է շնորհի ու ներողամտություն ցուցաբերելով՝ աղոթել:**

Ամեն մեկը թող ըստ իր սրտի հոժարության տա և ոչ թե տրտմությամբ կամ հարկադրաբար, որովհետև Աստված սիրում է հոժարությամբ տվողին: (Բ. Կորնթ. 9.7)

## **ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՎԵՐԱՐԿՈՒՆ**

**Բ**րենդան քայլում էր դեպի շուկայի ելքը, երբ հանկարծ ցուցափեղկի վրա նկատեց վարդագույն մի վերարկու: «Օ՛, այն որքա՛ն դուր կգա Հոլիին», - մտածեց նա: Նրա ընկերուհին միայնակ մայր էր: Բրենդան գիտեր, որ նա ուներ վերարկուի կարիք, բայց երբեք այդքան գումար չէր տա իրեն վերարկու գնելու համար: Նա վճարեց վերարկուի համար և արագ կազմակերպեց դրա առաքումը: Նաև մի անանուն բացիկ ավելացրեց, որի վրա գրեց. «Դու շատ սիրված ես»: Ուրախ իր կատարածով աղջիկը նստեց մեքենան:

Սրտանց արված նվիրատվությունը ուրախություն է պարզեղում: Պողոսը կորնթացիներին առատաձեռնություն է կոչում՝ ասելով. «Ամեն մեկը թող ըստ իր սրտի հոժարության տա և ոչ թե տրտմությամբ կամ հարկադրաբար, որովհետև Աստված սիրում է հոժարությամբ տվողին» (Բ. Կորնթ. 9.7): Առաքյալը նաև ասում է. «Ով խնայողաբար է սերմանում, խնայողաբար էլ կհնձի» (Հմ.6):

Երբեմն մենք գումար ենք դրում եկեղեցու հանգանակությունների տուփի մեջ, մեկ այլ առիթով առցանց նվիրատվություն ենք անում որևէ արժանի ծառայության համար: Աստծո առաջնորդությամբ ընկերոջ կարիքին ենք արձագանքում և այլն: Այդ նվիրատվությունը կարող է տարբեր չափերի ու տեսակի լինել. մեկ պարկ մթերք, մեկ արկղ վառելիանյութ, կամ... մեկ վարդագույն վերարկու:

**Աղոթք** - Սիրող Հայր, Դու մեզ տվեցիր Որդուդ պարզև, որը մենք ուզում ենք տալ ուրիշներին: Թող որ լսենք ուրիշների կարիքները բավարարելու Քո մեղմ հորդորը: Ամեն:

**Եթե հավատում եմ, որ Աստված հոգում է մեր կարիքները, ի նշան երախտագիտության՝ մենք էլ մեր հերթին անենք լավագույնը ուրիշների կարիքները հոգալու համար:**

Ուրեմն նրա շնորհի աթոռին համարձակությամբ մոտենանք, որպեսզի ողորմություն ստանանք ու շնորհ գտնենք մեզ օգնության պատեհ ժամին: (Եբ. 4.16)

## ՍԱՐՍԱՓԻ ՅՈՑ ՐՈՊԵ

**Ե**րբ 2021-ի փետրվարի 18-ին Մարսի վրա վայրէջք կատարեց «Համառություն» կոչված տիեզերանավը, դրա ժամանմանն սպասողները «սարսափի յոթ րոպե» ունեցան: Ավարտելով 292 միլիոն մղոնանոց ճանապարհորդությունը՝ տիեզերանավը ինքնուրույն պետք է կատարեր վայրէջքի բարդ ընթացքը: Մարսից դեպի Երկիր ազդանշանները տևում են մի քանի րոպե, իսկ ՆԱՍԱ-ն վայրէջքի ժամանակ չկարողացավ դրանք լսել «Համառություն»-ից: Շփման բացակայությունը սարսափազդու էր նրանց համար, ովքեր այդքան ջանք ու եռանդ էին ներդրել այդ առաքելության համար:

Երբեմն մենք էլ ենք ունենում վախի կամ սարսափի պահեր, երբ ազդեցում ենք, սակայն պատասխան ազդանշաններ չենք լսում Աստուծոց: Սուրբ Գրքում կան մարդիկ, որ շատ արագ են ստանում իրենց ազդեցի պատասխանները (տե՛ս Դան. 9. 20-23), և մարդիկ, որ երկար են սպասում (տե՛ս Աննայի պատմությունը Ա. Թագ. 1.10-20): Թերևս ուշացած պատասխանի ամենավառ օրինակը, որ սարսափեցրել էր Մարիամին ու Մարթային, այն էր, որ նրանք Հիսուսին խնդրել էին օգնել իրենց հիվանդ եղբորը՝ Ղազարոսին (Հովհ. 11.3), բայց Հիսուսն ուշացավ, և Ղազարոսը մահացավ (Հմ. 6-7, 14-15): Սակայն չորս օր անց Քրիստոսը պատասխանեց նրանց ազդեցին՝ հարուստություն տալով եղբորը (Հմ. 43-44):

Ազդեցների պատասխանին սպասելը կարող է դժվար լինել: Բայց Աստված կարող է օգնել մեզ, եթե «նրա շնորհի աթոռին համարձակությամբ մոտենանք, որպեսզի ողորմություն ստանանք ու շնորհ գտնենք մեզ օգնության պատեհ ժամին» (Եբ. 4.16):

**Աղոթք** - Հայր, Դու գիտես՝ ինչ կա իմ սրտում: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ վստահեմ Քեզ, երբ սպասում եմ պատասխանիդ: Ամեն:

**Հաճախ է դաստիարակում, որ մեր աղոթքի դասասխանը չենք ստանում: Ասված այդպիսով ուզում է մեր հավասն ավելացնել:**

Կվազեն և չեն հոգնի, կզնան և չեն նվաղի: (Ես. 40. 31)

## **ԶՈՒՐ ԶԱՆՔԵՐ**

«**Ե**ս այլևս չեմ կարող այսպես շարունակել: Գիտեմ, որ Աստված ինձ կոչել է հիվանդապահուհի լինելու, սակայն ես արդեն ֆիզիկապես և հոգեպես սպառված եմ», - հուսահատված ու լացակումած ասաց ընկերուհիս, երբ խոսում էինք համաճարակի ժամանակ իր կատարած ծանր աշխատանքի մասին: Ես նրան խորհուրդ տվեցի խնդրել Աստծուց, որ տա իր փնտրած ուղղութիւնը և համբերելու տոկունութիւն: Ընկերուհիս այդպես էլ վարվեց, սկսեց աղոթել: Շատ չանցած՝ նա աշխուժացավ, դարձավ ավելի նպատակասլաց, քաջալերվեց շարունակել հիվանդապահուհու իր աշխատանքը; Ընդ որում, սկսեց ծառայել ավելի շատ մարդկանց՝ գնալով երկրի տարբեր հիվանդանոցներ:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք միշտ կարող ենք օգնութիւն ու քաջալերանքի համար դիմել Աստծուն, եթե ծանրաբեռնված ենք: Քանի որ «նա չի հոգնի և չի թուլանա» (Ես. 40. 28): Եսայի մարգարեն ասում է, որ մեր Հայրը, որ երկնքում է «հոգնածին ուժ տվողն է, կարողութիւնն չունեցողի զորութիւնն ավելացնողը» (Հմ.29): Աստծո զորութիւնը հավիտենական է, և Նա գիտի, որ երբեմն մենք ֆիզիկապես ու հոգեպես հոգնում և ուժասպառ ենք լինում (Հմ.30): Եվ երբ մենք, փոխանակ միայնակ դիմագրավելու կյանքի մարտահրավերները, Աստծուց ենք խնդրում ուժ, Նա վերականգնում ու նորոգում է մեզ, տալիս մեր ընթացքը հավատքով շարունակելու վճռականութիւն:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ օգնեցիր ինձ, երբ կյանքի դժվարութիւններն անտանելի էին թվում: Ամեն:

**Կյանքի ճնշող իրավիճակները միայնակ հաղթահարելու փոխարեն դիմենք Աստծո օգնությանը:**

Հիշիր քո Տեր Աստծուն: (Բ. Օր. 8.18)

## **ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅՊԱՆՈՂԸ**

**1** 919 թ. հունվարի 15-ին Բոստոնում պայթեց արկոհողային գործարանի պահեստի հսկայական տակառներից մեկը, որի հետևանքով օշարակը հեղեղեց քաղաքը՝ մեծ արագուլթյամբ քշելով մարդկանց, երկաթուղային վագոններ, շենքեր: Այդ անսովոր աղետից 21 մարդ մահացավ, ավելի քան 150-ը վիրավորվեց:

Երբեմն նույնիսկ լավ բաները, ինչպես այս պարագայում օշարակը, կարող են անսպասելիորեն հեղեղել մեզ: Նախքան իսրայելցիները Աստծո խոստացած երկիրը կմտնեին, Մովսեսը նրանց զգուշացրեց ստացած բարիքները չվերագրել իրենց կարողություններին և չմեծամտանալ. «Ձլինի թե ուտես ու կշտանաս, գեղեցիկ տներ կառուցես ու դրանց մեջ բնակվես, քո արջառներն ու հոտերը շատանան, քո արծաթն ու ոսկին շատանա, քո ունեցած ամեն ինչը շատանա և հետո սիրտդ գոռոզանա, ու մոռանաս քո Տեր Աստծուն:.... Այլ հիշի՛ր քո Տեր Աստծուն, որովհետև Նա է այդ հարստությունը ձեռք բերելու համար քեզ ուժ տվողը» (Բ. Օր. 8. 12-14, 18):

Իդրո լավ բաները, ներառյալ ֆիզիկական առողջությունն ու ապրուստ վաստակելու հմտությունները օրհնություններ են, որ դալիս են մեր սիրառատ Աստծուց: Նույնիսկ եթե մենք քրտնաջան աշխատում ենք, նա է մեզ աջակցում: Նրա տված օրհնություններն ընդունենք բաց ձեռքով և երախտագիտությունով փառաբանենք Իրեն՝ մեր հանդեպ ունեցած այդ բարության համար:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ ինձ աջակցում ես: Օգնիր, որ ճանաչեմ քո բարությունը, որպեսզի դրա մասին պատմեմ ուրիշներին: Ամեն:

**Ասված բազմաթիվ բարիքներ է տալիս մեզ: Շնորհակալ լինենք Իրեն՝ մեզ օրհնություններ սվողին ու դաժողանողին:**





Երանի՜ սգավորներին: (Մատթ. 5.4)

## **ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԵՉ**

**Է**լեկտրոնային նամակ ստացա անգլիացի մի երիտասարդից, որը պատմում էր, թե իր 63-ամյա հայրը մահամերձ է, և խնդրում էր քաջալերական աղոթքներ ու պատգամներ ուղարկել: Մենք ծանոթ չէինք, բայց հիվանդի և իմ աշխատանքային ոլորտներն ընդհանրություն ունեին: Ու ես, զգացված որդու հոգատարությունից, ձայնագրեցի և ուղարկեցի կարճ հաղորդագրություն ու աղոթքի տեսաերիզներ: Տղան ինձ հայտնեց, որ հայրը նայել է դրանք ու հավանություն հայտնել, բայց, ցավոք, մի քանի օր անց մահացել է՝ վերջին շնչում բռնելով կնոջ ձեռքը:

Սիրտս ցավեց: Այսպիսի սեր և ավերածություն: Ընտանիքը այդքան շուտ կորցրեց իր սիրելի հորն ու ամուսնուն: Այս առումով զարմանալի էր լսել, թե ինչպես է Հիսուսը պնդում. «Երանի՜ սգավորներին» (Մատթ. 5.4): Հիսուսը չի ասում, թե տառապանքն ու վիշտը լավ են, այլ ասում է, թե Աստծո ողորմությունն ու բարությունը կլցվեն նրանց վրա, ովքեր ավելի շատ կարիք ունեն Աստծո ուշադրության ու մխիթարության, և խոստանում է մեզ, որ նրանք կմխիթարվեն (հմ.4):

Աստված քայլում է դեպի մեզ՝ դեպի Իր որդիները (հմ.9) և օրհնում է մեզ նույնիսկ մեր արցունքների մեջ:

**Աղոթք** - Հայր, վշտի ու կսկիծի մեջ եմ: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ՝ զգալու Քո օրհնությունը նույնիսկ արցունքներիս մեջ: Ամեն:

**Վիճ ու ցավ ենք դիմագրավում, բայց Հիսուսի օրհնության խոսումը փոխում է մեր վերաբերմունքը վճի հանդեպ:**

Աշակերտն իր ուսուցչից բարձր չէ, բայց կատարյալ դարձած ամեն ոք իր ուսուցչի պես կլինի: (Պուկ. 6.40)

## **ՄԵՐ ՄԵԾ ՌԻՍՈՒՑԶԻ ՆՄԱՆ**

Համացանցում տարածվել էր մի տեսանյութ երեք տարեկան կարատեխատուհու մասին, որը ձգտում էր նմանվել իր ուսուցչին: Սկզբում փոքրիկը տարիքին ոչ հարիր կրքոտությամբ ու համոզվածությամբ մարզչի հետ արտասանում է իրենց երդումը, ապա շատ ուշադիր սկսում ընդօրինակել ուսուցչի արածները: Եվ դա բավական լավ է ստացվում նրա մոտ:

Մի օր Հիսուսն ասաց. «Աշակերտն իր ուսուցչից բարձր չէ, բայց կատարյալ դարձած ամեն ոք իր ուսուցչի պես կլինի» (Պուկ. 6.40): Աշակերտներին Նա ասաց, որ Իրեն ընդօրինակելը կնշանակի լինել առատաձեռն, սիրող ու չգատող (Հմ.37-38), հասկանալ, թե ում են հետևում. «Մի՞թե կարող է կույրը կույրին առաջնորդել, չէ՞ որ երկուսն էլ փոսը կրնկնեն» (Հմ.39): Նրա աշակերտները պիտի հասկանային, որ կույր առաջնորդի մասին ակնարկը վերաբերում էր փարիսեցիներին, որոնք մարդկանց դեպի աղետ էին տանում (Մատթ. 15.14): Պիտի հասկանային նաև իրենց Ուսուցչին հետևելու կարևորությունը: Այսպիսով՝ Քրիստոսի աշակերտների նպատակն էր նմանվել Տեր Հիսուսին: Ուստի նրանց համար կարևոր էր ուշադիր լինել հատկապես առատաձեռնությունից և սիրո մասին Քրիստոսի հրամանին և կատարել այն:

Որպես հավատացյալներ՝ որ այսօր ձգտում ենք նմանվել Հիսուսին, եկե՛ք մեր կյանքը հանձնենք մեր Վարպետ Ուսուցչին, որպեսզի կարողանանք նմանվել Նրան՝ իմաստնությունից ու վարքով: Միայն Նա կարող է օգնել մեզ, որպեսզի արտացոլենք իր առատաձեռն ու սիրառատ ուղիները:

**Աղոթք** - Դիսու՛ս, իմ մեծ Ուսուցիչ, օգնի՛ր, որ իմ կարգապահությունն ու ուշադրությունը արժանի լինեն Քեզ: Ամեն:

**Դիսուսին նմանվելու համար Նրա կյանքի ո՞ր մասը կուզենաս ընդօրինակել, եթե նույնիսկ դրանք դժվար թվան:**

Ձեզ մոտ պանդխտության եկած օտարականը ձեր երկրի տեղաբնակի պես թող լինի ձեզ համար: (Ղևտ.19. 34)

## ՄԵՆՔ ՕՏԱՐԱԿԱՆ ԵՆՔ

**Ա**նձանոթ երկրում նրանց համար ամեն ինչ տարբեր էր. լեզու, դպրոց, սովորություններ, երթևեկություն, կլիմա: Ինչպե՞ս էին հարմարվելու: Մոտակա եկեղեցու անդամները պատրաստ էին օգնել նորեկներին: Բեթթին որոշեց զույգին տանել շուկա՝ գնումների և ծանոթացնելու տեղական մթերքներին: Շուկայում թափառելիս հանկարծ նրանք ուրախացան՝ տեսնելով իրենց ծանոթ ու սիրելի պտուղը՝ նուռը: Նեցին իրենց երեխաների համար, մեկն էլ տվեցին Բեթթին՝ իբրև շնորհակալություն արտահայտություն: Փաստորեն այդ միբզը և նոր ընկերները մեծ մխիթարություն եղան այդ մարդկանց համար՝ այդ տարօրինակ ու անձանոթ երկրում:

Աստված Մովսեսի միջոցով Իր ժողովրդին տվեց օրենքների ցանկը, որը ներառում էր նաև մի պատվիրան, թե ինչպես է պետք վարվել օտարականների հետ. «Ձեզ մոտ պանդխտության եկած օտարականը ձեր երկրի տեղաբնակի պես թող լինի ձեզ համար» (Ղևտ.19. 34): «Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ», - այս խորհուրդը Հիսուսն անվանել է երկրորդ մեծ պատվիրանը Աստծուն սիրելուց հետո (Մատթ.22.39), որովհետև «Տերը պահում է պանդխտներին» (Մաղմ. 146. 9):

Աստծուն հնազանդվելուց բացի՝ մեր երկրի կյանքին հարմարվելու գործում մեր ընկերներին օգնելիս հիշենք, որ իրականում մենք նույնպես «օտարներ ենք երկրի վրա» (Յբ. 11.13) և մեծանում ենք գալիք նոր երկնային կյանքի ակնկալությամբ:

**Աղոթք** - Կարեկից ու ողորմած Աստված, ես շատ չեմ հասկանում, թե ինչ է նշանակում այս աշխարհում օտար լինել: Առաջնորդի՛ր ինձ, որ կարողանամ քաջալերել պանդուխտներին ու օտարականներին: Ամեն:

**Ասված Իր սիրով մոտենում է մեզ, որդեսոցի կարողանանք հոգսանել ուրիշների մասին:**

Ինձ Նոեմի մի՛ կոչեք, ինձ Մարա՛ կոչեք, որովհետև Ամենակարողը դառնուրթյամբ լցրեց ինձ: (Քրիստոս 1.20)

## **Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՆԴ**

**Ա**ռաջին ամուսնու մահից հետո Ջենին նորից ամուսնացավ: Բայց երկրորդ ամուսնու երեխաները նրան չընդունեցին, և հիմա, երբ արդեն իրենց հայրն էլ է մահացել, ատում են իրեն: Ամուսինը մի համեստ գումար է թողել Ջենինի ապահովության համար, և երեխաները դա գողություն են համարում: Հասկանալի է, որ կինը հուսահատված է ու դառնացած:

Նոյեմիի ամուսինը ընտանիքը տեղափոխեց Մովաբ, որտեղ նա և որդիները մահացան: Տարիներ անց Նոյեմին դատարկաձեռն վերադարձավ Բեթղեհեմ՝ իր հետ ունենալով միայն հարսին՝ Հուլիան: Հուլիան քաղաքը հարցրեց. «Մա՞ է Նոյեմին» (Հուլի 1.19): Նա արգելեց իրեն այդ անունով կոչել, որը նշանակում էր «Իմ հաճելին»։ «Ինձ Մարա՛ կոչեք, որովհետև Ամենակարողը դառնություն է լցրեց ինձ: Ես լիքը գնացի, բայց Տերն ինձ դատարկ ետ դարձրեց» (Հմ 1.20-21):

Հնարավոր է, որ ձեր անունը նույնպես «Դառնություն» է նշանակում, դուք հուսախաբված եք ու դառնացած, ստացել եք ոչ այն, ինչին արժանի եք:

Նոյեմին դառնացած, բայց վերադարձավ Բեթղեհեմ: Դու նույնպես կարող ես վերադառնալ: Ե՛կ Բեթղեհեմ՝ այնտեղ ծնված Հիսուսի մոտ և հանգստացի՛ր Նրա սիրով:

Ժամանակի ընթացքում Աստված Նոյեմիի դառնությունը փոխարինեց իր կատարյալ ծրագրի կատարմամբ (4.13-22):

**Աղոթք** - Յայր, տուն կգամ, որպեսզի գտնեմ իմ հանգիստը: Ամեն:

**Ի՞նչ անուն է բնութագրում քեզ: Ի՞նչ է նշանակում քեզ համար այդքան այն անունը, որը նկարագրում է քեզ Յիսուսի հետ:**

Հողը առաջվա պես երկրին պիտի դառնա, հողին պիտի դառնա Աստուծո մոտ, որ այն տվել էր: (Ժող. 12.7)

### **ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՄԻԱՅՆ ՊԱՏԿԵՐԱԶՆԵԼ**

**Պ**աշտամունքի ժամանակ ես նստեցի եկեղեցու նստարաններից մեկին, մի կնոջ հետևում, երբ խումբն սկսեց նվագել «Ես միայն կարող եմ պատկերացնել» երգը: Ձեռքերս բարձրացնելով՝ ես էլ փառաբանեցի Աստծուն, քանի որ կնոջ սուրբանոն շատ ներդաշնակ էր իմ ձայնին: Երբ իմացա նրա առողջական հարցերի մասին, մենք որոշեցինք միասին աղոթել իր բուժման ընթացքի համար: Մի քանի ամիս անց Լուիզն ասաց, որ վախենում է մահից: Հենվելով իր մահճակալին, գլուխս մոտեցրի իրեն, աղոթեցի և մեղմ երգեցի մեր երգը: Ես միայն կարող եմ պատկերացնել, թե ինչպես է ընդամենը մի քանի օր հետո Լուիզը փառաբանել Տեր Հիսուսին արդեն դեմ առ դեմ հանդիպելով Նրան: Պողոս առաքյալը իր մահամերձ ընթերցողներին մխիթարում էր, որ երկրային տունը փոխարինելու են հավիտենական անձեռագործ տնով (Բ.Կորնթ. 5.1): «Եվ հենց դրա մեջ հառաչում ենք՝ ցանկանալով մեր երկնային բնակությունը հագնել» (Հմ.2), և մեր հույսը խարսխված է մեր երկնային բնակավայրում Հիսուսի հետ մեր հավիտենական գոյություն վրա (Հմ.4): Եվ քանի որ Աստված ծրագրել է մեզ տալ «Հոգու առհավատչյա, իսկ այս մարմնի մեջ մնալով՝ հեռու ենք Տիրոջից» (Հմ.5-6), «նախընտրում ենք այս մարմնից դուրս գալ և Տիրոջ մոտ մտնել: Որովհետև մենք բոլորս պետք է ներկայանանք Քրիստոսի ատյանի առաջ, որպեսզի ամեն մեկն իր մարմնով ստանա իր արարքի հատուցումը՝ բարի կամ չար» (Հմ.7-10): Իսկ մինչ այդ կարող ենք ուրախանալ Նրա ներկայություն մշտական խաղաղություն: Ի՞նչ ենք զգալու մեր երկրային մարմինը թողնելու և Հիսուսին միանալու պահին, կարող ենք միայն պատկերացնել:

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ, որ խոստանում ես ինձ հետ լինել երկրի վրա և հավիտենության մեջ: Ամեն:

**Մտախոսվում ենք մեր կամ սիրելի մահվան դառն իրականության համար, բայց Աստծո սված հավիտենության խոսուումը փառալերում է մեզ:**

Յոսփատի տերը բռնեց ու բանտ նետեց նրան... և նա այնտեղ՝ բանտում էր: Բայց Տերը Յոսփատի հետ էր և ողորմություն ցույց տվեց նրան: (Ծն. 39. 20-21)

## **ԱՄԵՆԱՄԻԱՅՆԱԿ ՄԱՐԴԸ**

**1** 969 թ. հուլիսի 20-ին Նիլ Արմսթրոնգն ու Բազ Օլդրինը Ադաման առաջին մարդիկ, որոնք ոտք դրեցին Լուսնի մակերևույթին: Մակայն խմբում կար նաև երրորդ անդամը՝ փորձարկող օդաչու Մայքլ Քոլինզը, որն Ապոլոն-11 տիեզերանավով թռչում էր Լուսնի շուրջ:

Երբ անձնակազմի իր ընկերները իջան Լուսնի վրա, Քոլինզը Լուսնի մյուս կողմում միայնակ սպասում էր: Նա կապ չուներ ոչ ընկերների, և ոչ էլ Երկրի վրա գտնվող որևէ մեկի հետ: ՆԱՍԱ-ի առաքելության ղեկավարը հետազայում մեկնաբանել է. «Ադամից ի վեր որևէ մեկը չէր եղել այնքան միայնակ, որքան Մայքլ Քոլինզը»:

Լինում են դեպքեր, երբ մենք ամբողջովին մենակ ենք զգում: Կարելի է պատկերացնել օրինակ, թե ինչ ապրումներ ունեցավ Հակոբի որդի Հովսեփը, երբ նրա եղբայրները վաճառեցին իրեն, և իսմայելացիները նրան տարան Եգիպտոս (Ծն.37. 23-28): Դրանից հետո նա ավելի մեծ մեկուսացման մեջ ընկավ, երբ կեղծ մեղադրանքներով բանտ նետվեց (39.12-20):

Ինչպե՞ս կարողացավ Հովսեփը օտար երկրի բանտում, իր ընտանիքից հեռու ողջ մնալ: Գաղտնիքն այն է, որ «այնտեղ՝ բանտում Տերը Հովսեփի հետ էր» (Հմ.20-21): Ծննդոց 39-ում չորս անգամ հիշատակվում է այս մխիթարական ճշմարտությունը: Պատահե՞լ է, որ դու էլ մենակ ու մեկուսացած զգաս: Կառչի՛ր Աստծո ներկայությունը ճշմարտությունը, որ խոստացել է Հիսուսը, երբ ասում էր. «Ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28.20): Քո Փրկիչ Հիսուսի հետ դու երբեք մենակ չես լինի:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ իմանալ, որ ինչպես խոստացել ես Քո Սուրբ Խոսքում, ինձ հետ ես, ինչպես Յոսփատի հետ էիր: Ամեն:

**Մենակության զգացումն անխուսափելի է, սակայն Ասված մեզ հիշեցնում է, որ Ինքը մեզ հետ է:**

Ինչպես որ հովիվն է որոնում իր հոտը, երբ իր ցրված հոտի մեջ է, այնպես պիտի որոնեն իմ ոչխարներին: (Եզ. 34. 12)

## **ԲԱՐԻ ՀՈՎԻՎ**

**Ե**րբ հովիվ Ուարընն իմացավ, որ իր եկեղեցու անդամներից մեկը լքել է կնոջն ու երեխաներին, Աստուծոց խնդրեց, որ օգնի հանդիպել այդ մարդուն: Աստված կատարեց հովիվի խնդրանքը: Ուարընը մտավ ճաշարան և նկատեց այդ մարդուն, որ միայնակ նստած էր: «Մեկ այլ քաղցած մարդու տեղ կա՞, - մոտենալով հարցրեց հովիվը, և նրանք սկսեցին զրուցել: Վերջում արդեն միասին աղոթեցին:

Որպես հոգևոր մշակ՝ Ուարընը հովվություն էր անում եկեղեցական իր համայնքում, ինչպես որ Աստված էր Եզեկիել մարգարեի միջոցով խոստացել հոգ տանել Իր ցրված ոչխարներին, փրկել ու հավաքել նրանց (Եզ. 34. 12-13): «Նրանց լավ արոտում պիտի արածեցնեմ, ... կորածին որոնելու եմ և մոլորվածին հետ եմ բերելու: Կոտրածը պիտի վիրակապեմ և հիվանդին գորացնեմ» (Հմ. 14-16): Այս խոստումներից յուրաքանչյուրում երևում է Աստծո սերն Իր ժողովրդի հանդեպ: Թեև Եզեկիելի խոսքերը Աստծո ապագա գործողությունների մասին են, սակայն զրանք արտացոլում են Աստծո և հովիվ հավիտենական սիրտը, որ պետք է հայտնվեր Հիսուսի անձով:

Անկախ մեր իրավիճակից՝ Աստված հասնում է մեզանից յուրաքանչյուրին՝ ձգտելով փրկել ու պատսպարել «հարուստ արոտավայրերում»: Նա ուզում է, որ մենք հետևենք Բարի Հովիվին, նրան, որ Իր կյանքն է տալիս Իր ոչխարների համար (տե՛ս Հովհ 10. 14-15):

**Աղոթք** - Սիրելի Հայր, Դու ինձ սիրում ես նույնիսկ այն ժամանակ, երբ մոլորված թափառում եմ: Օգնի՛ր ինձ միշտ մնալ Քո ոչխարների փարախում, որպեսզի կարողանամ ստանալ Քո սերն ու խնամքը: Ամեն:

**Մեր սկարությունների, ցավերի ու թեմառության մեջ դիմենք Բարի Հովիվին, որը կհոգա մեր բոլոր կարիքները:**

Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու և մաքրելու մեզ ամեն անհրաժեշտությամբ: (Ա.Յովհ. 1.9)

## **ԱՍԾՈՆ ԲԱԶՈՒԿՆԵՐԸ ՄԻՇՏ ԲԱՅ ԵՆ**

**Մ**տահոգ նայեցի հեռախոսիս ու հառաչեցի: Անհանգիստ էի: Ընկերուհուս հետ վիճել էի երեխաների հետ կապված մի տարածայնություն պատճառով: Գիտեի, որ պետք է զանգեմ ու ներողություն խնդրեմ: Բայց իմ տեսակետը չէր փոխվել, և մեր վերջին խոսակցություն ժամանակ ես մի փոքր կոպիտ էի: «Իսկ եթե զանգեմ, ու ընկերուհուս չների՞, չուզենա՞ շարունակել մեր ընկերությունը», - մտածում էի: Այդ պահին հանկարծ հիշեցի մի երգի բառերը, որոնցով մի օր Աստծուն խոստովանել էի մեղքս: Թեթևություն զգացի, քանզի Նա ներել էր ինձ: Մենք չենք կարող վերահսկել, թե մարդիկ ինչպես կպատասխանեն, եթե փորձում ենք լուծել մեր հարաբերություններում առաջացած խնդիրները: Քանի դեռ մենք ընդունում ենք մեր սխալը, ուղղում ենք այն և խոնարհաբար ներողություն խնդրում, կարող ենք թույլ տալ, որ Աստված տնօրինի մեր բուժումը: Նույնիսկ եթե ստիպված լինենք դիմանալ մարդկանց «չլուծված խնդիրների» ցավին, Նրա հետ հաշտությունը միշտ էլ հնարավոր է: Աստծո բազուկները միշտ բաց են, և Նա սպասում է, որ մեզ ցուցաբերի անհրաժեշտ շնորհքն ու ողորմությունը: «Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու և մաքրելու մեզ ամեն անհրաժեշտությամբ» (Ա.Հովհ. 1.9):

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, հիշեցրու՛ ինձ Քո անսպառ շնորհքի մասին: Օգնի՛ր, որ ավելի խոնարհ լինեմ և իմ բոլոր հարաբերությունները հանձնեմ Քեզ: Ամեն:

**Եթե մեկի հետ սարածայնություն ունես, դիմի՛ր Ասծուն և խնդրի՛ր Նրա օգնությունը այդ հարցը լուծելու համար:**



Ով ինձ տեսավ, նա Հորը տեսավ: (Հովհ.14.9)

## ՏԵՍՆԵԼ ՀԻՍՈՒՄԻՆ

**Չ**որս ամսական Լիոն երբեք չէր տեսել իր ծնողներին, որովհետև ի ծնե շատ վատ տեսողություն ուներ: Ակնաբույժները երեխային հատուկ ակնոց տվեցին:

Լիոյի հայրը տեսաբերիզ էր հրապարակել, որտեղ երևում էր, թե ինչպես է արձագանքում երեխան, երբ առաջին անգամ ակնոցը դնում են աչքերին: Նրա աչքերը դանդաղ սկսում են կենտրոնանալ, և երբ առաջին անգամ տեսնում է մորը, ժպտը տարածվում է դեմքին: Այդ պահին փոքրիկ Լիոն հստակ տեսնում էր:

Հովհաննեսը պատմում է, թե ինչպես է Հիսուսը խոսել Իր աշակերտների հետ: «Փիլիպոսը նրան ասաց. «Տե՛ր, ցո՛ւյց տուր մեզ Հորը» (Հովհ. 14:8): Նույնիսկ այդքան ժամանակ անց էլ աշակերտները չէին կարողանում ճանաչել, թե ով է իրենց առաջ կանգնողը: Հիսուսը պատասխանում է. «Ձե՞ս հավատում, որ ես Հոր մեջ եմ, և Հայրն էլ իմ մեջ է» (հմ.10): Ավելի վաղ Նա ասել էր.«Ես եմ ճանապարհը, ճամարտությունն ու կյանքը» (հմ.6): Սա Հիսուսի «Ես եմ» յոթ հայտարարություններից վեցերորդն էր: Դրանք յուրատեսակ ոսպնյակներ են, որոնցով նայելու դեպքում կտեսնենք, թե ով է իրականում ինքը՝ Աստված:

Մենք էլ նման ենք այդ աշակերտներին: Դժվարությունների մեջ պայքարում ենք ու ձևավորում վատ տեսողություն: Չենք կենտրոնանում Աստծո արածների և անելիքների վրա: Երբ Լիոյի աչքերին դրեցին ակնոցը, նա հստակ տեսավ ծնողներին: Մենք էլ դենք մեր Աստծո ակնոցը, որպեսզի տեսնենք, թե իրականում ով է Հիսուսը:

**Աղոթք** -Հիսուս, խնդրում եմ օգնիր ինձ, որ հայացքս Քեզ ուղղեմ: Հստակ ցույց տուր ինձ համար Քո պատրաստած ճանապարհը: Ամեն:

**Հիսուսին տեսելու մեր փորձերը կարող են մշուժոտ ցույց տալ: Դարձյալ նայե՛մք Նրան մեր հոգու բաց աչքերով:**

Ես Տիրոջը կասեմ. «Իմ ապավե՛ն և իմ ամրո՛ց, իմ Աստված, որի վրա եմ հույսս դրել»: (Մաղմ. 91. 2)

## **Ե՛Վ ԱՍԾՈՆ ՏՈՒՆ**

**Մ**ի երեկո, երբ վազում էի մեր թաղամասի նորահառույցի մոտով, մի նիհար ու կեղտոտ կատվի ձագ մշավելով իմ հետևից եկավ մինչև տուն: Այսօր արդեն Միկին առողջ ու գեղեցիկ կատու է դարձել և վայելում է մեր ընտանիքի սերը: Ու ամեն անգամ, երբ անցնում եմ այդտեղով, գոհունակությամբ փառաբանում եմ Աստծուն, որ կենդանին փրկված է և տուն ունի:

91-րդ սաղմոսում խոսվում է նրանց մասին, ովքեր «Բարձր-յալի ծածկոցի տակ են բնակվում» (Հմ.1)՝ Աստծո մոտ: Այստեղ «բնակվել»-ը եբրայերեն նշանակում է «ընդմիջտ մնալ»: Երբ մենք մնանք Նրա սիրո մեջ, Նա մեզ կօգնի ապրել Իր իմաստ-նության համաձայն և սիրել Նրան ամեն բանից առավել (Հմ.14, Հովհ. 15.10): Աստված խոստանում է մեզ պարգևել հավիտյան Իր հետ լինելու, իսկ երկրի վրա մեր ունեցած դժվարությունների ժամանակ մեզ հետ լինելու ապահովությունը: Թեև դժվարությունները կարող են գալ, բայց մենք կարող ենք հանգստանալ Նրա գերիշխանության, իմաստնության ու սիրո մեջ, ինչպես նաև մեզ պաշտպանել ու փրկել Իր խոստումներով:

Երբ մենք Աստծուն դարձնում ենք մեր ապաստանը, «Ամենակարողի հովանու ներքո ենք հանգստանում» (Մաղմ, 91.1): Ոչ մի դժվարություն չի կարողանա հանդիպել մեզ, բացառությամբ նրանից, ինչը թույլ է տալիս Նրա անսահման իմաստ-նությունն ու սերը: Սա Աստծո անփոփանցելիությունն է՝ որպես մեր տունը:

**Աղոթք** -Երկնավոր Հայր, շնորհակալ եմ այն տան համար, որ ունեմ Քո մեջ: Ամեն:

**Մեր դիմագրաված բոլոր դժվարությունները օսնելի կլինեն, եթե Բարձրյալին դարձնենք մեր հովանավորը:**



Քրիստոս Յիսուսն աշխարհ եկավ փրկելու մեղավորներին, որոնցից առաջինը ես եմ: (Ա. Տիմ. 1. 15)

## **ՈՉ ԱՐԺԱՆԻ ՊԱՐԳԵՎ**

**Ը**նկերս վերջերս ինձ մի նվեր տվեց, որն ինձ շատ զարմացրեց: Չէի կարծում, որ ես արժանի եմ այդպիսի գեղեցիկ նվերի: Նա այդ ժեստն արել էր, երբ լսել էր իմ աշխատանքային ճնշվածություն մասին՝ չնայած այն հանգամանքին, որ ինքն էլ ունեւր բազում խնդիրներ (տարեց ծնողներ, ամուսնական լարված հարաբերություններ, աշխատանքային դժվարություններ): Անսպասելի նվերն ինձ այնքան հուզեց, որ ես լաց եղա: Իրականում մենք բոլորս էլ ստանում ենք այնպիսի նվեր, որին արժանի չենք: Պողոսը այսպես է ասում. «Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ փրկելու մեղավորներին, որոնցից առաջինը ես եմ» (Ա. Տիմ. 1. 15): Նա, որ «նախկինում հայհոյիչ, հալածող ու անարգող էր, ողորմություն գտավ, որովհետև գործել էր անգիտությունք, անհավատության մեջ լինելով: Իսկ մեր Տիրոջ շնորհն է՛լ ավելի մեծ եղավ հավատով ու սիրով» (Հմ. 13-14):

Հարություն առած Քրիստոսը Պողոսին տվեց անվճար պարգևի գիտակցումը, ինչի շնորհիվ նա հասկացավ, թե ինչ է նշանակում ստանալ պարգև, որին իրականում արժանի չես, և դառնալով Աստծո սիրո հզոր գործիքը՝ շատ մարդկանց պատմեց իր հետ պատահածի մասին:

Միայն Աստծո շնորհիվ է, որ մենք դատապարտության փոխարեն սեր ենք ստանում և դատաստանի փոխարեն՝ ողորմություն: Եկե՛ք այսօր հռչակենք Աստծո տված անզուգական շնորհը, փնտրենք այն, որպեսզի կարողանանք ուրիշներին ցույց տալ այն:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, օգնի՛ր ինձ, որ ավելի լիարժեք հասկանամ, թե ինչ է նշանակում Քո տված շնորհն ուրիշներին ցույց տալը: Ամեն:

**Եթե ինչ-ինչ լուրջաբանով կորցրել եմ շնորհի հրաշագործ յարգը, դարձյալ ոգևորվեմ Աստծո սկսած այդ շնորհով:**

Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Յիսուսն է Քրիստոսը՝ Աստուծո Որդին: (Յովհ. 20. 31)

## **ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊՈՑՈՒՅՑ**

**Ե**րբ անվանի կենսագիր Դորիս Քիրնս Գուդվինը նախաձեռնեց գրել Աբրահամ Լինքոլնի մասին, այն փաստը, որ Ամերիկայի 16-րդ նախագահի վերաբերյալ արդեն իսկ մոտ 14 հազար գիրք էր գրվել, նրան վախեցրեց: Ի՞նչ կարելի էր ասել ավելին այդ սիրելի առաջնորդի մասին: Բայց Գուդվինի աշխատանքի արդյունքը «Մրցակիցների թիմ. Աբրահամ Լինքոլնի քաղաքական հանճարը» գիրքը եղավ: Նրա թարմ պատկերացումները Լինքոլնի առաջնորդության աճի մասին գիրքը դարձրել են ամենաբարձր վարկանիշ ունեցողն ու ամենաշատ գրախոսվողը: Հովհաննես առաքյալը մեկ այլ դժվարության առաջ էր կանգնել, երբ գրում էր Հիսուսի ծառայության ու սիրո մասին: Հովհաննեսի Ավետարանի վերջին գլխում ասվում է. «Ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուսն արեց, որոնք եթե մեկ առ մեկ գրված լինեին, կարծում եմ, թե աշխարհն էլ բավական չէր լինի այդ գրքերը պարփակելու» (Հովհ. 21. 25): Հովհաննեսն ավելի շատ նյութ ուներ, քան այն, ինչ կարող էր օգտագործել:

Ուստի նա կենտրոնացավ մի քանի ընտրված հրաշքների (նշանների) վրա, որոնք հաստատում էին Հիսուսի «Ես եմ»-ները իր գրած Ավետարանում: Հետևաբար Հովհաննեսի այս ռազմավարության հետևում հավիտենական նպատակն էր. «Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստուծո Որդին» (Հովհ. 20.31): Հովհաննեսը այդ անվերջ ապացույցներից բացի բազմաթիվ այլ հիմնավորումներ էլ է տալիս Հիսուսին հավատալու համար: Ո՞ւմ կարող ենք այսօր պատմել Հիսուսի մասին:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, խնդրում եմ հավատս հաստատի՛ր հիմնավոր ապացույցներով, որպեսզի ես իսկապես ապրեմ Յիսուսի համար: Ամեն:

**Ասվածառուցը լի է Յիսուսի կյանքի ու հայտարարությունների վերաբերյալ աղացույցներով, որոնք կօգնեն մեզ հավաստիությամբ:**



Տերն ինձ հետ է, ես չեմ վախենում: (Սաղմ. 118. 6)

## **ԵՐԲ ՏԱԳՆԱՊԻ ՄԵՋ ԵՆՔ**

**Ը**նկերուհիս պատմեց, որ տարիներ առաջ շատ է վախեցել անցնել փողոցը, որտեղ հատվում էին մի քանի ուղիներ: «Ես երբեք նման բան չէի տեսել, երթևեկության իմ իմացած կանոնները անզոր էին թվում, ու ես վախեցած այնքան կանգնեցի, մինչև որ մի ավտոբուս մոտեցավ, որով անցա փողոցը: Քանի որ այդ խաչմերուկը թե՛ հետիոտնի, և թե՛ մեքենայի համար անասելի դժվար էր անցնելը»:

Որքան էլ բարդ ու դժվարին լինի վտանգավոր խաչմերուկը հատելը, կյանքի բարդությունների մեջ նավարկելն ավելի սպառնալից է: Թեև 118-րդ սաղմոսում սաղմոսերգուի վիճակը անորոշ է, մենք գիտենք, որ նրա համար շատ դժվար էր ու աղոթելու համար շատ հարմար պահ: Սաղմոսերգուն բացականշում է. «Նեղություն մեջ կանչեցի Տիրոջը» (Հմ.5): Նրա վստահությունը Աստծո հանդեպ անսխալ էր. «Տերն ինձ հետ է, ես չեմ վախենում: ...Տերն ինձ հետ է իմ օգնականներով» (Հմ. 6-7):

Մեր գործը, դպրոցը կամ բնակավայրը փոխելիս վախենալը անսովոր բան չէ: Տազնապ է առաջանում նաև առողջական խնդիրների, մտերիմների հետ հարաբերությունների խզման կամ ֆինանսական ճգնաժամի պահերին: Բայց այդ ամենը չպետք է մեկնաբանել որպես Աստծո կողմից լքվածություն արտահայտություն: Այդպիսի պահերին աղոթքով հանձնվենք Աստծուն՝ վստահ լինելով, որ Նա մեզ հետ է:

**Աղոթք** - Ողորմած Դայր, օգնի՛ր ինձ, որ ծանր ապրումների ժամանակ վստահեմ Քեզ: Ամեն:

**Կյանքի դժվարություններն ու մարտահրավերներն անխուսափելի են: Սակայն կարելի է դիմել Ասծուն և խնդրել Նրա աջակցությունը:**

Ինչպես փեսան է ուրախանում հարսով, այնպես էլ քո Աստվածը կուրախանա քեզնով: (Ես. 62.5)

## **ՈՒՐԱԽ ՍԵՐ**

**Բ**րենդընն ու Կետին փայլում էին: Նայելով նրանց երջանիկ ղեմքերին՝ երբեք չէիք կուսհի, թե ինչ դժվարություններ են նրանք հաղթահարել, որքան ծրագրեր են փոխել թագավարակի սահմանափակումների պատճառով: Եվ այժմ թեկուզ ընտանիքի քիչ անդամների ներկայությամբ՝ ուրախությունն ու երջանկությունը ճառագում էր նրանցից, երբ սիրո ու հավատարմության երգում էին տալիս միմյանց և Աստծուն:

Միմյանցով ուրախացող հարսի ու փեսայի կերպարը Եսայի մարգարեի նկարագրած այն պատկերին է նման, երբ երևում է, թե ինչպիսի սեր ու հրճվանք ունի Աստված Իր ժողովրդի հանդեպ: Եսային իր ընթերցողներին հիշեցնում է, որ Աստծո առաջարկած փրկությունը արտացոլում է կոտրված աշխարհում ապրելու իրականության մխիթարությունը հուսաբեկ ու վշտահար մարդկանց համար (Ես. 61.1-3): Աստված օգնություն առաջարկեց Իր ժողովրդին, որովհետև ինչպես հարսն ու փեսան են նշում իրենց սերը միմյանց հանդեպ, «այնպես էլ քո Աստվածը կուրախանա քեզնով» (62.5):

Հատկանշական է, որ Աստված ուրախանում է մեզնով և ցանկանում հարաբերվել մեզ հետ: Նույնիսկ երբ պայքարում ենք կոտրված աշխարհում ապրելու հետևանքների դեմ, մենք ունենք մի Աստված, որ սիրում է մեզ ոչ թե ամաչելով, այլ ուրախությամբ ու կարեկից սիրով, որը «հավիտենական է» (Մաղմ. 136. 1):

**Աղոթք** - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ, որ սիրով ուրախանում ես ինձ համար: Ամեն:

**Ասծո սլած առաջ դարձնե՞ր Իր հավիտենական սիրո ու բերկրանքի լավագույն արտահայտությունն են:**

Չարություն անելու համար բազմության չհետևես: (Ել. 23.2)

## **ՔՆՆԻՉ ՀԱՄԱՐ 8**

«Մեկ մարդ մահացել է, մեկի կյանքն էլ վտանգված է», - հայտարարում է դատավորը . «12 զայրացած տղամարդիկ» կինոնկարում: Երիտասարդ կասկածյալի դեմ եղած ապացույցները կարծեք թե արժանահավատ էին, բայց քննարկումների ժամանակ բացահայտվում են երդվյալ ատենակալների որոշակի անհամաձայնություններ: Տասներկու քննիչներից մեկը՝ Ծ-րդը, քվեարկում է հօգուտ կասկածյալի: Մավալվում են բուռն բանավեճեր, որոնց ժամանակ մյուսները ծաղրում էին իրենց գործընկերոջը, որը մատնացույց էր անում վկայություններում առկա հակասությունները: Կրքերն այնքան են սրվում, որ ի հայտ են գալիս քննիչ մարմնի անդամների մարդասպան հակումները: Ի վերջո նրանք բոլորը փոխում են իրենց քվեները՝ ամբաստանյալին համարելով անմեղ: Երբ Աստված իր հրահանգներն էր տալիս Իսրայելի նոր ազգին, կոչեց անկեղծ քաջություն.«Դատատանի ժամանակ բազմության ետևից խոտորվելով չխոսես՝ իրավունքը խախտելու համար» (Ել. 23. 2): Հետաքրքիրն այն է, որ դատարանը պետք է «աղքատին աչառություն չանի» (Հմ.3), «աղքատի իրավունքը չձուխ նրա հետ դատվելիս» (Հմ.6): Աստված՝ արդար դատավորը, ցանկանում է, որ անարատություն լինի մեր բոլոր գործերում: «12 զայրացած տղամարդիկ» կինոնկարում կասկածյալին անմեղ համարող երկրորդ քննիչը առաջինի մասին ասում է. «Հեշտ չէ միայնակ կանգնել ուրիշների ծաղրանքի հանդիման»: Սակայն Աստված դա է պահանջում: Ծ-րդ քննիչը տեսավ իրական ապացույցը, ինչպես նաև մեղադրյալի մարդկայնությունը: Սուրբ Հոգու մեղմ առաջնորդությամբ մենք նույնպես կարող ենք պաշտպանել Աստծո ճշմարտությունը և խոսել թույլերի փոխարեն:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, երբ պաշտպանում եմք Քո

ճշմարտությունը, օգնի՛ր մեզ՝ ցույց տալու Քո սերն աշխարհին: Ամեն:

**Վարանում եմ մտնել բազմության մեջ, սակայն Աստված մեզ կանչում է այնտեղ՝ ղառսղանելու ճշմարտությունն ու արդարությունը:**

Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք... (Մատթ. 17. 20)

### **ՅԶՈՐ ՀԱՎԱՏՔ**

**Վ**արդանանց պատերազմը առաջին քրիստոնյա ժողովրդի՝ հայ ժողովրդի հզոր հավատի արտահայտությունն է: Վարդանանց հերոսներն իրենց անխախտ հավատի համար պատրաստ էին զոհվել և արիաբար ասացին. «Ձեր սուրը և մեր պարանոցը»: Մարդկային տրամաբանությունմբ անհնար թվացող այդ երևույթը հնարավոր է միայն Աստծո հանդեպ զորավոր հավատի շնորհիվ:

Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց 150 տարի հետո Վարդանանք իրենց անձը զոհաբերեցին այդ հավատի համար:

Տեր Հիսուսը հաճախ է շեշտում հավատի մեծ ու կարևոր դերը՝ հրաշքներ գործելով և ասելով. «Քո հավատքը քեզ բժշկեց» (Մատթ. 9.22), «Ինչպես որ հավատացիր, այդպես էլ թող լինի քեզ» (Մատթ. 8.13), «Քո հավատը քեզ փրկեց» (Ղուկ. 7.50) և այլն: «Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք... ձեզ համար անկարելի ոչինչ չի լինի» (Մատթ. 17. 20), -վստահեցնում է Նա:

Հավատը հույսերի խարիսխն է և անտեսանելի երևույթների ապացույցը: Հավատը լեռներ է շարժում ու անհնարը հնարավոր դարձնում: Հավատով ենք դիմագրավում չարին, թշնամուն ու մեղքին: Վարդանանք ունեին այդ հավատքը և վստահ էին, որ կկարողանան դեմ դուրս գալ թշնամուն՝ թեկուզ անձնազոհության պատրաստակամությամբ: Նրանք զորավոր հավատքով հաղթեցին խղճի ու մտքի ազատության համար մղված պատերազմում: Հարգանք նրանց:

**Աղոթք** - Տե՛ր, տո՛ւր մեզ նման հզոր հավատք, որպեսզի կարողանանք դիմագրավել չարին և հանգցնել նրա բոլոր կրակոտ նետերը: Ամեն:

**Չարի դեմ դայաբաշու համար կարիք ունեն՞ մանանեխի հատիկի չափ, բայց հզոր հավատքի:**



Մենք ամենքս դարձել ենք անմաքուր մեկի նման, մեր ամբողջ արդարությունը նման է դաշտանի շորի: (Ես. 64. 6)

## **ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՄԱՔՐՎԱԾ**

Հյուրընկալության էինք պատրաստվում, և ես ու կինս մաքրում էինք մեր տունը: Խոհանոցի սպիտակ սալիկապատ հատակին նկատելով մուգ բծեր՝ կռացա, որ մաքրեմ: Որքան շատ էի մաքրում, այնքան ավելի շատ բծեր էին հայտնվում: Այն աստիճան, որ մեր խոհանոցի հատակն ինձ այնքան կեղտոտ թվաց, որ մտածեցի, թե երբեք էլ չէի կարողանալու մաքրել:

Աստվածաշնչում այդպիսի ինքնամաքրման մասին խոսվում է: Եվ մեղքը ինքնուրույն հաղթահարելու մեր լավագույն ջանքերը միշտ էլ ձախողվում են: Եսայի մարգարեն կարծես հուսահատված էր, որ Աստծո ժողովուրդը՝ իսրայելցիները, չպիտի վայելեն Աստծո փրկությունը, երբ գրում էր. «Մենք ամենքս դարձել ենք անմաքուր մեկի նման, մեր ամբողջ արդարությունը նման է դաշտանի շորի» (Հմ. 64. 6):

Բայց նա գիտեր, որ Աստծո բարությունը համար միշտ էլ հույս կա: Ուստի աղոթեց. «Ո՛վ Տեր, դու ես մեր Հայրը. մենք կավն ենք, դու՝ մեր բրուտը, մենք բոլորս քո ձեռքի գործն ենք» (Հմ.8): Նա գիտեր, որ միայն Աստված կարող է «վառ կարմիր մեղքերը» մաքրել այնպես, որ «ձյան պես սպիտակեն» (Ես. 1.18):

Չենք կարող մաքրել մեր հոգու բծերն ու աղտերը, բայց բարեբախտաբար կարող ենք փրկություն ստանալ Աստծով, որի զոհաբերությունը կօգնի մեզ ամբողջովին մաքրվել (Ա. Հովհ. 1.7):

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ հանգիստ գտնեմ Քո ներումով, փոխանակ փորձելու վաստակել այն, ինչը Դու արդեն տվել ես: Ամեն:

**Մտածելով, թե դժվար կլինի Աստծո ներումն ստանալ՝ հաճախ փորձում ենք ինքներս հաղթահարել մեղքը:**

Ամեն ժամ աղոթե՛ք և խնդրե՛ք Հոգով և աղաչանքով: (Եփ. 6.18)

## **ԱՂՈԹՔԻ ԲԱՑԻԿ**

**Դ**ասախոսների համաժողովից առաջ Թեմին ինձ տվեց մի բացիկ, որի հետևում ձեռագիր աղոթք էր: Նա բացատրեց, որ կարգալով բոլոր դասախոսների կենսագրությունները՝ ինքը յուրաքանչյուրի համար առանձին աղոթք է գրել և աղոթել նրանց համար: Ակնածանքով նայելով ինձ ուղղված անձնական հաղորդագրությունն նրբերանգներին՝ շնորհակալ եղա Աստծուն՝ Թեմի միջոցով ինձ քաջալերելու համար: Հետո ես էլ աղոթեցի իր համար: Համաժողովի ժամանակ, երբ բավական հոգնել էի, ես հանեցի բացիկը, կարդացի, և հոգիս թարմացավ:

Պողոս առաքյալն անդրադարձել է աղոթքի կենսահաստատ ազդեցությունը: Նա հավատացյալներին հայտնել է, որ պատրաստվեն պատերազմի «երկնքում գտնվող չար ոգիների դեմ» (Եփ. 6.12), հորդորել է շարունակական դարձնել հատուկ աղոթքները՝ չմոռանալով նաև իրեն. «Ինձ համար էլ աղոթե՛ք, որպեսզի իմ բերանը բաց անելիս ինձ խոսք տրվի, որ Ավետարանի խորհուրդը համարձակ հայտնեմ, որի պատգամավորն եմ կապանքների մեջ» (Հմ. 19-20):

Երբ մենք աղոթում ենք միմյանց համար, Սուրբ Հոգին մխիթարում է մեզ և ամրացնում մեր վճռականությունը: Նա հաստատում է, որ մենք իր և միմյանց կարիքն ունենք, վստահեցնում, որ ինքը լսում է յուրաքանչյուր աղոթք՝ լինի դա լուռ ասված, թե բացիկի վրա խզբզած, և պատասխանում է դրանց՝ իր կատարյալ կամքի համաձայն:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ օգնի՛ր ինձ՝ իմ և ուրիշների համար աղոթքներով մոտենալ Քեզ: Ամեն:

**Շափերը կարիք ունեն հասուկ բացիկի վրա արված բարեխոսական աղոթքների, որոնցի ֆաջալերվեն:**



Իմ ժողովուրդը, որի վրա իմ անունն է դրված, խոնարհվի,....այն ժամանակ ես երկնքից կլսեմ: (Բ. Մնաց.7.14)

## **ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱ**

**Ա**ռևրուկուներ Հյուսիսային Ավստրալիայի փոքր քաղաքներին է, որի բնակչուկուներ կազմված է ընդամենը յոթ բնիկ տոհմերից կամ ցեղերից: Թեև մեկ դար առաջ Ավետարանը հասել է Առևրուկուն, սակայն «Ակն ընդ ական» հատուկումը երկար ժամանակ դեռ պահպանվում էր: 2015-ին այդ ցեղերի միջև լարվածուկուներ մեծացավ, և սպանուկույան պարագայում պահանջվում էր, որ հանցագործի ընտանիքից ևս մեկը մահանա:

2016-ին առևրուկցիներն սկսեցին աղոթքով փնտրել Աստուծուն: Շուտով քաղաքն ասես արթնացավ, տեղի ունեցան գանգվածային մկրտուկույուններ: Մարդիկ այնքան ուրախ էին, որ պարում էին փողոցներում: Սպանվածների ընտանիքները ներեցին սպանողի ցեղակիցներին: Ամեն կիրակի հազար հոգի եկեղեցի էր գնում պաշտամուկուքի:

Ձարթոնքի ու վերածննդի այսպիսի պահեր Աստվածաշնչում տեսնում ենք Եգեկիայի ժամանակ, երբ բազմուկույունը ուրախուկույամբ դարձավ դեպի Աստված (Բ.Մնաց. 30), Պենտեկոստի օրը, երբ հազարավոր մարդիկ ապաշխարեցին (Գործք. 2. 38-47): Թեև այդ արթնուկույունը Աստուծո գործն է, բայց պատմուկույունը ցույց է տալիս, որ դրան անպայման նախորդում է աղոթքը: Աստված Սողոմոնին ասում է.«Իմ ժողովուրդը, որի վրա իմ անունն է դրված, խոնարհվի, աղոթի ու ետ դառնա իր չար ճանապարհներից, այն ժամանակ ես երկնքից կլսեմ, կներեմ նրա մեղքը և կբժշկեմ նրա երկիրը» (Բ. Մնաց.7.14):

Որքա՛ն կարիք ունեն մեր քաղաքները նման վերափոխման: Հա՛յր, մե՛զ էլ արթնուկույուն բեր:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ արթնուկույուն բեր մեր երկրին՝ սկսելով ինձնից: Ամեն:

**Արթնուկույան համար որոշակի հագուստ կամ բանաձև չկա: Լավագույն ձևը խոնարհվելն ու աղոթքով Աստուծո գնալն է:**

Աստծո պատվիրանները թողած՝ մարդկանց ավանդույթներն եք պահում: (Մարկ.7. 8)

## **ԻՆՉՆ Է ԻՐԱՊԵՍ ԱՆՅՐԱԺԵՇՏ**

**Ե**րիտասարդ կինը ճաշ պատրաստելիս խորովածի միսը կտրտեց ու տեղավորեց մեծ կաթսայի մեջ: Ամուսինը հարցրեց, թե ինչու է կտրտում: «Որովհետև մայրս այդպես էր անում», - պատասխանեց կինը: Բայց նրա հետաքրքրությունն էլ շարժվեց և մորը հարցրեց այդ մասին: Նա շատ զարմացավ՝ իմանալով, որ մայրն այդպես է արել զուտ այն պատճառով, որ իր կաթսան փոքր է եղել: Հետևաբար՝ իր դեպքում դա ավելորդ քայլ էր:

Շատ սովորություններ սկիզբ են առնում անհրաժեշտությունից, բայց շարունակվում են, որովհետև հավատարիմ ենք մնում «մենք այդպես ենք անում» գաղափարին: Բնական է, որ մարդիկ կառչում են իրենց սովորություններին, ինչպես փարիսեցիներն էին անում իրենց ժամանակ (Մարկ.7. 1-2): Նրանք չէին ընդունում իրենց կրոնական կանոններից որևէ խախտում կամ շեղում:

Եվ Հիսուսը փարիսեցիներին ասաց. «Աստծո պատվիրանները թողած՝ մարդկանց ավանդույթներն եք պահում» (Հմ. 8): Նա բացահայտեց, որ սովորությունները երբեք պետք չէ փոխարինել աստվածաշնչային իմաստություններով: Աստծոն հետևելու անկեղծ ու իսկական ցանկությունը (Հմ. 6-7) պիտի կենտրոնացնի մեր սրտի վերաբերմունքի և ոչ թե արտաքին գործերի վրա:

Լավ է հետևողականորեն գնահատել այն սովորությունները, որոնք մեր սրտին մոտ ենք պահում ու հետևում ենք կրոնապես: Այն բաները, որ Աստված անհրաժեշտ է համարում, միշտ պետք է փոխարինեն սովորություններին:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, օգնիր ինձ հետևելու Քո պատվիրաններին և հրաժարվելու այն սովորություններից, որոնք հակասում են Աստվածաշնչի սկզբունքներին: Ամեն:

**Ամուր չկառչեմք այն սովորություններին, որոնք չեն համընկնում Աստվածաշնչի դասվիրաններին և իրադեպ անհրաժեշտ չեն:**

Ամենից ավելի քո սիրտը պահիր զգուշությամբ, որովհետև նրանից է կյանքի աղբյուրը: (Առ. 4. 23)

### **ՊԱՇՏՊԱՆԻՐ ՍԻՐՏԴ**

**Տ**ունգարացի մաթեմատիկոս Աբրահամ Վալդը 1938-ին Միացյալ Նահանգներ տեղափոխվելուց հետո իր հմտությունները ներդրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ջանքերում: Զինվորականները ռազմական ինքնաթիռները թշնամուկրակներից պաշտպանելու ուղիներ էին որոնում, ուստի օգնություն համար դիմեցին Վալդին և վիճակագրական հետազոտական խմբի իրենց գործընկերներին: Վերջիններն սկսեցին ուսումնասիրել մարտերից վերադարձող ինքնաթիռները՝ տեսնելու, թե որ մասերն են ավելի շատ վնասվում: Վալդը գիտնականի խորաթափանցությունից հասկացավ, որ լրացուցիչ զրահի կարիք ունեցող մասերը կործանված ինքնաթիռներում են մնում: Այսինքն՝ թշնամին խոցում էր ինքնաթիռի շարժիչը, որն ընկնում էր, հետևաբար և անհնար էր դրա հետազոտումը:

Սողոմոնը մեզ սովորեցնում է պաշտպանել մեր ամենախոցելի մասը՝ սիրտը: Նա իր որդուն հրահանգում է.«Ամենից ավելի քո սիրտը պահիր զգուշությամբ, որովհետև նրանից է կյանքի աղբյուրը» (Առ. 4. 23): Աստծո ցուցումները մեզ առաջնորդում են կյանքում՝ հեռու պահելով սխալ որոշումներից և սովորեցնելով, թե ինչի վրա պետք է կենտրոնացնել ուշադրությունը:

Եթե լսենք Աստծո հրահանգները և զինենք մեր սրտերը, «մեր ոտքը կհեռացնենք չարիքից» և հաստատ կմնանք Աստծո հետ մեր ճամփորդության մեջ (Հմ.27): Մենք ամեն օր ենք անցնում թշնամու տարածքով, բայց Աստծո իմաստունությամբ կարող ենք կենտրոնանալ Աստծո փառքի համար ապրելու մեր առաքելության վրա:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ պաշտպանի՛ր սիրտս նրա դեմ ուղղված սպառնալիքներից: Իմ անձը թաքցնում եմ Քո մեջ: Ամեն:

**Շահ բաների հանդեպ եմ խոցելի մեր սրտերը, սակայն Ասծո իմաստնությամբ կարելի է դրանք դաժարացնել:**

Ինքն իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահ: (Փիլիպ. 2.8)

## **ԽՈՆԱՐՀ ԼԻՆԵԼՈՒ ՕՐ**

**Զ**վարճալի է, երբ մարդիկ ոչ պաշտոնական բազմաթիվ տոներ են ստեղծում: Օրինակ փետրվարին այսպիսի տոներ կան. կպչուն կարկանդակի, սուր կուլ տվողների, նույնիսկ շան թխվածքը գնահատելու օր: Այսօր խոնարհ լինելու օրն է, որն արժե նշել թեկուզ միայն այն բանի համար, որ խոնարհությունը առաքինություն է ճանաչված: Սակայն հետաքրքիրն այն է, որ միշտ այդպես չի եղել: Հին ժամանակներում խոնարհությունն իբրև թուլություն էր դիտվում, իսկ դրա փոխարեն կարևորվում էր պատիվը: Ակնկալվում էր սեփական ձեռքբերումներով պարծենալ, ձգտել բարձրացնել կարգավիճակը և երբեք չնվազեցնել այն: Որովհետև խոնարհությունը ստորություն էր համարվում, ծառայի դիրք տիրող հանդեպ: Պատմաբանների վկայությամբ՝ այդ մոտեցումը փոխվել է Հիսուսի խաչելության ժամանակ: Նա, որ «Աստծո կերպարանք ունենալով» հրաժարվեց իր աստվածային կարգավիճակից՝ «ծառայի կերպարանք առնելով՝ խոնարհեցրեց իրեն ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահ» (Փիլ. 2. 6-8): Այդ արարքը ստիպեց, որ խոնարհությունը վերաիմաստավորվի: Առաջին դարի վերջին արդեն նույնիսկ աշխարհիկ գրողները Քրիստոսի արածի պատճառով խոնարհությունը առաքինություն էին կոչում: Ամեն անգամ, երբ որևէ մեկը գովասանքի է արժանանում խոնարհ լինելու համար, դրանով անուղղակիորեն Ավետարանն է քարոզվում: Որովհետև առանց Հիսուսի՝ խոնարհությունը «լավ» հատկանիշ չէր լինելու, ոչ էլ խոնարհ լինելու օր էինք նշելու: Քրիստոսը մեզ համար հրաժարվեց իր կարգավիճակից՝ ամբողջ պատմության ընթացքում բացահայտելով Աստծո խոնարհ էությունը:

**Աղոթք** -Գովաբանում եմ Քեզ, Հիսու՛ս, որ խոնարհ ես, և ուզում եմ խոնարհվել Քո առաջ: Ամեն:

**Խոնարհությունն այլևս թուլություն չի համարվում, ուսի ջանամք ընդօրինակել Հիսուսի խոնարհությունը:**

Դու նրանից կխնդրեիր, նա էլ քեզ կենդանի ջուր կտար: (Ռոմի. 4.10)

## **ԿՅԱՆՔԻ ՉՈՒՐԸ**

**Ա**նդրեայի ընտանիքում անկայուն վիճակ էր, և նա 14 տարեկանում հեռացավ տնից, աշխատանք գտավ ու ապրում էր ընկերների հետ: Ձգտելով սիրո և ինքնահաստատման՝ նա ավելի ուշ տեղափոխվեց մի տղամարդու մոտ, որը տղային ծանոթացրեց թմրանյութերին ու ալկոհոլին: Բայց հարաբերություններն ու նյութերը չէին բավարարում, և տղան շարունակում էր որոնումները: Տարիներ անց հանդիպեց Հիսուսին հավատացողներին, որոնք օգնություն ձեռք մեկնեցին՝ առաջարկելով միասին աղոթել: Մի քանի ամիս անց նա վերջապես գտավ Տիրոջը, որը պիտի հագեցներ սիրո իր ծարավը:

Սամարացի կինը նույնպես, որին ջրհորի մոտ մոտեցավ Հիսուսը և ջուր խնդրեց, հագեցրեց իր ծարավը: Կինն այդտեղ էր եկել կեսօրվա շոգ ժամին (Հովհ. 4. 5-7)՝ հավանաբար խուսափելով կանանց հայացքներից ու բամբասանքներից, որոնք գիտեին իր բազում ամուսնությունների ու անբարոյական վարքի մասին (Հմ. 17-18): Երբ Հիսուսը մոտեցավ ու ջուր խնդրեց այդ կնոջից՝ արդեն իսկ խախտեց այն ավանդույթը, ըստ որի հրեաները չէին շփվում սամարացիների հետ: Բայց նա ուզում էր հագեցնել այդ կնոջ ծարավը, տալ կենդանի ջրի պարզևը, որը նրան կառաջնորդեր դեպի հավիտենական կյանք (Հմ.10):

Երբ ընդունում ենք Հիսուսին՝ որպես մեր Փրկիչ, մենք նույնպես խմում ենք այդ կենդանի ջրից: Այնուհետև կարող ենք այդ գավաթով կիսվել ուրիշների հետ, երբ նրանց հրավիրենք հետևելու Իրեն:

**Աղոթք** - Հայր Աստված, ողջունում ես բոլոր ծառաներին, որոնք գալիս են ջուր խմելու: Հագեցրո՛ւ ծարավս Քո կենդանի ջրով: Ամեն:

**Սամարացի կնոջ նման մենք էլ ենք ծարավ: Մոտենանք Տեր Հիսուսին և Նրանից խնդրենք կյանքի ջուրը:**

Երկրի ծայրից կանչում եմ քեզ, երբ թուլանում է սիրտս: (Մաղմ. 61.2)

## **ԱՂՈԹԵԼ ԴԺՎԱՐԻՆ ՊԱՅԵՐԻՆ**

**Գ**րող, աստվածաբան Ռասել Մուրը նկարագրում է, որ ուս- սական մանկատանը, որտեղից որդեգրել է իր զավակնե- րին, ահափոր լուռթյուն էր: Ավելի ուշ մեկ ուրիշը բացատրել է, որ երեխաները դադարել են լաց լինել, որովհետև հասկա- ցել են, որ ոչ ոք չի պատասխանելու իրենց լացին:

Դժվարությունների մեջ մեզ էլ է թվում, որ ոչ մեկը չի լսում մեր ձայնը, և որ ամենավատն է, նույնիսկ Աստված չի լսում մեր աղաղակները կամ չի տեսնում մեր արցունքները: Բայց Նա լսում է ու տեսնում: Դրա համար անհրաժեշտ է խնդրանքի և բողոքի այն լեզուն, որ կա հատկապես Սաղմոսների գր- քում: Սաղմոսերգուները Աստծուն խնդրում են օգնել իրենց ու նաև բողոքում իրենց վիճակից: 61-րդ սաղմոսում Դավիթն իր բողոքներն ու խնդրանքներն է հայտնում Աստծուն՝ ասելով. «առաջնորդի՛ր ինձ դեպի այն վեմը, որ բարձր է ինձնից» (Հմ.2): Դավիթն այդպես է վարվում, որովհետև գիտի, որ Նա է իր «ապավենն ու զորավոր աշտարակը» (Հմ.3):

Սաղմոսներում խնդրանքի ու բողոքի ձևով աղոթելը Աստծո գերիշխանութունը հաստատելու, Նրա հավատարմությանն ու բարությանը ապավինելու միջոց է: Դրանք վկայում են այն մտերիմ հարաբերությունների մասին, որ մենք զգում ենք Աստծո հետ: Դժվարության մեջ բոլորս էլ կարող ենք մտածել, թե Նա չի հետաքրքրվում մեզնով: Բայց Նա լսում է մեզ և մեզ հետ է:

**Աղոթք** - Սիրելի՛ Դիսուս, օգնի՛ր ինձ, որ քեզ հայտնեմ իմ խնդրանքները, բողոքներն ու գովաբանությունները: Ամեն:

**Վսահ եղիր, ոռ Տերը լսում է Քո խնդրանքն ու աղաչանքը և մի՛ հուսահատվիր: Շարունակի՛ր աղոթել դժվարին դառեցին:**



Եվ ամեն օր չէին դադարում տաճարում ու տներում ուսուցանել և Յիսուս քրիստոսի մասին ավետարանել: (Գործք 5. 42)

## **ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԽՈՍԵԼ ԴԻՍՈՒՍԻ ՄԱՍԻՆ**

Հիսուսին հավատացող մի երաժիշտ պատմում է, որ կար ժամանակ, երբ իրեն խորհուրդ էին տալիս Հիսուսի մասին շատ չխոսել: Եվ հիմնավորում էին, որ իր խումբն ավելի հայտնի կդառնա ու ավելի մեծ գումարներ կաշխատի, եթե այլևս չասի, որ իր աշխատանքն ամբողջությամբ Հիսուսի մասին է: Մտածելուց հետո երաժիշտը որոշեց, որ երաժշտության ամբողջ իմաստը Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքը կիսելն է, որ ինքը չի պատրաստվում լռել: Այլ շարունակելու է «իր մեջ վառվող կոչումը, այն է՝ Հիսուսի պատգամը բաժնեկցելը»: Առաքյալները շատ ավելի սպառնալի իրավիճակներում հայտնվեցին և նման պահանջներ ստացան: Նրանք բանտարկվել էին ու հրաշքով փրկվել՝ հրեշտակի միջոցով, որը նրանց պատվիրել էր շարունակել ուրիշներին պատմել Քրիստոսով իրենց ունեցած նոր կյանքի մասին (Գործք 5.19-20): Երբ կրոնական առաջնորդներն իմացան առաքյալների փախուստի և այն մասին, որ նրանք շարունակում են Ավետարանի բարի լուրը հռչակել, հանդիմանեցին նրանց. «Ձեզ խստիվ չպատվիրեցի՞նք, որ այդ անունով չուսուցանեք» (Հմ.28): Առաքյալների պատասխանը եղավ. «Պետք է առավել Աստծուն հնազանդվել, քան մարդկանց» (Հմ. 29): Այդ պատասխանի պատճառով առաջնորդները ծեծեցին առաքյալներին և պատվիրեցին, որ «Հիսուսի անունով չխոսեն» (Հմ. 40): Առաքյալներն ուրախացել էին, որ տառապանքների են ենթարկվում Հիսուսի անվան համար և «և ամեն օր չէին դադարում տաճարում ու տներում ուսուցանել և Հիսուս Քրիստոսի մասին ավետարանել» (Հմ. 42): Թող Աստված օգնի մեզ, որ շարունակենք հետևել նրանց օրինակին:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ առաքյալների ու բոլոր նրանց համար, ովքեր համարձակ վկայում են Քո մասին: Խնդրում եմ ինձ քաջություն տուր, որ հետևեմ նրանց օրինակին: Ամեն:

**Պիտի լինեն մարդիկ, որոնք չդիտի ուզեն, որ խոսենք Ասծո մասին, սակայն շարունակենք խոսել Իր մասին:**

Քո կամքը կատարել կամեցա, ո՛վ իմ Աստված, և քո օրենքն իմ սրտի մեջ է: (Սաղմ. 40.8)

## **ՆՇԱՆ Է ԱՐԴՅՈՔ**

**Ա**ռաջարկը լավն էր երևում, իսկ Փիթերը հենց դրա կարիքն ունենր: Գործից ազատվելուց հետո ընտանիքի միակ կերակրողը հուսահատ աղոթել էր, և ընկերներն ստացված առաջարկը աղոթքների պատասխանն էին համարում:

Կարգալուծ ապագա գործատիրոջ մասին՝ Փիթերն անհանգստացավ, որովհետև ընկերությունը ներդրումներ էր կատարել կասկածելի գործերի մեջ և կաշառակերի որակում ստացել: Ի վերջո Փիթերը մերժեց առաջարկը, որքան էլ դժվար էր: «Աստված ուզում է, որ ես ճիշտ բան անեմ: Եվ ես պետք է վստահեմ, որ նա կապահովի իմ կարիքները», - ասաց նա ինձ:

Փիթերը հիշեց Դավթի պատմությունը, երբ նա քարայրում հանդիպեց Սավուղին: Թվում է, թե նրան տրվել էր լավ հնարավորություն սպանելու իրեն հալածողին, բայց նա դիմացավ փորձությունը. «Աստված չանի, որ Տիրոջ օձյալի՝ իմ տիրոջ դեմ անեմ այս բանը» (Ա. Թագ. 24.7): Դավթիթն զգուշանում էր, որ իր ցանկությունները և Աստծո հրամանները կատարելը չհակասեին միմյանց, և ինքը ճիշտ քայլ կատարեր:

Որոշ իրավիճակներում «նշաններ» փնտրելու փոխարեն եկե՛ք իմաստնության և առաջնորդության համար դիմենք Աստծոն ու Նրա ճշմարտությանը, որպեսզի հասկանանք, թե ինչ է մեզ սպասվում: Նա կօգնի մեզ անելու այն, ինչը ճիշտ է իր տեսակետից:

**Աղոթք** - Մեր մատակարար Աստված, ինձ տու՛ր հնարավորություններ տեսնելու իմաստնություն և հավատք, որ քայլեմ Քո ճանփով, անեմ այն, ինչը Քեզ է հաճելի: Ամեն:

**Տարբերե՛նք ծիսը սխալից և անե՛նք այն, ինչն Աստծո կամքն է՝ վստահ լինելով, որ Նա մեզ հե՛տ է և նշաններով ցույց կտա ծիսը:**

Բոլոր այրիները նրա շուրջը հավաքվեցին. լալիս էին և ցույց տալիս այն շապիկներն ու զգեստները, որ Այծեմնիկն էր պատրաստում, երբ դեռ իրենց հետ էր: (Գործք 9.39)

## **ՏԵՍՆԵԼ ԿԱՐԻՔԸ**

Հայրեկիս կյանքի վերջին օրերին հիվանդապահուհիներից մեկը հարցրեց ինձ, թե կարո՞ղ է արդյոք սափրել նրան: Ածելին նրբորեն սահեցնելով հորս դեմքի վրայով՝ Ռեյչլն ասաց. «Իր սերնդի տարեց տղամարդիկ սիրում են ամեն օր կուկիկ սափրվել»: Կինը տեսել էր այդ կարիքը և ցուցաբերում էր բարու թյուն, արժանապատվություն ու հարգանք: Նրա վերաբերմունքն ինձ հիշեցրեց ընկերուհուս՝ Ջուլիին, որը ներկում է ծեր մոր եղունգները, որովհետև նրա համար շատ կարևոր է միշտ գեղեցիկ տեսք ունենալը:

«Գործք առաքելոց»-ի 9-ը պատմում է Տաբիթա (Թարգմանաբար Այծեմնիկ) անունով մի կնոջ մասին, որը բարություն դրսևորելով՝ աղքատներին ձեռագործ հագուստներ էր նվիրում (Հմ.36,39): Երբ նա մահացավ, նրա սենյակը լցվեց ընկերներով, որոնք սգում էին այդ բարի կնոջ մահը: Բայց Տաբիթայի պատմությունն այդպիսով չավարտվեց: Երբ Պետրոսին բերեցին այնտեղ, որտեղ դրված էր նրա մարմինը, նա ծունկի իջավ ու աղոթեց ու Աստծո զորությունը կանչեց. «Տաբիթա՛, վե՛ր կաց» (Հմ.40): Տաբիթան բացեց աչքերն ու կանգնեց: Ընկերները, տեսնելով, որ նա ողջ է, լուրն արագ տարածեցին քաղաքում և «չատերը հավատացին Տիրոջը» (Հմ.42):

Իսկ ինչպե՞ս անցկացրեց Տաբիթան հաջորդ օրը: Ամենայն հավանականությամբ այնպես, ինչպես մինչ այդ էր ապրում՝ տեսնելով մարդկանց կարիքներն ու հոգալով դրանք:

**Աղոթք** - Հայր, բա՛ց աչքերս, որպեսզի տեսնեմ ինձ շրջապատող վիրավոր ու կարիքավոր մարդկանց: Բա՛ց սիրտս, անելու կարողացածս և ցույց տալու Քո սերը: Ամեն:

**Մեր Երջադասում մի՞տս էլ կլինեն կարիքավոր մարդիկ, ուսի՞ Ասծո սիրով լավագույնն անենք նրանց օգնելու համար:**

Տերը բացեց էշի լեզուն: (Թվեր 22.28)

## ՇՆԱԳԼՈՒԽ ԿՎՊԻԿՐ, ԷՇՆ ՈՒ ԵՍ

**Ջ**եկը գիտեր, թե ինչպես պետք է գնացքի գծերը անսխալ փոխել: Տարիներ շարունակ նա երբեք չէր մոռանում ճիշտ ժամին ու ճիշտ ուղղութիւնով տեղափոխել ուելները:

Ջարմանային այն է, որ Ջեկը շնագլուխ կապիկ էր (*chacma baboon*): Նրան պահում էր երկաթուղային աշխատող Ջեյմս Ուայտը: Երբ վերջինը գնացքի վագոնների միջև սեղմվելու պատճառով կորցրեց ոտքերը, կենդանուն վարժեցրեց կատարել տնային գործեր: Եվ շուտով Ջեկը նրա օգնականը դարձավ նաև աշխատանքում: Լսելով մոտեցող գնացքի ազդանշանները՝ նա արագ կողմորոշվում էր և համապատասխան լծակները քաշելով՝ ուղղում գծերը:

Աստվածաշունչը պատմում է մեկ այլ կենդանու՝ Բաղամի էշի մասին, որը նույնպես օգնել էր տիրոջը:

Բաղամը հեթանոս մարգարե էր, որը ծառայում էր Իսրայելին վնասել պատրաստվող թագավորին: Երբ նա էշին նստած հանդիպման էր գնում հակառակորդի հետ, «Տերը բացեց էշի լեզուն» (Թվեր 22.28) կենդանին խոսեց Բաղամի հետ: Էշի խոսելը մի մասն էր, թե ինչպես Աստված բացեց «Բաղամի աչքերը» (Հմ.31), զգուշացրեց մոտալուտ վտանգի մասին և հետ պահեց նրան Իր ժողովրդին վնասելուց:

Եթե Աստված կարողանում է Իր բարի նպատակների համար օգտագործել այս կենդանիներին, ուրեմն՝ Նա կարող է օգտագործել նաև ինձ ու քեզ:

**Աղոթք** - Յայր, ուզում եմ Քեզ ծառայել: Գործածիր ձեռքերս, ոտքերս, բերանս...Օգնիր, որ այսօր ապրեմ Քեզ համար: Ամեն:

**Ասված գործածում է նույնիսկ նրանց, որոնք մեզ անհավանական են թվում: Ուրեմն որքա՞ն հավանական է, որ Իր փառքի համար Նա մեզ էլ կօգտագործի:**

Ինձ մո'տ եկեք, բոլոր հոգնածների ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: (Մատթ. 11.28)

### **ՅԱՆՔԻՍ ԳՏՆԵԼ ԶԻՍՈՒՄԻ ԶԵՏ**

**Ե**րբ հոգիդ անհանգիստ է, քեզ չեն օգնի հարստությունն ու հաջողությունները: Այս ճշմարտության վկայություններից է մեծանուն երգիչներից մեկի կյանքի պատմությունը: Նրա մոտ 40 ալբոմներն ու առանձին երգեր այնքան սիրված էին, որ միշտ լավագույն տասնյակում էին հայտնվում: Սակայն նա զժբախտ էր անձնական կյանքում և կյանքի որոշ ժամանակն անցկացրեց բանտում: Եվ ողբաց՝ գրելով.«Իմ հոգում կա մի անհանգստություն, որը երբեք չեմ հաղթահարել ո՛չ իմ նվաճումներով, ո՛չ ամուսնություններով, ո՛չ որևէ այլ բանով: Այն ինձ ուղեկցելու է մինչև մահ»: Ցավոք, նա չէր հասկացել, որ կարող էր հանգիստ գտնել դեռևս կենդանության օրոք:

Հիսուսն Իր մոտ է կանչում բոլոր նրանց, ովքեր երաժշտի նման հոգնել են մեղքի տանջանքից: «Ինձ մո'տ եկեք, բոլոր հոգնածներ՝ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28): Միակ պահանջը Իրեն հավատալն է և Իրենից սովորելը, թե ինչպես ապրել այն ճոխ կյանքով, որ տալիս է Ինքը (Հովհ. 10.10): «Իմ լուծը ձեզ վրա վերցրեք ու ինձանի՛ց սովորեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր հոգիներին հանգստություն կգտնեք» (Մատթ. 11.29):

Երբ մենք մոտենանք Հիսուսին, նա ոչ թե կկրճատի մեր հաշվետվությունը Աստծո առաջ, այլ խաղաղություն կտա մեր անհանգիստ հոգիներին՝ ապահովելով, որ Իր հետ անցնենք նոր ու ավելի թեթև ճանապարհով: Նա մեզ իսկական հանգիստ կտա:

**Աղոթք** - Զիսուս, թող իմ անհանգիստ հոգին խաղաղություն գտնի միայն Քեզ հետ: Ամեն:

**Յոգնած ու ծանրաբեռնված ես: Զիսուսը խոսեցնում է «հանգստություն»:**

Երանելի է այն մարդը,....որ ցերեկ ու գիշեր մտածում է նրա օրենքի մասին: (Մաղմ. 1.1-2)

## **ԹԱՐՄԱՅՆՈՂ ՕԱԶԻՍ**

**Է** նդրյուն ընտանիքով Քենիայում էր: Զբոսանքների ժամանակ նրանք նկատեցին, որ մի շարք կենդանիներ՝ ընձուղտներ, գետաձիեր, ջրային թռչուններ ու վայրի մեղուներ հաճախ էին գնում դաշտում գտնվող փոքրիկ լիճը՝ ասես այն կենսատու ջուր լիներ: Հետևելով կենդանիների անցուղարձին՝ էնդրյուն մտածում էր, որ Աստվածաշունչը նման է հենց այդպիսի «աստվածային ջրհորի», որը ոչ միայն առաջնորդութան ու իմաստնութան աղբյուր է, այլև թարմացնող օազիս, որտեղ կարող են ծարավը հագեցնել բոլոր խավերի մարդիկ:

Էնդրյուի դիտարկումը ասես արձագանքը լինի Մաղմոսերգուի, որը մարդկանց անվանում է «երանելի», երբ նրանք խորհրդածում են Սուրբ Խոսքի մասին: Իսկ Սուրբ Խոսքը «Ջրերի հոսանքի մոտ տնկված ծառի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին» (Մաղմ. 1.3): Ինչպես ծառի արմատներն են խորանում հողի մեջ՝ թարմութան աղբյուր գտնելու համար, այդպես էլ Աստծուն սիրող ու հավատացող մարդիկ պետք է խորամուկ լինեն Սուրբ Գրքի մեջ՝ որպեսզի գտնեն իրենց անհրաժեշտ ուժը:

Մեր անձերը Աստծո իմաստնութանը հանձնելը մեր հիմքերը կամրապնդի իր հետ, և մենք նման չենք լինի «հարդի շյուղի, որը ցրիվ է տալիս քամին» (Հմ.4): Երբ մտածում ենք, թե ինչ է տվել մեզ Աստված, ստանում ենք անհրաժեշտ սնունդը, որ պետք է պտուղ տալու համար:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, ինձ տվել ես Քո խոսքի պարգևը: Օգնի՛ր, որ կարողանամ այն գնահատել երախտագիտությամբ ու գարմանքով: Ամեն:

**Ասվածաբանչը մեր արելակերտի հիմքն է: Արժի խորհրդածել նրա մասին և սասնալ մեզ անհրաժեճ հոգևոր սնունդը:**

Երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: (Զոռմ. 5.8)

## ԱՅՍ ՍԵՐԸ ԻՐԱԿԱՆ Է

«Ասես գորգը քաշեցին ոտքիս տակից», - ասում է Ջոջին՝ նկարագրելով իր զգացումներն այն պահին, երբ իմացել է, որ նշանածը դավաճանում է իրեն: Բնականաբար այլևս նախկին հարաբերությունները չէին կարող լինել: Եվ երբ Աստվածաշնչի ուսումնասիրությունյան ժամանակ տղան լսեց Աստծո սիրո մասին, հարց տվեց. «Արդյո՞ք սա էլ պատրանք չէ: Ես պետք է հավատամ՞ Աստծուն, երբ ասում է, որ սիրում է ինձ»:

Ջոջիի նման մենք էլ կարող ենք տազնապներ ունենալ, որոնց պատճառով զգուշանալ կամ վախենալ վստահել որևէ մեկի սիրո խոստմանը: Երբեմն նույնիսկ այդ սիրո խոստումը մեզ ծուղակ կարող է թվալ: Իրականում չկա այդպիսի բան: «Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց, երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հռոմ. 5.8):

Այդ իրողությունը հասկացավ նաև Ջոջին. «Որովհետև եթե այն ժամանակ, երբ թշնամի էինք Աստծուն, Նրա հետ հաշտվեցինք Իր Որդու մահով (Հռոմ.5.10, Ա.Հովհ.2.2): Նրա շնորհիվ մեր մեղքերը ներվեցին, և մենք կարող ենք Նրա հավիտենություն սպասել (Հովհ. 3.16):

Ամեն անգամ, երբ կասկածներ ունենանք Աստծո սիրո վերաբերյալ, հիշենք, թե Քրիստոսը Խաչի վրա ինչ արեց հանուն մեզ: Այդպիսով մենք կկարողանանք անվերապահորեն վստահել ու հավատալ, որ Նա հավատարիմ է:

**Աղոթք** - Սիրելի՛ Զիսուս, շնորհակալություն այն մեծ սիրո համար, որ ցույց տվեցիր՝ մեռնելով ինձ համար: Թող Քո սերը փոխի ինձ, բուժի և ուղղի իմ հարաբերությունները: Ամեն:

**Եթե դժվարություն ունենաս Ասծո սիրուն վստահելիս, հի՛շի՛ր, որ Զիսուսը մեռավ Քեզ համար:**

Հովսիան չլսեց Եքբավովի խոսքը, որ Աստօն բերանից էր դուրս եկել: (Բ. Մնաց. 35. 22)

## **ԼՍԵԼ ԱՍՏԾՈՒՆ**

**Մ**եքենայով քոչել գնալն ու վերադառնալը շատ ձանձրալի էր թվում: Քանի որ ճանապարհը երկար էր և ուղիղ, նկատել էի, որ նաև սահմանվածից ավելի արագ էի վարում: Այդ մասին ճանապարհային ուստիկանը ինձ նախ զգուշացրեց, իսկ երկրորդ անգամ արդեն տուգանեց:

Զլսելը կարող է տհաճ հետևանքներ ունենալ: Դրա ցավալի օրինակներից մեկը բարի ու հավատարիմ Հովսիա թագավորի կյանքն է: Երբ Եգիպտոսի թագավոր Նեքավովը Բաբելոնի դեմ ճակատամարտում Ասորեստանին օգնելու համար հարձակվեց Հուդայի վրա, Հովսիան դեմ դուրս եկավ նրան: Նեքավովը պատգամավորներ ուղարկեց նրա մոտ՝ ասելով. «Աստված հրամայել է ինձ, որ շտապեմ. ե՛տ քաշվիր ինձ հետ եղող Աստծուց, որպեսզի քեզ չկործանի» (Բ. Մնաց. 35.21): Սակայն «Հովսիան չլսեց Նեքավովի խոսքը, որ Աստծո բերանից էր դուրս եկել և գնաց պատերազմելու» (Հմ.22):

Ճակատամարտում Հովսիան ծանր վիրավորվեց ու մեռավ, «ամբողջ Հուդան ու Երուսաղեմը սուգ արեցին Հովսիայի վրա» (Հմ. 24):

Հովսիան սիրում էր Աստծուն, բայց նրա օրինակը ցույց տվեց, որ առանց Աստծո ձայնը կամ ուրիշների միջոցով ուղարկված իմաստնությունը լսելու՝ իր ասածը պնդելը լավ չի վերջանա: Թող Աստված մեզ տա հարկ եղած խոնարհությունը, որպեսզի միշտ քննենք ինքներս մեզ և ընդունենք Նրա իմաստնությունը:

**Աղոթք** - Իմաստուն և սիրող Հայր, օգնիր ինձ, որ խոնարհ լինեմ ու լսեմ Քո իմաստուն ձայնը: Շնորհակալ եմ, որ երբ խնդրում եմ, Դու «առանց նախատելու պարզապես տալիս ես» (Հակ. 1.5): Ամեն:

**Աստծո իմաստության կարիք ունեն՛, ուսի քանան՛ լսել Նրան:**



Ո՛վ Տեր, գիտես ինձ: (Եր. 12. 3)

## **ԱՍՏՎԱԾ ՊԻՏԻ ՄԵՋ**

**Վ**երջերս տեսա Միքեղանջելոյի «Մովսես» քանդակի լուսանկարը, որում շատ նկատելի է Մովսեսի աջ ձեռքի ուռուցիկ մկանը: Այն կծկվում ու ձգվում է ճկույթը բարձրացնելիս: Միքեղանջելոն, որ հայտնի է իբրև բարդ մանրամասնությունների վարպետ, մեծ ուշադրություն էր դարձնում իր քանդակած մարդկային մարմինների բոլոր նրբերանգներին, ավելացնում մանրամասներ, որ ուրիշները չէին անում: Դա բացատրվում էր նաև այն հանգամանքով, որ Միքեղանջելոն շատ լավ գիտեր մարդու մարմինը: Գրանիտի վրա նրա քանդակած այդ մանրամասնությունները նաև յուրատեսակ փորձեր էին բացահայտելու ավելի խոր մի բան՝ մարդու հոգին, ներքին կյանքը: Այդտեղ, իհարկե, Միքեղանջելոն թերանում է, որովհետև միայն Աստված գիտի մարդկային սրտի ամենախոր ապրումները: Որքան էլ խորաթափանց և ուշադիր լինենք, միմյանց մեջ մեր տեսածը ճշմարտության ստվերն է միայն: Բայց Աստված ստվերից ավելին է տեսնում: Երեմիա մարգարեն ասում է. «Ո՛վ Տեր, գիտես ինձ: Դու ինձ տեսնում ես և քննում ես իմ միտքը Բո հանդեպ» (12. 3): Աստծո իմացությունը մեր մասին տեսական կամ ուղեղային չէ: Նա մեզ ոչ թե հեռվից է նայում, այլ տեսնում է մեր քողարկված իրականությունը: Նա գիտի մեր կյանքի խորքերը, նույնիսկ այն բաները, որոնց դեմ պայքարում ենք ինքներս մեզ հասկանալու համար:

Անկախ մեր մարտահրավերներից ու մեր սրտում կատարվողից՝ Աստված տեսնում, իսկապես ճանաչում է ու գիտի մեզ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, ես զարմանում եմ և ուրախանում, որ իրապես ճանաչում ինձ և ուրախանում: Ամեն:

**Կյանքի իրավիճակները կարող են մտածելու տեղիք սալ, թե մենք մենակ ենք ու անսեպած: Բայց հիշենք, որ Աստված գիտի ու լավ է ճանաչում մեզ:**

Աստված լսեց տղայի ձայնը: (ԾՆՆ. 21.17)

## **ՄԵՆ-ՄԵՆԱ՞Կ**

**Ս**ուրբ ընտանիքը փլուզվում էր: Ամուսինը հանկարծակի դուրս էր եկել ու չէր վերադառնում: Երեխաները նույնպես չփոթված էին: Կինն առաջարկեց դիմել ամուսնական խորհրդատվության, բայց ամուսինն անդրդվելի էր: Հուսահատությունն ու խուճապը պատեցին Սուրեն, որովհետև նա մտավախություն ուներ, թե երեխաներին չի կարողանա միայնակ պահել:

Աբրամի և Սառայի ծառա Հագարը նույնպես նման մտավախություն ուներ: Չհամբերելով, որ Աստված իրենց խոստացած որդուն կտա (Ծնն. 12,15), Սառան իր ամուսնուն համոզեց եգիպտացի աղախին Հագարից երեխա ունենալ, և Հագարը ծնեց Իսմայելին (16.1-4, 15): Բայց երբ Աստված կատարեց Իր խոստումը, և Սառան ծնեց Իսահակին, ընտանեկան հարաբերություններն այնքան լարվեցին, որ Աբրահամը Հագարին իրենց որդի Իսմայելի հետ արձակեց՝ հաց և մի տիկ ջուր տալով (21, 8-21): Կարելի է պատկերացնել Հագարի հուսահատությունը, երբ անապատում շուտով սպառվեց նրանց ջրի պաշարը: Մայրը որդուն դրեց մի մացառի տակ, իսկ ինքը գնաց մի փոքր հեռու, որ որդու մահը չտեսնի: Երկուսն էլ լալիս էին: Եվ «Աստված լսեց տղայի ձայնը» (Հմ.17), հոգաց նրանց կարիքները և նրանց հետ էր:

Հուսահատության պահերին, երբ միայնակ ենք զգում, ստիպված կանչում ենք Աստծուն: Ի՞նչ մխիթարություն է իմանալ, որ թե՛ այդ պահերին, և թե՛ մեր ողջ կյանքում Նա լսում է մեզ, ապահովում և մնում մեզ մոտ:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, երախտապարտ եմ, որ երբեք մեճակ չեմ քայլում: Օգնի՛ր ինձ իմ հուսահատության պահերին: Ամեն:

**Ասված Տեսնում է մեզ մեր նեղությունների մեջ և հոգում մեր բոլոր կարիքերը: Փառք Իր սուրբ անվանը:**

Երբ դու հավատոյ վերագտնես, եղբայրներիդ հաստատուն պահիր: (Պուկ. 22.32)

## **ՄԻՇՏ ԷԼ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԻՐ ՄՈՏ**

**Ռ**աժը երիտասարդ տարիներին հավատում ու վստահում էր Հիսուսին, բայց շուտով հեռացավ հավատքից ու ապրում էր Աստուծոց հեռու: Որոշ ժամանակ անց նա կրկին որոշեց վերադառնալ եկեղեցի, և մի կին հանդիմանեց նրան երկար բացակայություն համար: Ռաժը խիստ ամաչեց ու եկեղեցին թողնելու համար մեղքի զգացումն սկսեց տանջել նրան: «Մի՞թե այլևս որևէ հույս չկա», - մտածում էր նա և մտաբերեց, թե ինչպես Քրիստոսը արդարացրեց Սիմոն Պետրոսին (Հովհ. 21.15-17)՝ չնայած վերջինս ուրացել էր իրեն (Ղուկ. 22. 34, 60-61):

Պետրոսն ակնկալում էր նախատինք ու պատիժ, բայց ներում ստացավ: Հիսուսը նույնիսկ չհիշեց նրա մերժումը, փոխարենը հնարավորություն տվեց վերահաստատելու իր սերը Քրիստոսի հանդեպ և հոգալ իր հետևորդների մասին (Հովհ. 21. 15-17): Կատարվում էին նախքան Պետրոսի ուրացումը Հիսուսի ասած խոսքերը. «Երբ դու հավատոյ վերագտնես, եղբայրներիդ հաստատուն պահիր» (Ղուկ. 22.32): Ռաժը Աստուծոց խնդրեց նույն ներումն ու վերականգնումը, և այսօր նա որ միայն քայլում է Հիսուսի հետ, այլև ծառայում է եկեղեցում և աջակցում մյուս հավատացյալներին: Անկախ նրանից, թե որքան ենք հեռացել Աստուծոց, Նա միշտ պատրաստ է մեզ ոչ միայն ներելու և ետ ընդունելու, այլև վերանորոգելու, որպեսզի մենք կարողանանք սիրել, ծառայել ու փառավորել իրեն: Մենք երբեք Աստուծոց չենք հեռանում, հետևաբար Նրա սիրառատ թևերը լայն բացված են մեզ համար:

**Աղոթք** - Հայ՛ր, շնորհակալ եմ Քո անսահման ողորմության և ինձ հետ ունեցած հարաբերության համար: Շնորհակալ եմ, որ կարող եմ վստահել Քո հավիտենական սիրոն: Ամեն:

**Աստուծոյ վերադառնալիս կարող եմ մտավախություններ ունենալ, սակայն Նրա ներողամիտ սիրջը մեզ կօգնի այդ գործում:**

Տերը տալիս է իր խոսքը, ավետող մարդիկ մեծ բազմություն են: (Մաղմ. 68.11)

## **ԱՍՏՈՆ ԳՁՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

2020-ին նշվեց 100-ամյակը ԱՄՆ Սահմանադրության այն բարեփոխման, ըստ որի՝ կանայք ստացան ընտրելու իրավունք: Հին լուսանկարներում երթի մասնակիցները բռնել են պաստառներ, որոնցից մեկի վրա գրված են 68-րդ Սաղմոսի կետերից երկուսը. «Տերը տալիս է իր խոսքը, ավետող մարդիկ մեծ բազմություն են: Զորքերի թագավորները պիտի փախչեն փախեփախ, տան մեջ բնակվող կինը պիտի բաժանի ավարը» (Հմ.11-12): 68-րդ սաղմոսում Դավիթը Աստծուն նկարագրում է որպես մեկը, որ «գերիններին հանում է հաջողության մեջ» (Հմ.6), գորացնում է իր հոգնած ժողովրդին, քաղցրությանը կերակուր է պատրաստում խեղճերի համար (Հմ.9-10): Այս սաղմոսի 35 կետերում Դավիթը քառասուններկու անգամ հիշատակում է Աստծուն՝ բացահայտելով, թե ինչպես է Նա միշտ եղել մարդկանց հետ, փրկել անարդարությունից ու տառապանքից, և ինչպես է կանանց բազմությունը հռչակում այդ ճշմարտությունը (Հմ.11): Անկախ այն բանից՝ հանուն ձայնի իրավունքի ցույցի դուրս եկած կանայք լիովին հասկանում էին, թե ոչ սաղմոսում հայտարարվածը, պաստառները հռչակում էին մի հավիտենական ճշմարտություն. «Որբերի հայրն ու որբեայրիների դատավորը» (Հմ.5) դուրս է գալիս իր ժողովրդի առջև՝ տանելով նրանց օրհնության, կազդուրման և ուրախության վայրեր:

Այսօր քաջայերվենք՝ հիշելով, որ Աստված միշտ եղել է իր ժողովրդի, և առանձնահատուկ՝ խոցելիների ու տառապալանների կողքին: Ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Աստված իր Հոգու միջոցով մեզ հետ է:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ իմ կյանքում Քո մշտական ներկայության համար: Դու առաջնորդում ես ինձ և պայքարում ինձ համար, երբ ես տառապանքի ու անարդարության եմ հանդիպում: Ամեն:

**Դժվարին իրավիճակներում ինչդե՞ս եմ զգացել քաջալերող Աստծո հոգսարությունը:**

Դրանք նաև գրի՛ր քո տան դրանդիների վրա և քո դռների վրա: (Բ.Օր. 6.9)

## **ՀԱՆԳԱՏՈՒԹՅՈՒՆ ԴՈՒՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆԴԻՆԵՐԻ ՎՐԱ**

**2016թ.** Հարավային Լուիզիանայում տեղի ունեցած ջրհեղե-  
**Չ**ղի օրերին լրահոսին հետևելիս տեսա ընկերոջս գրառումը:  
Տեսնելով, որ տունն ամբողջությամբ վերակառուցման ենթակա  
է, ընկերոջս մայրը նրան հուսադրել էր Աստծով և խորհուրդ  
տվել որոնել Նրան: Հետո ընկերս համացանցում տեղադրեց  
աստվածաշնչային համարների նկարներ, որոնք բացահայտել  
էր տան դրանդիները մաքրելիս: Դրանք հավանաբար գրվել  
էին տունը կառուցելու ժամանակ: Տախտակների վրա սուրբ  
գրույթյուններ կարդալը նրան մխիթարեց:

Դուների ու շեմքերի վրա աստվածաշնչյան համարներ գրելու  
սովորությունը կարող է ծագած լինել Իսրայելին տրված Աստ-  
ծո պատվերից: Որպեսզի չմոռանան, թե ով է Ինքը, Աստված  
խրայելցիներին հրահանգեց Իր պատվիրանները գրել դրանդի-  
ների վրա: Այդ խոսքերը պահելով իրենց սրտերում (Բ. Օր.6.6),  
դրանք սովորեցնելով իրենց երեխաներին (Հմ.7), Աստծո պատ-  
վիրանները հիշելու համար օգտագործելով խորհրդանիշներ և  
այլ միջոցներ (Հմ.8), նաև դրանդիների վրա ու մուտքերին  
գրելով (Հմ.9), իսրայելցիները միշտ հիշելու էին Աստծո խոս-  
քերը: Այդպիսով նրանք խրախուսվեցին, որ բնավ չմոռանան  
Աստծո ասածներն ու իրենց համար արածները:

Աստծո խոսքերը մեր տներում ցուցադրելը, ինչպես նաև  
դրանց իմաստը մեր սրտերում սերմանելը կարող է օգնել մեզ  
կառուցելու այն հիմքը, որն ապավինում է Նրա հավատար-  
մությանը, ինչպես գրված է Սուրբ Գրքում: Իսկ Նա այդ խոս-  
քերը կարող է օգտագործել՝ մխիթարելու մեզ նույնիսկ ողբեր-  
գության կամ ցավալի կորստյան ժամանակ:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալություն Աստվածաշնչի  
համար, որ առաջնորդում է իմ ճանապարհը: Հիշեցրու՛ ինձ, որ  
դրա վրա կառուցեմ իմ հիմքերը: Ամեն:

**Աստվածաշունչը մխիթարում է մեզ, իսկ նրանում ամփոփված  
ճճհարսությունները կազմում են մեր կյանքի հիմքերը:**

Դրա համար միմյանց քաջալերե՛ք և ամրապնդե՛ք, ինչպես որ արդեն անում եք: (Ա. Թես. 5. 11)

## **ՔԱՋԱԼԵՐԱՆՔԻ ՋՐԵՐ**

**Ա**րդեն տասնհինգ տարուց ավելի է վաղ գարնանը մեր բա-  
կի խոտերը շատ հիվանդ տեսք են ունենում և այնքան  
փոշոտված են լինում, որ դառնում են սրճագուլյն: Կոլորադո-  
յում ձյուն տեղում է միայն լեռներում, իսկ Հարթավայրերում  
կլիման չոր է, տաք ամիսներին՝ անապատային: Մայիսի վերջե-  
րին ես միացնում եմ ջրցանները և ոչ թե առատ ջրում, այլ  
հետևողականորեն այսպես ասած «լվանում» խոտերը: Եվ մոտ  
երկու շաբաթում չոր ու սրճագուլյն խոտերը վերածվում են  
փարթամ ու գեղեցիկ կանաչի:

Այդ կանաչ խոտն ինձ հիշեցնում է, թե որքան կենսական  
բան է քաջալերանքը: Առանց դրա՝ մեր կյանքն ու հավատքը  
կարող են գրեթե անկենդան բանի նմանվել: Զարմանալի է, թե  
ինչ կարող է անել հետևողական քաջալերանքն ու հորդորը  
մեր մտքերին ու հոգիներին: Թեսաղոնիկեցիներին ուղղված  
առաջին նամակում Պողոսն ընդգծում է այս ճշմարտությունը:  
Ժողովուրդը պայքարում էր անհանգստություն ու վախի դեմ,  
և Պողոսը, տեսնելով, որ հարկավոր է ամրապնդել նրանց հա-  
վատքը, հորդորեց. «միմյանց քաջալերե՛ք և ամրապնդե՛ք, ինչ-  
պես որ արդեն անում եք» (Ա. Թես. 5. 11): Նա գիտեր, որ  
առանց նման թարմացման, նրանց հավատքը կարող է թառա-  
մել, և անձամբ փորձեց, քանի որ թեսաղոնիկեցիները քաջալե-  
րանք էին իր համար: Դու և ես նույնպես ունենք այդ հնարա-  
վորությունը՝ քաջալերել, հորդորել և խրախուսել միմյանց, օգ-  
նել որ ծաղկեն ու աճեն:

**Աղոթք** -Յայր, շնորհակալ եմ Քեզ այն քաջալերանքի համար,  
որ ստացել եմ: Օգնիր, որ ես էլ քաջալերեմ ուրիշներին: Ամեն:

**Ինչդես որ մենք ունենք քաջալերանքի կարիք, այնդես էլ  
դասրաս լինենք քաջալերել ու հույս ներշնչել ուրիշներին:**



Դավիթը վերցնում էր քնարն ու նվագուն իր ձեռքով, և հանգստանում ու լավ էր զգում Սավուղը: (Ա. Թագ. 16.23)

## **ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

**Ե**րբ հնգամյա Բեղան քաղցկեղի պատճառով տեղավորվեց Հյուսիսային Դակոտայի հիվանդանոցում, որպես ապաքինման մի մաս՝ ստացավ երաժշտական բուժում: Շատ հետազոտողներ են փաստել երաժշտության դերական ազդեցությունը մարդկանց տրամադրության վրա, և այժմ բժիշկները քաղցկեղով, Պարկինսոնի և Ալցհեյմերի հիվանդություններով տառապողներին առաջարկում են բուժման այդ եղանակը:

Սավուղ թագավորը նույնպես երաժշտական ղեղատոմսի կարիք ուներ: Սպասավորները, տեսնելով, որ թագավորը կորցրել է հոգեկան անդորրը, առաջարկեցին գտնել մեկին, որը նրա համար քնար կնվագեր և կուրախացներ (Ա. Թագ. 16.16): Նրանք մարդ ուղարկեցին Հեսսեի որդի Դավթին բերելու: Սավուղին դուր եկավ Դավթի ծառայությունը, և նա խնդրեց, որ իր մոտ մնա, «որովհետև նա շնորհ գտավ իմ առաջ» (Հմ. 22): Դրանից հետո Դավիթը նվագում էր իր քնարը, Սավուղը լավ էր զգում, և չար ոգին հեռանում էր նրանից:

Մենք պարզապես գիտականորեն բացահայտել ենք այն, ինչը Աստված գիտեր: Որպես մեր մարմնի ու երաժշտության հեղինակ ու ստեղծող՝ Նա մեզ տվել է ղեղատոմս մեր առողջության համար, որը հասանելի է բոլորին՝ անկախ այն բանից, թե որ դարաշրջանում ենք մենք ապրում կամ որքան հեշտ է բժշկին այցելելը: Նույնիսկ եթե լսելու հնարավորություն չկա, մենք կարող ենք մեր ուրախությունների ու դժվարությունների մեջ գովերգել Աստծուն՝ ստեղծելով մեր անձնական երաժշտությունը (Սաղմ. 59. 16, Գործք 16. 25):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ երաժշտություն ստեղծելու և դժվարությունների ժամանակ միտքս ու սիրտս հանգստացնելու նպատակով այն օգտագործելու համար: Ամեն:

**Ասված երաժշտությունն օգտագործում է մեզ հանգստացնելու համար:**

Որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ մնացեք: (Գոռն. 12. 18)

## **ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԵՎ ԹՇՆԱՄԻՆԵՐ**

**Ա**ստվածաբան Քեննեթ Բեյլին պատմում է աֆրիկացի մի առաջնորդի մասին, որը միջազգային հանրություն մեջ անսովոր դիրք ուներ: Նա լավ հարաբերություններ էր հաստատել ինչպես Իսրայելի, այնպես էլ նրան շրջապատող ազգերիը հետ: Երբ մեկը նրան հարցրեց այդ մասին, նա պատասխանեց. «Մենք ընտրում ենք մեր բարեկամներին և չենք քաջալերում այն բարեկամներին, որոնք ընտրում են մեր թշնամիներին»:

Սա իմաստուն և գործնական միտք է: Ինչի որ աֆրիկյան այդ երկիրը հասել է միջազգային մակարդակով, Պողոսը իր ընթերցողներին խրախուսում էր հասնել անձնական մակարդակով: Քրիստոսի կողմից փոխված կյանքի առանձնահատկությունների երկար նկարագրության ժամանակ Պողոսը գրել է. «Որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղություն մնացեք» (Հռոմ. 12. 18): Մեր փոխհարաբերությունների կարևորությունը ամրապնդելու համար նա շարունակում է մեզ հիշեցնել, թե ինչպես վարվենք նույնիսկ մեր թշնամիների հետ (Հմ. 20-21): Այդ վարվելակերպը արտացոլում է մեր վստահությունը և Աստծուց ու Նրա գերագույն խնամքից կախված լինելը: Հնարավոր չէ բոլորի հետ խաղաղ ապրել (ի վերջո Պողոսն էլ է ասում՝ որքան ձեզանից է կախված): Բայց որպես Հիսուսին հավատացողներ՝ մեր պարտականությունն է թույլ տալ, որ Նրա իմաստնությունն առաջնորդի մեր կյանքը (Հակ. 3. 17-18), որպեսզի մեզ շրջապատողներին ներգրավենք որպես խաղաղարարներ (Մատթ. 5.9): Կա՞ խաղաղության արքային հարգելու առավել լավ միջոց:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, Ես Քո թշնամին եմ, դու ինձ բարեկամ կոչեցիր: Օգնի՞ր ինձ, որ խաղաղարար լինեմ, որպեսզի կարողանամ նույն շնորհքը ցուցաբերել ուրիշների հանդեպ: Ամեն:

**Պայտարում եմք խաղաղ աղոթելու համար: Ձանանք խաղաղություն ստեղծել և շնորհք ներգրավել այդ հակամարտության մեջ:**



Համբերությամբ ընթանանք մեր առջև բացված մրցասպարեզ: (Եբ.12.1)

## **ՎԱԶԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ**

**Ա**նհնար էր առանց հուզմունքի նայել ընկերուհուս՝ Իրայի մասին հերթական տեղեկությունը: 2022-ին Ուկրաինայի մայրաքաղաք Կիևից դուրս գալուց մի քանի օր անց նա համացանցում տեղադրեց անցյալի իր լուսանկարներից մեկը, որում նա վազքի մրցումներից հետո բարձրացրել էր իր երկրի դրոշը: «Մենք բոլորս էլ մեր հնարավորության սահմաններում անցնում ենք մի մարաթոն, որ կյանք է կոչվում: Եկե՛ք այս օրերին այդ մրցարշավն անցնենք ավելի լավ մի բանով, որը երբեք չի մեռնում մեր սրտերում»: Հաջորդ օրերին ընկերուհիս շարունակում էր «իր մրցարշավը»՝ նոր տեղեկություններ հաղորդելով ու հորդորելով, թե ինչպես օգնել իր երկրում տառապողներին:

Իրայի խոսքերը նոր իմաստ հաղորդեցին եբրայեցիներին ուղղված նամակի 12-ում հավատացյալներին ուղղված «Համբերությունը ընթանանք» (Հմ.1) կոչին: Այն հետևում է 11-րդ գլխում նշված հավատքի հերոսների հուզիչ պատմությանը «չատ վկաների բազմության» (12.1) մասին, որոնք ապրել են համարձակ, անսասան հավատքով՝ վտանգելով իրենց կյանքը (11. 33-38): Թեև նրանք «հեռվից տեսնում էին (Աստծո խոստումներն) ու ողջունում» (11.13), ապրում էին հավիտենական ու անմահ մի բանի համար:

Հիսուսին հավատացողները կոչված են ապրելու նույն կերպ: Որովհետև Աստծո թագավորության հաղթանակի, ծաղկունքի ու խաղաղության համար արժե ամեն ինչ տալ: Քանի որ Քրիստոսի օրինակն ու զորությունն է, որ աջակցում է մեզ (12. 2-3):

**Աղոթք** - Միրելի՛ Հայր, խոսքեր չեմ գտնում՝ Քո ժողովրդի հավատքի ու քաջության պատկերները տեսնելով: Ինձ տու՛ր Քեզ հետևելու քաջություն: Ամեն:

**Դեռ տեսնում եմ խիզախ հավասֆի օրինակներ, և Հիսուսի օրինակը մեզ հույս է ներշնչում:**

Սիրե՛ք ձեր թշնամիներին: (Ղուկ. 6.27)

## ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԽԱՂԸ

**Չ**եռքսեղմումը շատ խոստուն բան է: 1963-ի մարտյան մի երեկո քոլեջի երկու բասկետբոլիստներ՝ մեկը՝ սև, մյուսը՝ սպիտակ, արհամարհելով անջատողականների հրահրած ազգամիջյան ատելությունը, սեղմեցին միմյանց ձեռք: Դա դարձավ Միսիսիպի նահանգի պատմության մեջ առաջին դեպքը, երբ սպիտակ տղամարդկանց թիմը խաղում էր խառը թիմի դեմ: Ազգային մրցաշարի ժամանակ խաղալով Չիկագոյի Լոյոլա համալսարանի թիմի դեմ՝ Միսիսիպիի թիմը անտեսեց իրենց սպառնացող հրամանագիրը, մրցակից սևամորթներն էլ՝ զանազան նախատինքներ, հայհոյանքներ ու փակ դռներ: Նրանք շարունակում էին խաղալ: Ի վերջո սևամորթների թիմը դարձավ չեմպիոն: Եվ ո՞րն էր այդ հաղթանակի իրական պատճառը. ատելությունից դեպի սեր կատարված ընդամենը մեկ քայլ: Ինչպես սովորեցրել է Հիսուսը. «Սիրե՛ք ձեր թշնամիներին, բարիք արեք ձեզ ատողներին» ( Ղուկ. 6.27):

Աստծո այդ հորդորը կյանք փոխող հասկացություն է: Քրիստոսը սովորեցնում է, որ մեր թշնամիներին սիրելու համար հարկավոր է հնազանդվել փոխվելու հեղափոխական հրամանին: Ինչպես գրել է Պողոսը. «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ.Կորնթ. 5.17):

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ ուրիշներին տեսնեմ ոչ որպես թշնամիների, այլ որպես Քո թանկագին մարդկանց, որոնք սիրում են Հիսուսի նման: Ամեն:

**Կյանքում լինում են ուրիշներին իբրև թշնամի տեսնելու դայմաններ ու հանգամանքներ: Բայց դե՞ս է այդ ասելությանը դիմակայել սիրով:**

Հանդարտ մնացե՛ք և ճանաչե՛ք, որ ես եմ Աստվածը: (Սաղմ. 46.10)

## ԱՍՏԾՈ ԱՌՋԵՎ ՀԱՆԴԱՐՏ

**Ա**ռաջին լուսանկարն արել է *Լուի Դագերը 1838թ*: Այն պատկերում է *Փարիզի դատարկ պողոտայում հետմիջօրեին կանգնած մի մարդու*: Լուսանկարում ակնհայտ անճշտություն կա, որովհետև օրվա այդ ժամին փողոցն ու մայթերը պետք է, որ եռուն ու լեցուն լինեին մարդկանցով և կառքերով: Իրականում, այդպես էլ կար, մարդը մենակ չէր: Ուղղակի այդ ամենը չէին երևում լուսանկարում, որովհետև այդ շրջանում դեռ հնարավոր չէր այդ ամենը ներառել լուսանկարում, իսկ լուսանկարվողը պետք է շարժման մեջ չլիներ: Եվ միայն Դագերի մշակած տեխնիկայի շնորհիվ հետագայում լուսանկարը դարձավ ավելի խոսուն ու հետաքրքիր:

Երբեմն հանդարտությունը կարող է կատարել այնպիսի դեր, ինչպիսին չեն կարող շարժումն ու ջանքերը: Սաղմոս 46-ի 10-ում Աստված ասում է Իր ժողովրդին. «Հանդարտ մնացե՛ք և ճանաչե՛ք, որ ես եմ Աստվածը»: Նույնիսկ այն ժամանակ, երբ ազգերը «խռովություն մեջ են» (Հմ.6), երբ երկիրը փոխվում է ու «ցնցվում» (Հմ.2), լուռ ու հանգիստ Նրան ապավինողները շուտով «Աստծով օգնություն» (Հմ.1) կգտնեն:

Երբ մենք մեր սահմանափակ ջանքերին ապավինելու փոխարեն՝ հանգստանանք Աստծո հետ, կբացահայտենք, որ Նա մեր անառիկ «ապավենն ու զորությունն է» (Հմ.1):

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ վստահեմ Քեզ ու հանգստանամ քո սիրո հանդարտության գիտակցումով: Ամեն:

**Եթե ուզում ես ներկայանալ Աստծոն, դեպք է ավելի շատ վստահես Նրան:**

Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է և օգտակար ուսուցանելու, հանդիմանելու, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար: (Բ. Տիմ. 3.16)

## **ՍՈՎՈՐԵԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ**

**1** 800-ական թթ. վերջերին մի խումբ մարդիկ տարբեր վայրերում միաժամանակ մշակեցին հոգևոր կրթության նույնաման ծրագրեր: Առաջինը Մոնրեալում (Կանադա) էր 1877-ին: 1898-ին մեկ այլ հայեցակարգ ձևավորվեց Նյու Յորքում: Մինչև 1922 թվականը Հյուսիսային Ամերիկայում ամեն ամառ մոտ հինգ հազար այդպիսի ծրագիր է դրվել գործածության մեջ: Այսպես սկսվեց Աստվածաշնչի արձակուրդային դպրոցի կամ սուրբգրային ամառային վարժարանի պատմությունը, որի առաջնորդների սերն էր, որ առիթ տվեց հազարավոր մանուկների ծանոթանալ Աստվածաշնչին: Պողոսը նման բուռն սերունդներ իր երիտասարդ հովանավորյալի՝ Տիմոթեոսի հանդեպ, որին պատվիրեց պատրաստ լինել «ամեն բարի գործի» (Բ. Տիմ.3. 16-17): «Աստվածաշունչը կարգալու խորհուրդը միայն բարի առաջարկ է: Պողոսի հորդորը հետևում է սարսափելի մի նախազգուշացման, թե «վերջին օրերին չար ժամանակներ կգան» (Հմ.1), կեղծ ուսուցիչներով, որոնք «երբեք չեն կարողանում հասնել ճշմարտության գիտությունը» (Հմ.7): Եվ շատ կարևոր է, որ մենք պաշտպանվենք Սուրբ Գրքով, քանի որ այն «կարող է քեզ իմաստուն դարձնել փրկության համար այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսով է» (Հմ.15): Աստվածաշնչի ուսումնասիրությունը կարևոր է թե՛ մանուկների, և թե՛ մեծերի համար: Եվ դա ամենօրյա գործ պիտի լինի, ոչ թե միայն ամառային արձակուրդի օրերի զբաղմունք: Պողոսը Տիմոթեոսին գրել է «մանկուց գիտես Սուրբ Գիրքը» (Հմ.15), բայց երբեք ուշ չէ այն սկսելու համար: Կյանքի որ փուլում էլ լինենք, Աստվածաշնչի իմաստնությունը մեզ կապում է Հիսուսի հետ:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ քեզ Աստվածաշնչի պարգևի և այն բանի համար, թե ինչպես է այն օգնում ինձ սովորել Հիսուսի մասին: Ամեն:

**Վսահաբար ունեն՛ք սուրբգրային նախընտրելի հասկածներ, որոնք մեզ ցույց են տալիս Տեր Հիսուսին:**

Ահա ես դռան առաջ կանգնած եմ ու բախում եմ: (Յայտն. 3.20)

## ՄԵՆԱԿ ՉԵՆՔ

**Տ**րեղերիկ Բրաունը «Թակոց» խորագրով զգայացունց վեպում գրում է. «Երկրի վերջին մարդը նստած էր սենյակում, երբ դուռը թակեցին: Ո՞վ կարող էր լինել և ի՞նչ կարող էր ուզել: Ի՞նչ խորհրդավոր էակ է: Մարդը մենակ չէ՛»:

Մենք էլ մենակ չենք:

Հաոգեկիրայի եկեղեցին դռան թակոց լսեց (Հայտն. 3.20): Ի՞նչ գերբնական էակ էր եկել նրանց մոտ: Նրա անունը Հիսուս էր «Առաջինն ու վերջինը և ողջը» (1. 17-18), «նրա աչքերը կրակի բոցի պես էին, իսկ երեսը ճառագում էր, ինչպես արեգակն իր զորութեամբ» (Հմ.14-16): Երբ Նրա լավագույն բարեկամ Հովհաննեսը տեսավ Նրա փառքը, «մեռածի պես նրա ոտքերի առաջ ընկավ» (Հմ.17): Հիսուսի հանդեպ հավատն սկսվում է Աստծուց վախով:

Մենք մենակ չենք, ու դա նաև մխիթարական է: Հիսուսը «Նրա փառքի լույսն ու նրա էութեան արտահայտումն է, որ իր խոսքի զորութեամբ ամեն բան կրում է» (Եբ. 1.3): Քրիստոսն իր ուժն օգտագործում է ոչ թե մեզ սպանելու, այլ սիրելու համար: Լսի՛ր նրա հրավերը. «Եթե մեկն իմ ձայնը լսի և դուռը բացի, նրա մոտ կմտնեմ ու նրա հետ կընթրեմ, նա էլ՝ ինձ հետ» (Հայտն. 3.20): Մեր հավատքն սկսվում է վախով, թե ով կա դռան մոտ: Եվ ավարտվում է ողջունով ու գրկախառնությամբ: Հիսուսը խոստանում է միշտ մնալ մեզ հետ, նույնիսկ եթե մենք վերջին մարդն ենք երկրի վրա: Փառք Աստծո, որ մենք մենակ չենք:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, ողջունում եմ քեզ իմ սրտում ու կյանքում: Ամեն:

**Հնարավոր չէ Քրիստոսի զորությունն առանձնացնել իր սիրուց: Երկուսն էլ կենսական կարևորություն ունեն մեզ համար:**

Եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար՝ մեր մեղքերը ներելու և մեզ ամեն անիրավությունից մաքրելու: (Ա.Յովհ. 1.9)

## **ՄԱՔՐԵԼ ՄԵՂՔԵՐԸ**

**Մ**եր պարտեզի խողովակի մոտ մի փոքրիկ մոլախոտ նկատեցի, բայց չպոկեցի՝ մտածելով, որ անվնաս է: Սակայն մի քանի շաբաթ անց այն մեծացավ, ծավալվեց ու բռնեց ամբողջ բակը: Ստիպված ամուսնուս խնդրեցի, որ արմատախիլ անի դրանք և մոլախոտի աճը կանխելու համար համապատասխան դեղանյութով մշակի տարածքը:

Եթե անտեսենք կամ ժխտենք մեղքի առկայությունը, այն մոլախոտի նման կարող է ներխուժել մեր կյանք և մթագնել մեր անձնական տարածքը: Մեր անմեղ Աստվածն իր մեջ բոլորովին չունի խավար: Որպես իր զավակներ՝ մենք պատրաստված ու լիցքավորված ենք մեր մեղքերին դիմագրավելու, որպեսզի «լույսի մեջ քայլենք, ինչպես որ նա է լույսի մեջ» (Ա.Հովհ. 1.7): Խոստովանության ու ապաշխարության միջոցով կունենանք մեղքերի թողություն ու կմաքրվենք (հմ.9), որովհետև ունենք մեծ պաշտպան ու բարեխոս՝ Հիսուսին (2.1):

Նա ոչ միայն մեր, այլև ողջ աշխարհի մեղքերի գերագույն գիրը (հմ.2) պատրաստակամորեն վճարեց իր արյամբ:

Երբ Աստված մեր ուշադրությունն է հրավիրում մեր մեղքի վրա, կարող ենք ուրանալ, ժխտել ու խուսափել պատասխանատվությունից: Բայց երբ խոստովանենք ու ապաշխարենք, Նա կմաքրի մեր մեղքերը, որոնք վնասում էին իր և ուրիշների հետ մեր հարաբերություններին:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, խնդրում եմ արմատախիլ արա իմ կյանքի մեղքերը, որպեսզի կարողանամ ավելի մոտենալ Քեզ և ուրիշներին: Ամեն:

**Մեր մեջ եղած մեղքերը վիրավորում ու ցավեցնում են Ասծուն:**  
**Ուսի տեսք է խոստովանել դրանք և խնդրել, որ Նա արմատախիլ անի դրանք ու մաքրի:**

Ձեռքը դրեց նրա վրա և ասաց. «Սավուղ եղբայր, Տերն ինձ ուղարկեց»:  
(Գործք. 9.17)

## ՍԱՎՈՒՂ ԵՂԲԱՅՐ

**Տ**արիներ առաջ, երբ մասնակցում էի ուսանողների փոխա-  
նակման ծրագրին, աղոթում էի.«Տե՛ր, խնդրում եմ ինձ  
ցանկացած տեղ ուղարկիր, բացի այդ մի վայրից»։ Չգիտեի,  
թե ուր եմ գնալու, բայց հաստատ գիտեի՝ ուր չէի ուզում գնալ։  
Չգիտեի այդ երկրի լեզուն և նախապաշարումներ ունեի այդ  
ժողովրդի հանդեպ։ Հետևաբար խնդրեցի Աստծուն, որ ինձ այլ  
տեղ ուղարկի։

Բայց Աստված իր անսահման իմաստնությունամբ ինձ ուղար-  
կեց հենց իմ չուզած տեղը։ Հիմա ես այնքա՛ն ուրախ եմ, որ  
այդպես եղավ։ Քառասուն տարի անց էլ ես այդ երկրում ու-  
նեմ սիրելի ընկերներ։ Իմ ամուսնուկության ժամանակ ընկերս՝  
Ստեֆանը, եկավ այնտեղից, հետո ես փոխադարձեցի իմ այցե-  
լուծյամբ։ Շուտով էլի ենք հանդիպելու։

Գեղեցիկ բաներ են լինում, երբ Աստված սրտի փոփոխու-  
թյուն է անում։ Այդպիսի փոխակերպում է ցույց տրվում ըն-  
դամենը երկու բառով. «Սավո՛ւղ եղբայր» (Գործք 9.17)։ Սրանք  
Անանիայի խոսքերն են։ Նա մի հավատացյալ էր, որին Աստ-  
ված կանչել էր Սողոսի դարձից հետո նրա տեսողությունը վե-  
րադարձնելու» (Հմ.10-12)։ Անանիան Սողոսի դաժան անցյալի  
պատճառով սկզբում դիմադրում է և աղոթում. «Տե՛ր, ես շա-  
տերից լսեցի այդ մարդու մասին, թե որքան չարիքներ է արել  
Քո սրբերին» (Հմ.13)։ Սակայն ի վերջո հնազանդվեց ու գնաց։  
Եվ քանի որ Սողոսի սիրտը փոխվեց, Անանիան ձեռք բերեց հա-  
վատակից մի նոր եղբայր։ Սողոսը հայտնի դարձավ որպես Պո-  
ղոս և Հիսուսի բարի լուրը Աստծո զորությունամբ տարածվեց։  
Իրական փոփոխությունը միշտ էլ հնարավոր է նրա միջոցով։

**Աղոթք** -Տե՛ր Գիսուս, շնորհակալ եմ, որ Քո սիրով փոխում ես  
իմ սիրտը։ Օգնի՛ր, որ այդ սերը տարածեմ ուրիշների վրա։  
Ամեն։

**Ասված մեզ կոչ է անում փոխել մեր սրտերը և նորոգել մեզ,  
որոգեսգի ուրիշ հավասացյալների հետ լինենք փույր ու եղբայր։**

Հիրավի, իմ անձը հանդարտեցրի և հանգստացրի մոր կաթից կտրված մանկան պես, իմ անձը կաթից կտրված մանկան պես: (Մաղմ. 131. 2)

## **ԳՈՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հոգեբույժը խորհուրդները սյունակում պատասխանել էր Բրենդային, որը բողոքում էր իր փառասիրական հակումներից: Պատասխանը բավական խիստ էր. «Մարդիկ ստեղծված չեն երջանիկ լինելու համար, - գրել էր նա, - այլ միայն գոյատևելու ու վերարտադրվելու»: Մասնագետն այնուհետև ավելացրել էր, թե մենք դատապարտված ենք հետապնդելու գոհունակություն «ծաղրող ու խուսափողական թիթեռին և ոչ միշտ բռնելու նրան»: Զարմանում եմ, թե ինչ էր զգում Բրենդան հոգեբույժի սպանիչ խոսքերը կարգալույժ և որքան տարբեր կլինեին նրա զգացողությունը, եթե դրա փոխարեն կարգար 131-րդ սաղմոսը: Դրանում Դավիթը ուղղորդված խորհուրդ է տալիս, թե ինչպես կարելի է գտնել գոհունակություն: Նա սկսում է խոնարհ կեցվածքով՝ մի կողմ դնելով իր թագավորական փառասիրությունը, «ես գործ չունեմ մեծամեծ բաների հետ և ոչ էլ այն բաների հետ, որ բարձր են ինձնից» (Հմ.1): Ապա հանդարտեցնում է իր սիրտը (Հմ.2)՝ հույսը դնելով Տիրոջ վրա (Հմ.3): Արդյունքը շատ գեղեցիկ է ստացվում. «Իմ անձը՝ կաթից կտրված մանկան պես է» (Հմ.2): Մեր աշխարհի նման կոտրված աշխարհում գոհունակությունը երբեմն կարող է խաբուսիկ լինել: Փխլիպեցիներին ուղղված նամակում Պողոսն ասում է, որ գոհունակությունը սովորելու բան է (Չ. 11-13): Բայց եթե մենք հավատում ենք, որ ստեղծված ենք միայն «գոյատևելու ու վերարտադրվելու» համար, ապա գոհունակությունը անկասկած անհասանելի թիթեռ կդառնա: Դավիթը ցույց է տալիս գոհունակության հասնելու մեկ այլ ճանապարհ. դա Աստծո ներկայությունը հանգստանալն է:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, հանգստանում եմ Քեզանով՝ իմ ամենախսկական գոհունակության ամենաառատ աղբյուրով: Ամեն:

**Ինչ որսագաներում ու վիճակներում էլ լինենք, գոհունակության Տրամադրություն ունենանք և ավելի մոտենանք Ասծուն:**



Թեև մեր արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդն օրե-օրս նորոգվում է: (Բ. Կորնթ. 4.16)

### **ՀՈԳԵՎՈՐ ՆՈՐՈԳՈՒՄ**

**Չ**ինական բժշկությունը հազարավոր տարիներ ի վեր մաշկը թարմացնելու համար կիրառում է մարգարտի փոշի: Ռու-մինիայում այդ նույն նպատակով շատ պահանջված է բուժա-կան ցեխի գործածումը: Ամբողջ աշխարհում մարդիկ օգտա-գործում են մաշկը երիտասարդացնելու, մարմնի խնամքի զա-նազան միջոցներ՝ կարծելով, թե դրանք թարմացնում են ամե-նաթառամած մաշկն անգամ:

Մեր ֆիզիկական մարմինը պահպանելու համար կիրառված միջոցները կարող են ապահովել միայն ժամանակավոր արդ-յունք: Ավելի կարևոր է, որ հոգեպես առողջ և ուժեղ մնանք: Որպես Հիսուսին հավատացողներ՝ մեզ տրված է հոգևոր նորոգման պարգևը՝ իր միջոցով: Պողոս առաքյալը գրում է. «Թեև մեր արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է» (Բ. Կորնթ. 4.16): Մեր կյանքի ամենօրյա մարտահրավերները՝ վախը, ցավն ու անհանգստու-թյունը կարող են ծանրաբեռնել մեզ: Հոգևոր նորոգումը դա-լիս է այն ժամանակ, երբ մենք «տեսանելի բաներին չենք նա-յում, այլ անտեսանելիներին» (Հմ.18): Մենք դա անում ենք՝ մեր ամենօրյա հոգսերը հանձնելով Աստծուն և աղոթելով, որ Սուրբ Հոգու պտուղը՝ սերը, ուրախությունն ու խաղաղությու-նը, դարձյալ հայտնվեն մեր կյանքում (Գաղ. 5.22-23): Երբ մեր ղեկարույթյունները հանձնենք Աստծուն և թույլ տանք, որ Նրա հոգին ճառագայթվի մեր մեջ ամեն օր, նա կվերականգնի մեր հոգիները:

**Աղոթք** - Հիսուս, ես ամեն օր խոչընդոտների եմ հանդիպում, որոնք թուլացնում են հոգիս: Երբեմն պարտված եմ զգում, բայց գիտեմ, որ Քո միջոցով հոգիս կարող է նորոգվել: Ամեն:

**Սուրբ Հոգին գործում է մեզ փառալերելու համար: Ուստի ղեկ է Աստուծոյ խնդրել, որ նորոգի մեր հոգին:**

Եվ Աստված յոթերորդ օրն ամբողջացրեց իր գործը, որ արել էր, և յոթերորդ օրը հանգստացավ իր կատարած բոլոր գործերից: (ԾՆ. 2.2)

### **ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Ե**ս ու ընկերուհիս նստեցինք ծովափի քարերին ու սկսեցինք գիտել իրար հետևից վազող ալիքների խաղը: Հանկարծ Սյուզին ասաց. «Սիրում եմ օվկիանոսը, որի ծփանքը հանգստացնում է ինձ»:

Մեզանից յուրաքանչյուրը յուրովի է զգում հանգստանալու, աշխատանքն ընդմիջելու կարիքը: Հենց այդ է մեզ առաջարկում մեր բարի Աստվածը: Վեց օր աշխատելով՝ Նա ստեղծեց լույս, հող, բուսականություն, կենդանիներ և մարդուն: Իսկ յոթերորդ օրը Նա հանգստացավ (ԾՆ. 1.31-2.2): Տասը պատվիրաններում Աստված թվարկում է ապրելակերպի այն կանոնները, որոնցով մարդիկ հարգելու են Իրեն (Ելք 20. 3-17): Այդ կանոնների մեջ է նաև շաբաթ օրը իբրև հանգստյան օր հիշելու պատվիրանը (Հմ.8-11): Նոր Կտակարանում տեսնում ենք, թե ինչպես է Հիսուսը բուժում քաղաքի բոլոր հիվանդներին (Մարկ.1.29-34), իսկ հաջորդ առավոտյան մեկուսանում է՝ աղոթելու (Հմ.35): Այսինքն՝ մեր Աստվածը և՛ աշխատեց, և՛ հանգստացավ:

Հանգստի աստվածային նախատեսությունը առկա է նաև բնության մեջ: արնանը տնկածը աճում է ամռանը, բերք տալիս աշնանը, հանգստանում՝ ձմռանը: Այդպես է նաև օրվա ռեժիմը՝ առավոտ, կեսօր, երեկո և գիշեր: Աստված ձևավորում է մեր կյանքը թե՛ աշխատանքի, և թե՛ հանգստի համար՝ առաջարկելով երկուսն էլ կատարել:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ ստիպեցիր հետևել Քո սրտին և աշխատել ու հանգստանալ Քո փառքի և իմ բարիքի համար: Ամեն:

**Մեր կյանքի հավասարակշռումը կենսական կարևորություն ունի: Գեներալ օրվա ընթացքում դադարենք աշխատել և խորհենք հանգստանալու՝ Աստու սլած օրինակի մասին:**

Տիրոջ օրենքը կատարյալ է և նորոգում է հոգին: (Սաղմ. 19.7)

## **ԻՆՉՈՒ՞ ԱՆԵԼ ԱՅՍ ԲԱՆԸ**

**Վ**եցերորդ դասարանցի թոռնիկիս օգնում էի մաթեմատիկայի տնային աշխատանքը կատարել: Նա ասաց, թե ինքը երազում է ճարտարագետ դառնալ, և արդյո՞ք իրեն պետք է գալու *x* և *y* մեծություններն իմանալը:

Չկարողանալով զսպել ժպիտս՝ թոռնիկիս ասացի. «Այո՛, սա հենց այն է, ինչը կիրառելու ես այդ մասնագիտություն մեջ»: Բնական է, որ երեխան չգիտեր իր ապագա մասնագիտության ու մաթեմատիկայի կապի մասին:

Երբեմն մենք էլ այդպես ենք նայում Աստվածաշնչին: Երբ լսում ենք քարոզներ, կամ Սուրբ Բբից ենք կարդում հատվածներ, մտածում ենք, թե արդյո՞ք դա երբևէ օգտագործելու ենք: Սաղմոսերգու Դավիթն այդպիսի դեպքերի համար ուներ որոշակի պատասխաններ: Նա ասում է, թե Աստծո ճշմարտությունները «կատարյալ են, նորոգում են հոգին, իմաստուն են դարձնում պարզամիտին, ուրախացնում են սիրտը» (Սաղմ.19.7-8): Աստվածաշնչի իմաստությունը, որ ամփոփված է առաջին հինգ գրքերում, ինչպես նշված է սաղմոս 19-ում (ինչպես նաև ամբողջ Սուրբ Գրքում), օգնում է մեզ, երբ մենք ամեն օր ապավինում ենք Սուրբ Հոգու առաջնորդությունը (Առ.2.6):

Իսկ առանց սուրբ գրությունների՝ մեզ կպակասի այն կենսական ուղին, որ տվել է Աստված, որպեսզի իր ներկայություն փորձառությունն ունենանք և ավելի լավ ճանաչենք Նրա սերն ու ճանապարհները: Եվ ուրեմն՝ ինչու պետք է իմանանք Աստվածաշունչը, որովհետև «Տիրոջ պատվերները մաքուր են, լուսավորում են աչքերը (Սաղմ. 19.8):

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, խնդրում եմ՝ խոսքդ լույս դարձրու իմ ճանապարհին: Օգնի՛ր, որ օգտագործեմ խոսքիդ իմաստնությունը՝ ուղղեմ քայլերս և ավելի սիրեմ Քեզ: Ամեն:  
**Չայնաբերելով Աստվածաճշունք տղած իմաստությունը՝ կարող ենք ածել մեր իմացության մեջ:**

Այժմ ձեզ համձնում եմ Աստծուն ու նրա շնորհի խոսքին, որ կարող է կառուցել և ձեզ ժառանգություն տալ բոլոր սրբացածների հետ: (Գործք. 20.32)

## **ՃԱՆԱԶԵԼ ԱՍԾՈՒ ԶԱՅՆԸ**

**Տ**արիներ շարունակ հետազոտելուց հետո գիտնականները պարզել են, որ գայլերը միմյանց հետ հաղորդակցվելու հստակ ձայներ ունեն: Գիտնականներից մեկը ձայնի վերլուծության հատուկ ծածկագրերի միջոցով հայտնաբերել է, որ գայլի ոռնոցի տարբեր ծավալներն ու բարձրությունները հնարավորություն են տալիս լիակատար ճշգրտությամբ բացահայտել այդ գազաններին:

Աստվածաշունչը բազմաթիվ օրինակներ է տալիս, երբ Աստված ճանաչում է իր ստեղծած սիրելի մարդկանց ձայները: Նա Մովսեսին կանչում է անուևով և ուղիղ խոսում նրա հետ (Ել. 3.4-6): Սաղմոսերգու Դավիթը հայտարարում է. «Իմ ձայնով աղաղակեցի տիրոջը, և նա պատասխանեց ինձ իր սուրբ լեռից» (Սաղմ. 3.4): Պողոս առաքյալը նույնպես շեշտում է Աստծո ժողովրդի՝ Նրա ձայնը ճանաչելու արժեքը: Եփեսոսի երեցյներին հրավերի տալու ժամանակ նա ասում է, որ Հոգին իրեն «ստիպել է» գնալ Երուսաղեմ, և ինքը հետևելու է Աստծո ձայնին, թեև չգիտի, թե ինչ է պատահելու իրեն (Գործք 20. 22): Առաքյալը զգուշացնում է, որ իր մեկնելուց հետո «հափշտակող գայլեր կգան, որոնք հոտին չեն խնայի, իսկ ձեր միջից դուրս կգան մարդիկ, որոնք թյուր բաներ կխոսեն» (Հմ. 29-30), ուստի նա հորդորում է. «արթո՛ւն կացեք» Աստծո ճշմարտությունը զանազանելու հարցում (Հմ.31):

Հիսուսին հավատացողներն առանձնաշնորհ ունեն իմանալու, որ Աստված լսում ու պատասխանում է իրենց: Մենք ունենք նաև Սուրբ Հոգու զորությունը, որն օգնում է ճանաչելու Աստծո ձայնը, որ միշտ համազոր է Սուրբ Գրքի խոսքերին:

**Աղոթք** - Հայր, երբ ինձ շրջապատող աշխարհի աղմուկը խանգարում ու ստիպում է շեղվել քեզանից, խնդրում եմ օգնի՜ր ինձ ճանաչելու ու հետևելու Քո ձայնին: Ամեն:

**Ասված մեզ հետ խոսում է սարբեր ձևերով: Կարևորը բոլոր սխալ ձայների մեջ Նրա ձայնը սարբերելն ու լսելն է:**

Տիրոջ ողորմությունը չի դադարում, նրա գթությունը վերջ չունի: Նրանք ամեն առավոտ նորանում են. մեծ է քո հավատարմությունը: (Ողբ 3. 22-23)

### **ՇՆՈՐՀՔԻ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄ**

**Վ**երջին տասնամյակներում կինեմատոգրաֆիայի ոլորտում նոր բառ է շրջանառվում՝ վերագործարկում: Կինոյի լեզվով դա ենթադրում է վերցնել որևէ հին պատմություն և այն ներկայացնել նորովի: Երբեմն այդպիսի թեմաներ են դառնում հայտնի հեքիաթները, ազգային էպոսների հերոսները և այլն: Բոլոր դեպքերում այդ պրոցեսը մի նոր բան անելու կամ հնին նոր շունչ տալու հնարավորություն է:

Վերագործարկման նման մի երևույթ էլ ներառում է Ավետարանի պատմությունը: Դրա մեջ Հիսուսը մեզ հրավիրում է Իր ներումի առաջարկին և առատ ու հավիտենական կյանքի (Հովհ. 10.10): Իսկ «Երեմիայի ողբերը» գրքում Երեմիան հիշեցնում է, որ Աստծո սերը մեր հանդեպ ամեն օր ինչ-որ ձևով վերագործարկվում է. «Տիրոջ ողորմությունը չի դադարում, նրա գթությունը վերջ չունի: Նրանք ամեն առավոտ նորանում են. մեծ է քո հավատարմությունը» (3. 22-23):

Աստծո շնորհը հրավիրում է մեզ յուրաքանչյուր օրն ընդունել իբրև Իր հավատարմությունն զգալու նոր առիթ: Անկախ նրանից, թե մենք ինչ դժվարություն ենք հաղթահարում, Աստծո հոգին կարող է ներում, նոր կյանք և հույս ներշնչել յուրաքանչյուր նոր օրվա մեջ: Ամեն օրը վերագործարկման յուրատեսակ հնարավորություն է՝ հետևելու մեծ վարիչի ու տնօրենի օրինակին, որը հյուսում է մեր պատմությունը իր ավելի մեծ պատմության մեջ:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Քո շնորհքն ու ներումը ինձ հրավիրում են ամեն առավոտն սկսել նորովի ու թարմացած: Ամեն:

**Փորձությունների ժամանակ խորհրդածե՛նք Աստծո հավասարմության մասին և հիշե՛նք, որ կարելի է այն նորից վերագործարկել:**

Եվ Յովնաթանն ու Դավիթը ուխտ արին, որովհետև նա իր անձի պես սիրում էր նրան: (Ա. Թագ. 18. 3)

## **ՊԱՏՄՈՂ ՍԵՆՅԱԿԸ**

Հյուսիսային Իսպանիայում հաղորդակցվելու և բարեկամություն արտահայտելու մի յուրատեսակ ձև են գտել: Քարանձավներով հարուստ գյուղական մի շրջանում բերքահավաքից հետո որոշ հողագործներ նստում էին քարանձավների վրա կառուցված սենյակում և ցուցակագրում իրենց ստացած մթերքները: Ժամանակի ընթացքում այդ սենյակը հայտնի դարձավ որպես «պատմող սենյակ»՝ հաղորդակցության մի վայր, որտեղ բարեկամներն ու ընտանիքի անդամները հավաքվում էին խոսելու իրենց երազանքներից, գաղտնիքներից ու այլ թեմաներից: Այսինքն՝ վստահելի ու մտերիմ ընկերակցություն փնտրողները գնում են այդ սենյակ: Եթե Հովնաթանն ու Դավիթն ապրեին Հյուսիսային Իսպանիայում, նրանց միջև եղած մտերմությունն ու բարեկամությունը հաստատ կմղեին ստեղծել այդպիսի մի սենյակ: Երբ Սավուղ թագավորը նախանձից դրդված ուզեց սպանել Դավիթին, նրա ավագ որդի Հովնաթանն ընկերացավ ու պաշտպանեց Դավիթին: «Հովնաթանը սրտով կապվեց Դավիթի սրտին, և Հովնաթանը իր անձի պես սիրեց նրան» (Ա. Թագ. 18.1) ու թեև ինքը գահի ակնհայտ ժառանգորդն էր, ընդունեց Դավիթի աստվածային ընտրությունը որպես թագավոր: «Իր վերարկուն հանեց և այն ու իր հանդերձները, մինչև անգամ իր սուրը, աղեղն ու գոտին տվեց Դավիթին» (Հմ.4): Ավելի ուշ Դավիթը հայտարարեց, որ Հովնաթանն իր համար շատ սիրելի էր, նրա սերն իր համար շատ բարձր էր (Բ. Թագ. 1.26): Որպես Հիսուսին հավատացողներ՝ թող Նա մեզ օգնի կառուցելու մեր հարաբերությունների ու բարեկամության մասին «պատմող սենյակը»՝ որպես արտացոլում մեր քրիստոսանման սիրո ու հոգատարություն:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ հետամուտ լինելու սիրառատ և իսկական բարեկամության: Ամեն:

**Մեր բարեկամների հանդեպ անկեղծ սիրո դարձավորություն ունեն՛ք:** *Ursahայսեմֆ այն գործնական ֆայլերով:*

Արդարի աղոթքը ավելի ուժեղ է ներգործում: (Հակ. 5.16)

## **ԱՍՏՎԱԾ ԼՍՈՒՄ Է**

**Դ**երասան և մարտարվեստի վարպետ Չաքը իր մոր հարյուրամյակի առիթով մեծարման երեկո կազմակերպեց, որի ժամանակ պատմեց, թե որքան մեծ դեր է ունեցել նա իր հոգևոր վերափոխման գործում: «Մայրս հավատքի ու հարատևության օրինակ է եղել ինձ համար», -ասաց նա: Տնտեսական մեծ ճգնաժամի դժվարին տարիներին կինը միայնակ էր մեծացրել իր երեք տղաներին, կորցրել էր երկու ամուսիններին, որդիներից մեկին, թոռներին, տարել էր բազում վիրահատություններ: «Նա իմ կյանքի բոլոր դժվարին պահերին աղոթել է ինձ համար: Եվ երբ Հոլիվուդում հոգիս գրեթե ամբողջովին կորցրել էի, նա աղոթեց իմ հաջողության ու փրկության համար, - շարունակեց Չաքն ու իր խոսքն այսպես եզրափակեց. - Շնորհակալ եմ մորս, որ օգնեց Աստծուն ինձ դարձնել այն, ինչ կամ կամ պիտի լինեմ»: Չաքի մոր աղոթքներն օգնել էին, որ նա փրկություն գտնի: Նա ջերմեռանդ աղոթել էր իր որդու համար, և Աստված լսել էր նրա աղոթքները: Մենք հաճախ մեր աղոթքների պատասխանն այնպես չենք ստանում, ինչպես ուզում ենք: Ուստի աղոթքները չենք կարող օգտագործել կախարդական փայտիկի նման: Բայց Հակոբոսը վստահեցնում է, որ «Արդարի աղոթքը ավելի ուժեղ է ներգործում» (Հմ. 5.16):

Չաքի մոր նման մենք էլ պիտի շարունակենք աղոթել հիվանդների ու դժվարությունների մեջ եղողների համար (Հմ.13-15): Երբ աղոթքի միջոցով հաղորդակցվենք Աստծո հետ, քաջալերանք ու խաղաղություն կգտնենք և Սուրբ Հոգին կգործի մեր մեջ: Բո կյանքում կա՞ արդյոք մեկը, որ կարիք ունի փրկության, ապաքինման կամ օգնության: Հավատքով բարձրացրու՛ աղոթքդ առ Աստված: Նա կլսի քեզ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր ինձ, որ շարունակ աղոթեմ և տեղի չտամ: Շնորհակալ եմ քո սիրո համար, որն օգնում է ինձ համբերել: Ամեն:

**Աստված Իր բարի կամփի համաձայն լսում ու լուսաստիանում է մեր ջերմեռանդ աղոթքներին: Ուստի Երանականք աղոթել:**

Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: (Փիլ. 4.6)

## **ՃՆՇՈՒՄԻՑ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ**

**Տ**եղափոխվելը կյանքի լուրջ դժվարություններից է: Մենք այժմյան մեր տուն տեղափոխվեցինք նախորդ տանը քսան տարի ապրելուց հետո: Իսկ նախքան ամուսնանալս ութ տարի մենակ եմ ապրել: Հետո ամուսինս տեղափոխվեց իմ տուն, երեխա ունեցանք, և ավելի շատ իրեր ունենալու կարիք առաջացավ:

Մեր նոր տուն տեղափոխությունը առանց միջազեպի չանցավ: Իրերը տեղափոխող մարդկանց գալուց հինգ րոպե առաջ ես դեռ չէի ավարտել ձեռագիր գրքիս շարագրանքը: Իսկ նոր տան աստիճանները կրկնակի ժամանակ էին խլելու ինձանից: Բայց ես դրանից առանձնապես չնեղվեցի: Այլ անդրադարձա, որ գրածս գիրքը լի էր սուբգրային ու աստվածաշնչային գաղափարներով: Ես ուսումնասիրում էի Աստվածաշունչը, որպեսզի կարողանամ ժամանակին հասցնել: Իսկ ես հավատում եմ, որ բանալին Աստվածաշնչի և աղոթքի մեջ խորանալն է:

Պողոսը գրում է. «Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն» (Փիլ. 4.6):

Աղոթելով և Աստծով «ուրախանալով» (Հմ.4)<sup>1</sup> մեր միտքը կենտրոնացնում ենք խնդիրներից այնկողմ՝ մեր Մատակարարի վրա: Մենք կարող ենք Աստծուց խնդրել, որ մեզ օգնի հաղթահարել ճնշվածությունը, բայց մենք նաև կապվում ենք Իր հետ, որ կարող է ապահովել խաղաղություն, որ «ամեն մտքից վեր է» (Հմ.7):

**Աղոթք** - Հայր, մտահոգություններս Քեզ եմ հայտնում: Թող Քո խաղաղությունը պահպանի միտքս ու սիրտս: Ամեն:

**Ճնշումների մեջ այսօր Աստծո խաղաղության կարիքն ունենի:**  
**Աղոթքով խնդրենք, և Նա մեզ կսա:**



Փարավոնի աղջիկը...Որա անունը Մովսես դրեց և ասաց.«Ձրից եմ հանել նրան»։ (Ել.2.10)

### **ԱՍՏՎԱԾ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ ՈՒՆԵՐ**

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Լեհաստանում ծնված Հալինան ու Քրիստինան չէին ճանաչում իրար: Նրանց ճշգրիտ տարիքը հայտնի չէր: Մեկին գտել էին եկեղեցու աստիճանների վրա, մյուսը գիտեր միայն, որ իրեն հավատացյալներեն են խնամել: Հետագայում ԴՆԹ քննություն արդյունքները ցույց են տվել, որ աղջիկները հարազատ քույրեր են, և նրանք հանդիպել են: Բացահայտվել է նաև աղջիկների հրեական ծագումը, որից պարզ է դարձել, թե ինչու են նրանք լքված եղել:

Պատկերացնելով վախեցած մորը, որն իր վտանգված երեխաներին թողնում է համեմատաբար ապահով վայրում, հիշում ենք Մովսեսի պատմությունը: Փարավոնի հրամանի համաձայն՝ որպես եբրայեցի մանուկ՝ նա պետք է ջուրը նետվեր (Ելք 1.22): Մայրը, սակայն, որդուն դրեց Նեղոս գետի եզերքին (2.3)՝ հույսով, որ կապրի: Իսկ Աստված Մովսեսի միջոցով իր ժողովրդին փրկելու ծրագիր ուներ:

Մովսեսի պատմությունը նման է Հիսուսի պատմությանը: Ինչպես փարավոնն էր ուզում սպանել եբրայեցի մանուկներին, այնպես էլ Հերովդեսը հրամայել էր սպանել Բեթղեհեմի բոլոր մանուկներին (տե՛ս Մատթ. 2. 13-16):

Հատկապես երեխաների հանդեպ ատելությունն այդ բոլոր դրսևորումների հետևում կանգնած է մեր թշնամին՝ սատանան: Այդպիսի բռնությունները չեն զարմացնում Աստծուն. Նա ծրագիր ուներ Մովսեսի համար, ծրագրեր ունի նաև քեզ և ինձ համար:

**Աղոթք** - Հայր, աշխարհում շատ չարիք կա: Ծնորհակալություն Քո տված փրկության համար: Օգնիր ինձ, որ վստահեմ Քո կատարյալ ծրագրին: Ամեն:

**Ասված ծրագրեր ունի մեզանից յուրաքանչյուրի համար: Հասկաղես փրկության ծրագրերը իրեն հավաստողների համար են:**

Անում եմ ոչ թե բարին, որ ուզում եմ, այլ չարը, որ չեմ ուզում: (Չոռն. 7.19)

## ԱՆԵ՞Լ, ԹԵ՞ ՉԱՆԵԼ

**Ե**րբ ես երեխա էի, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ գործածված մի հրետանի էր ցուցադրված մեր տան մոտակա զբոսայգում: Բազմաթիվ ցուցանակներն զգուշացնում էին դրա վրա բարձրանալու վտանգների մասին, բայց ընկերներիցս մի քանիսն, այնուամենայնիվ, բարձրացան: Ոմանք վարանեցին, բայց ի վերջո նրանք էլ բարձրացան: Տղաներից մեկը կտրականապես հրաժարվեց՝ ցույց տալով զգուշացնող ցուցանակները: Մեկ ուրիշն էլ հենց մեծահասակի տեսավ, ներքև իջավ: Զվարճանալու փորձը գերազանցեց կանոններին հետևելու մեր ցանկությանը:

Բոլորիս մեջ էլ մանկան անհնազանդության ոգի կա. չենք սիրում, որ մեզ ասեն՝ ինչ անել և ինչ չանել: Հակոբոսի նամակում կարդում ենք. «ով բարին իմանա ու չանի, նրա համար մեղք է» (4.17): Հռոմեացիներին ուղղված նամակում Պողոսը գրում է. «Որովհետև անում եմ ոչ թե բարին, որ ուզում եմ, այլ չարը, որ չեմ ուզում: Ուրեմն եթե անում եմ այն, ինչ ես չեմ ուզում, այլևս ե՛ս չեմ անում, այլ իմ մեջ բնակվող մեղքը» (7.19-20):

Որպես Հիսուսին հավատացողներ՝ կարող ենք զարմանալ մեղքի դեմ մեր մղած պայքարի համար: Բայց հաճախ մենք ճիշտն անելու համար բացարձակապես վստահում ենք մեր ուժերին: Մի օր, երբ այս կյանքն ավարտվի, մենք իսկապես մեռած կլինենք մեղավորի մղումներից: Մինչ այդ, սակայն, կարող ենք ապավինել Նրա զորությանը, որի մահն ու հարությունը հաղթանակ տարան մեղքի նկատմամբ:

**Աղոթք** - Սիրո՛ղ Զայր, խնդրում եմ՝ օգնիր ինձ ընտրելու շիտակն ու բարին: Իմ սրտի փափագն է արտացոլել Քո կատարյալ նկարագիրն ու սուրբ ուղիներդ: Ամեն:

**Մի՛ս տայֆարելու եմ մեղի դեմ: Բայց մեր հույսը դնենք Աստծո զորության վրա՝ հաղթահարելու դրանց ամրոցը:**

Հաստատուն միտք ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել: (Ես. 26. 3)

## ՎԱՏԱՀԻՐ ԱՍԾՈՒՆ

**Չ**ինաստանի Ֆուլիան քաղաքի մի քանի հետազոտողներ ուզում էին օգնել հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքի հիվանդներին, որպեսզի նրանք ավելի հանգիստ քնեն: Քնաբեր միջոցների ազդեցությունը գիտափորձի մասնակիցների վրա փորձարկեցին հարմարեցված միջավայրում՝ հիվանդանոցային վառ լույսերով, ձայնագրություններով ու հիվանդապահուհիների խոսակցության ձայներով: Հետազոտությունը ցույց տվեց, որ այնպիսի միջոցներ, ինչպիսիք են քնադիմակները և ականջի խցանները, բարելավում են մարդկանց հանգիստը: Բայց նաև խոստովանեցին, որ իրական միջավայրում գտնվող հիվանդների համար դեռևս դժվար կլինի հանգիստ քուն ունենալը: Ինչպե՞ս կարող ենք հանգիստ գտնել, երբ մեր աշխարհն անհանգիստ է: Աստվածաշունչն ասում է.«խաղաղություն կա նրանց համար, ովքեր ապավինում են Աստծուն՝ անկախ հանգամանքներից: Եսայի մարգարեն գրել է ապագայի մասին, երբ Իսրայելի ժողովուրդը կվերականգնվի դժվարություններից հետո: Նրանք ապահով ապրելու են իրենց քաղաքում, որովհետև գիտեին, որ Աստված այն զորացրել է (Ես. 26.1): Նրանք վստահ էին, որ Նա ձգտում է իրենց շրջապատող աշխարհում բարիք բերել. «խոնարհեցրեց բարձունքների բնակիչներին»՝ բարձրացնելով ճնշվածներին և արդարություն բերելով (Հմ.5-6): Նրանք պիտի իմանային, որ «Տեր Աստված հավիտենական վեմ է, որին կարող էին հավիտյան վստահել» (Հմ.4): Եսային գրել է. «Հաստատուն միտք ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել» (Հմ. 26. 3): Աստված այսօր էլ կարող է մեզ խաղաղություն ու հանգիստ ապահովել: Մենք կարող ենք հանգստանալ Նրա սիրով և զորեղ վստահությամբ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, վստահում եմ Քեզ և այսօր ընտրում եմ Քո սիրով վստահ լինելը: Ամեն:

**Շահ բաներ են մեզ այսօր տղառնում: Սակայն հիճեմք Ասծո սերն ու զորությունը:**



## ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Աղոթք.....	Հուն. 15, 29, փետ. 18, 24, մարտ 27
Ապաշխարություն.....	փետ. 19, մարտ 18
Առանձնություն.....	փետ. 6
Աստծո հետ հաղորդակցություն.....	մարտ 17
Աստծո նկարագրեր.....	Հուն. 3, 4, փետ. 23
Աստծո սերն ու հոգածությունը.....	Հուն. 8, 20, 22, 27, 30, 31 փետ. 3, 10, մարտ 6, 8, 25
Աստծուն վստահել.....	Հուն. 11, 14, 22, 30, փետ. 13, 14 մարտ 3, 4, 8, 15
Արդարություն.....	Հուն. 16, փետ. 15, մարտ 8
Ավետարանչություն.....	Հուն. 13, 23, փետ. 2, 25, մարտ 16, 19
Բարեկամություն.....	փետ. 11
Գոհունակություն.....	մարտ 20
Գութ.....	փետ. 8, 15, 28
Դրախտ.....	Հուն. 5
Երանելիներ.....	փետ. 1, 18, 15, 22
Իմաստություն.....	մարտ 4, 23
Ծառայել.....	փետ. 11, 27, 28
Ծնող լինել.....	Հուն. 25
Կռապաշտություն.....	Հուն. 18
Հալածանք.....	Հուն. 13
Համբերություն.....	Հուն. 17
Հանգիստ.....	փետ. 4, մարտ 1, 8, 15, 22, 31
Հաշտություն.....	Հուն. 26, փետ. 7
Հարաբերություններ.....	Հուն. 11, փետ. 7, 8, մարտ 3
Հեղություն.....	Հուն. 2, 24, փետ. 22
Հիվանդության դիմակայել.....	մարտ 11
Հնազանդություն.....	փետ. 26, մարտ 24, 30
Հոգևոր աճ և հասունություն.....	Հուն. 4, 16, 21, փետ. 20, 21, մարտ 21
Հոգևոր կարգապահություն.....	մարտ 2
Հոգու պտուղները.....	Հուն. 17, մարտ 12
Մահ և մարդկություն.....	Փետ. 5



Մարդեղութիւն.....	Հուն. 6
Մատակարարում եւ տալ.....	Հուն. 28, փետ. 11
Մեղք.....	մարտ 18, 30
Մեղքերի թողութիւն.....	Հուն. 7, 10, 23, 27, փետ. 17, մարտ 7
Մտահոգութիւն.....	մարտ 28
Ներել ուրիշներին.....	Հուն. 26, 27
Որդեգրութիւն.....	մարտ 29
Ուրիշ հավատացյալների հետ ապրել.....	Հուն. 21, մարտ 26
Պաքար եւ դիմակայութիւն.....	մարտ 12
Սեր եւ ամուսնութիւն.....	Հուն. 26
Սեր ուրիշների հանդեպ .....	Հուն. 19, 20, փետ. 14, 27, մարտ 14, 26
Սխալ ուսուցում.....	մարտ 24
Սուրբ Գրքի պատմութիւն.....	մարտ 23
Սուրբ Գրքի սերտողութիւն.....	մարտ 2, 9, 16, 23
Սուրբգրային աստվածաբանութիւն.....	Հուն. 13
Սուրբ Հոգի.....	մարտ 5, 24
Սրբութիւն.....	մարտ 4
Վարդանանց.....	փետ. 16
Վհատութիւն.....	Հուն. 22
Տառապել եւ հուսալ.....	Հուն. 1, 3, 8, 14, 15, 22, 30, փետ. 1, 7, 10, 13, մարտ 3, 28
Քաղաքացիութիւն.....	փետ. 3
Քաջակերութիւն.....	փետ. 5, մարտ 10
Քրիստոս՝ անձ եւ գործ.....	Հուն. 2, 7, 9, 12, 16, 23
Քրիստոս՝ կյանք եւ ուսուցում.....	փետ. 2, 12
Քրիստոս՝ նկարագիր.....	փետ. 2, 9, 23
Քրիստոսի համար ապրել.....	Հուն. 24, փետ. 9, 16, 25
Քրիստոսի հետ միութիւն.....	մարտ 1
Քրիստոսի նման ապրել.....	Հուն. 9, 19
Քրիստոսով նույնութիւն.....	մարտ 5, 13
Փորձութիւն.....	Հուն. 25, մարտ 30
Փրկութիւն.....	Հուն. 2, 7, 9, 12, 16, 23, փետ. 7, 23, մարտ 28



## Նշումների համար



## Նշումների համար



## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 94 52 75

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

---